

Տասը քայլ առաջ. Հայաստանի կրթության բնագավառի կառավարումը և ֆինանսավորումը՝ ուղղված կրթության հավասար հասանելիության ապահովմանը

Կրթության արագ և բարձրորոշում (RED)





Հրաժարագիր

© Եվրոպական կրթական հիմնադրամ, 2026 թ.

Սույն հրատարակությունը պատրաստվել է Եվրոպական կրթական հիմնադրամի (ԵԿՀ) կողմից՝ Եվրոպական միության (ԵՄ) կողմից ֆինանսավորվող «Աջակցություն կրթական բարեփոխումներին և հմտություններին Արևելյան գործընկերության երկրներում» ծրագրի շրջանակում: Սույն զեկույցի բովանդակությունը ԵԿՀ բացառիկ պատասխանատվությունն է և պարտադիր չէ, որ արտացոլի Եվրոպական միության հաստատությունների տեսակետները:

Եթե այլ բան նշված չէ, սույն փաստաթղթի վերաօգտագործումը թույլատրվում է «Creative Commons Attribution 4.0 International (CC BY 4.0)» լիցենզիայի համաձայն (<https://creativecommons.org/licenses/by/4.0/>): Սա նշանակում է, որ վերաօգտագործումը թույլատրվում է համապատասխան հեղինակային իրավունքի պահպանության և ցանկացած փոփոխության մասին նշելու դեպքում: Եվրոպական կրթական հիմնադրամին չպատկանող լուսանկարների կամ այլ նյութերի ցանկացած օգտագործման կամ վերարտադրության համար անհրաժեշտ է թույլտվություն ստանալ անմիջապես հեղինակային իրավունքի իրավատերերից:

Խնդրում ենք սույն հրատարակությանը հղում կատարել հետևյալ կերպ՝ European Training Foundation (2026), Dorleans M. and al, **Ten Moves Ahead: Armenia's Education Governance and Financing for Equitable Access - Rapid Education Diagnosis (RED)** Turin, Italy [Եվրոպական կրթական հիմնադրամ (2026), Դորլեանս Մ. և այլք, «Տասը քայլ առաջ. Հայաստանի կրթության բնագավառի կառավարումը և ֆինանսավորումը՝ ուղղված կրթության հավասար հասանելիության ապահովմանը. **Կրթության արագ ախտորոշում (RED)**» Թուրին, Իտալիա]:

Բովանդակություն

Հրաժարագիր	2
Բովանդակություն	3
Գծապատկերների ցանկ	5
Հապավումներ	7
Սինթեզ՝ քաղաքականություն մշակողների համար	11
Հիմնական բացահայտումները	12
Ներածություն	32
Համատեքստը	35
Հիմնական բացահայտումները	41
Ներածական ակնարկ Հայաստանի կրթական համակարգի մասին	41
1. Անհավասարությունների վերլուծություն	49
2. Ֆինանսական վերլուծություն	65
2.1 Ռեսուրսների համախմբում	65
3. Կառավարման հարցերի վերլուծություն	78
3.1 Ինստիտուցիոնալ կառուցվածք, պատասխանատվություն և հաշվետվողականություն	78
3.2 Ռազմավարական տեսլականը և քաղաքականության մշակման գործընթացը	94
3.3 Բարեփոխումների կարևոր բնագավառների կառավարումը	102
Առաջարկություններ	116
Ոլորտ 1. Բարեփոխումների կառավարման բարելավում (և դրա հաջողության հնարավորությունների մեծացում)	117
1.1 Ստեղծել համակարգման ֆորմալ կառուցակարգեր բոլոր մակարդակներում՝ բարեփոխումների իրականացումը բարելավելու և արդյունքներն առավելագույնի հասցնելու համար	117
1.2 Ապահովել թափանցիկ, հաշվետու և մասնակցային կառավարման կառուցակարգեր՝ բարեփոխումների արդիականությունը, մոնիթորինգը և ընդունումը բարելավելու նպատակով	117
1.3 Կազմակերպել ամենամյա համատեղ ոլորտային գնահատումներ՝ բարեփոխումներն ուղղորդելու և շտկողական միջոցառումները տվյալներով համալրելու համար	118
Ոլորտ 2. Կրթության ոլորտին հատկացված ռեսուրսների արդյունավետության բարձրացում	119
2.1 Պետական բյուջեի միջոցների օգտագործման օպտիմալացում	119
2.2 Ֆինանսավորման աղբյուրների բազմազանեցում	119
2.3 Ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացում	120



2.4 Հավասարության ապահովում	121
Ոլորտ 3. ԿԳՄՍՆ ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդում՝ իր առանցքային գործառնությունները կատարելու համար	122
3.1 Կրթության ոլորտի տեսլականի ձևավորում	122
3.2 Պլանավորում, մոնիթորինգ և գնահատում.....	122
3.3 Կրթական քաղաքականության իրականացումը ազգային և ենթաազգային մակարդակներում.....	123
3.4 Տվյալների հավաքում և վերլուծություն	123
3.5 Հետազոտություն և նորարարություն	125
3.6 Որակի ապահովում և մանկավարժական նորմեր.....	125
Եզրակացություն	126
Օգտագործված գրականության ցանկ	127
Վիճակագրական հավելվածներ	131



Գծապատկերների ցանկ

Գծապատկեր 1. Հայաստանի քարտեզը 35

Գծապատկեր 2. Հայաստանի ուսումնական հաստատությունների կառուցվածքը, եզրաբանությունը և հիմնական թվերը..... 39

Գծապատկեր 3. Հայաստանի կրթական համակարգի վիզուալ պատկեր 40

Գծապատկեր 4. Համախառն ընդգրկվածության ցուցանիշը՝ ըստ կրթական մակարդակի, 2017-2023 թթ..... 42

Գծապատկեր 5. Սովորողների թիվը՝ ըստ դպրոցի տեսակի, քաղաքային և գյուղական բնակավայրեր, 2023-2024 թթ..... 42

Գծապատկեր 6. Հաստատությունների և աշակերտների թիվը, մասնավոր և պետական, ըստ մարզի, 2023-2024 թթ..... 43

Գծապատկեր 7. ՄԿՈԻ հաստատություններ ընդունվածների և շրջանավարտների թիվը, մասնավոր և պետական, 2019-2023 թթ..... 45

Գծապատկեր 8. ԲՈԻՅ-երում ուսանողների թիվը և համախառն ընդգրկվածության ցուցանիշը, մասնավոր և պետական, 2019-2023 թթ..... 49

Գծապատկեր 9. 3-5 տարեկան մանկական բնակչությունը, Նախադպրոցական հաստատություններում տեղերի քանակը, սաների թիվը, Նախադպրոցական հաստատությունների առաջարկի և զբաղվածության հարաբերակցությունը՝ ըստ մարզերի, 2023 թ. 52

Գծապատկեր 10. Նույն դասարանում մնացողների տոկոսը պետական դպրոցներում՝ ըստ դասարանի և մարզի, 2023-2024 թթ..... 55

Գծապատկեր 11. 9-րդ դասարանի շրջանավարտների մասնաբաժինը, որոնք ուսումը շարունակում են ավագ դպրոցում՝ ըստ մարզի և սեռի, 2023 թ. 56

Գծապատկեր 12. Ուսուցիչների թիվը՝ ըստ տարիքային խմբի և սեռի, 2023-2024 թթ..... 58

Գծապատկեր 13. Հանրակրթական դպրոցների ուսուցիչների բաշխվածությունը՝ ըստ կրթական մակարդակի և մանկավարժական որակավորման, ըստ մարզերի, 2023-2024 թթ. . 59

Գծապատկեր 14. Աշակերտ-ուսուցիչ հարաբերակցությունը հանրակրթական դպրոցներում՝ ըստ տարածքի, մարզի և դպրոցի չափի, 2022-2023 թթ..... 60

Գծապատկեր 15. Դպրոցների տոկոսը՝ ըստ շենքային պայմանների, ըստ մարզերի, 2023-2024 թթ..... 61

Գծապատկեր 16. Երկու կամ երեք հերթափոխով ուսուցմամբ հանրակրթական դպրոցների տոկոսը, ըստ մարզի և տարածքի, 2023-2024 թթ. 62

Գծապատկեր 17. 9-րդ դասարանի շրջանավարտների հարաբերակցությունը՝ ըստ սեռի և GPIA-ի, ըստ մարզերի, 2023-2024 թթ..... 64

Գծապատկեր 18. 9-րդ և 12-րդ դասարաններում գերազանց առաջադիմությամբ շրջանավարտների տոկոսը՝ ըստ մարզերի, 2023-2024 թթ..... 65

Գծապատկեր 19. Կրթության հաստատված և կատարված բյուջեի և կրթության պետական ծախսերի տոկոսը՝ ընդհանուր պետական ծախսերի և ՀՆԱ-ի նկատմամբ, 2020-2024 թթ..... 66

Գծապատկեր 20. Հաստատված և վերանայված պետական և կրթության պետական բյուջեները և կատարման ցուցանիշները, 2020-2024 թթ..... 67

Գծապատկեր 21. Կրթության պետական բյուջեի բաշխումը (հաստատված բյուջե)՝ ըստ ծրագրերի, 2020-2024 թթ..... 74

Գծապատկեր 22. Հանրակրթության բյուջեի բաշխվածությունը և սովորողների թիվը՝ ըստ կրթական մակարդակի, 2024 թ..... 75

Գծապատկեր 23. ՀՀ կրթության բնագավառի ինստիտուցիոնալ կառուցվածքի ինֆոգրաֆիկա 94

Գծապատկեր 24. Բնակչությունը՝ ըստ աշակերտների տարիքային խմբերի, 2011-2023 թթ. 131



Գծապատկեր 25. Դպրոցահասակ բնակչության թվի կանխատեսումները՝ ըստ տարիքային խմբերի, 2024-2050 թթ..... 131

Գծապատկեր 26. Դպրոցների կուտակային բաշխումն ըստ չափի, քաղաքային և գյուղական, 2023-2024 թթ..... 132

Գծապատկեր 27. Բնակչության թվի գնահատումները՝ ըստ առանձին տարիքների, 2024 թ. 132

Գծապատկեր 28. Պետական և մասնավոր ՄԿՈՒ հաստատություններ ընդունվողների թիվը ըստ տարիների, մարզերում և Երևանում..... 133

Գծապատկեր 29. Հանրակրթական դպրոցների տոկոսը՝ ըստ ենթակառուցվածքների վիճակի և առկայության, ըստ մարզերի, 2023-2024 թթ. 133

Գծապատկեր 30. ա. և բ. Գերազանց առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների տոկոսը ըստ սեռի և GPIA-ի, 9-րդ և 12-րդ դասարաններ, ըստ մարզերի, 2023-2024 թթ..... 134

Գծապատկեր 31. Բյուջեի տարեկան վերանայումները և բյուջեի կատարումը՝ ըստ ծրագրերի, ՖՏ2023..... 134

Գծապատկեր 32. Կրթական ծրագրերի բյուջեների բաշխումը ըստ տնտեսական դասակարգման, ՖՏ2023 135



Հապավումներ


ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ
ՀՀԴ	ՀՀ դրամ
ՈԱԱԿ	Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն
ՀՀՎԿ	Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե
Մլդ.	Միլիարդ
ԳԹԿ	Գնահատման և թեստավորման կենտրոն
СВІТ	Թափանցիկությանն ուղղված կարողությունների հզորացման նախաձեռնություն
ԿԾԿ	Կրթական ծրագրերի կենտրոն
ՆԱՅ	Նորարարությունների մրցակցային հիմնադրամ
ՇՄԿՈՒ	Շարունակական մասնագիտական կրթություն և ուսուցում
ԵՅ	Եվրոպական հանձնաժողով
ԷԱ	Էներգաարդյունավետություն
ԿՏՄ	Կրթության տեսչական մարմին
ԿԿՏՆ	Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ (EMIS)
ԿՈԾ	Կրթության ոլորտի վերլուծություն
ԵԿՅ	Եվրոպական կրթական հիմնադրամ



ՈԵՇ	Որակավորումների Եվրոպական շրջանակ
ԵՄ	Եվրոպական միություն
ՖԽ	Ֆոկուս խումբ
ՖՏ	Ֆինանսական տարի
ԳԷՖ	Գլոբալ Էկոլոգիական հիմնադրամ
GER	Կրթության մեջ համախառն ընդգրկվածության ցուցանիշ
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
GIZ	Գերմանական միջազգային համագործակցության ընկերության
ԲԿ	Բարձրագույն կրթություն
ԲՈՒՅ	Բարձրագույն ուսումնական հաստատություններ
ՏՀՏ	Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ
ՆՄԿՈՒ	Նախնական և միջին մասնագիտական կրթություն և ուսուցում
KPI	Կատարողականի հիմնական ցուցանիշներ
LAN	Տեղային համակարգչային ցանց
ԿԳՄՍՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ԿԳԼ	Կրթության և գիտության նախարարություն
ՖՆ	Ֆինանսների նախարարություն
Մլն.	Միլիոն



ԱՄՅԼ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԿԶՆԱԿ	Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն
ԿՏԱԿ	Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն
ՄԿՈՒԶԱԽ	Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային խորհուրդ
ՄԿՈՒԶԱԿ	Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն
NER	Կրթության մեջ ընդգրկվածության զուտ ցուցանիշ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ԿԱԻ	Կրթության ազգային ինստիտուտ
ՈԱՇ	Որակավորումների ազգային շրջանակ
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
PISA	Սովորողների միջազգային գնահատման ծրագիր
ՊՄԳ	Պետություն-մասնավոր գործընկերություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
RED	Կրթության արագ ախտորոշում
ՀՄԿ	Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն
ԿԶՆ-ներ	Կայուն զարգացման նպատակներ
SER	Աջակցություն կրթական բարեփոխումներին և հմտություններին
ՈՌՇ	Ոլորտային որակավորումների շրջանակ



ԲՏՃՄ	Բնագիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն և մաթեմատիկա
ԴՇՀ	Դասագրքերի և ՏՀՏ շրջանառու հիմնադրամ
ԹԻՄՍՍ	Մաթեմատիկայի և բնական գիտությունների միջազգային ուսումնասիրության միտումներ (TIMSS)
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԱԶԾ	ՄԱԿ Չարգացման ծրագիր
ՄԿՈՒ	Մասնագիտական կրթություն և ուսուցում
ԱՀՈՒ	Աշխատանքի վրա հիմնված ուսումնառություն



Սինթեզ՝ քաղաքականություն մշակողների համար

Կրթության արագ ախտորոշումը (RED) Հայաստանի կրթության ոլորտի համալիր, ապացուցահեն և տվյալներով հագեցած գնահատում է, որը հիմնականում կենտրոնանում է վերլուծության երեք տիրույթների վրա՝ անհավասարություններ, ֆինանսավորում և կառավարում:

Այս աշխատանքը ձեռնարկվել է «Աջակցություն կրթական բարեփոխումներին և հմտություններին (SER) Արևելյան գործընկերության երկրներում» տարածաշրջանային ծրագրի առաջին բաղադրիչի շրջանակում: Ֆինանսավորվելով Եվրոպական միության (ԵՄ – DG ENEST, նախկինում DG NEAR) կողմից և իրականացվելով Եվրոպական կրթական հիմնադրամի (ԵԿՀ) կողմից՝ 2.5 միլիոն Եվրո արժողությամբ ծրագիրը (2024-2026 թթ.) ներառում է նաև երկու լրացուցիչ բաղադրիչ, որոնք ուղղված են ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդմանը և փոխուսուցման ու վերապատրաստումների խթանմանը:

RED-ի հիմքում ընկած է ԵԿՀ-ի կողմից նախկինում մշակված և այլ երկրներում հաջողությամբ կիրառված մեթոդաբանությունը: Նպաստելով կարևորագույն տարրերի, այդ թվում՝ համակարգի թույլ կողմերի, քաղաքականության բացերի, խոչընդոտների և ռիսկերի հատկորոշմանը՝ այն նպատակ ունի օգնել Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ կամ Հայաստան) կառավարությանը, Եվրոպական միությանը (ԵՄ) և զարգացման գործընկերներին արդյունավետորեն թիրախավորելու իրենց առաջնահերթ միջամտությունները, սահմանելու ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման հետ կապված կարիքները և տեղեկատվական հենք ապահովելու ԵՄ-ի և Հայաստանի միջև քաղաքականությանն առնչվող երկխոսության համար: Հետևաբար, զեկույցում առավել շեշտադրվում են կրթական քաղաքականության ներկայիս բարեփոխումների (Կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիր) հետ կապված խնդիրները, քան առաջընթացն ու ձեռքբերումները, որոնք, այնուամենայնիվ, արժանի են ճանաչման:

Քաղաքականություն մշակողների համար նախատեսված այս սինթեզում ներկայացված են վերը նշված շահագրգիռ կողմերի ուշադրությունը հրավիրող հիմնական նկատառումները, իսկ հիմնավորող քանակական ու որակական փաստական տվյալները՝ տվյալների աղբյուրների հետ միասին, ներկայացված են փաստաթղթի հիմնական հատվածում:



Համատեքստը

Հայաստանի Հանրապետությունը կրթության ոլորտում բախվում է բազմաթիվ մարտահրավերների, որոնք հիմնականում կապված են ավելի լայն սոցիալ-տնտեսական համատեքստի հետ: Երկրի բնակչությունը նվազում է, մասնավորապես՝ արտագաղթի բարձր մակարդակի և ծնելիության համեմատաբար ցածր մակարդակի պատճառով: Ցնցումները, ինչպես օրինակ, 2023 թվականի սեպտեմբերին տեղի ունեցած ռազմական գործողություններից հետո Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանից ավելի քան 100 000 հայ խաղաղ բնակիչների, այդ թվում՝ մոտ 30 000 երեխաների¹ ներհոսքը, հավելյալ մարտահրավերներ են ստեղծում կրթության ոլորտի համար:

Հայաստանը միջինից բարձր եկամուտ ունեցող երկիր է, սակայն այն դեռևս բախվում է զգալի տնտեսական անհավասարության, որտեղ բնակչության 24.8%-ը 2022 թվականին ապրում էր աղքատության ազգային գծից ցածր մակարդակում²: Աշխարհաքաղաքական անկայունությունը շեղում է առաջնահերթ ուշադրությունը կրթությունից, քանի որ պետական բյուջեի գրեթե կեսը հատկացվում է անվտանգությանը, պաշտպանությանը և սոցիալական պաշտպանությանը: Թեև Հայաստանը պոտենցիալ առումով կարող է ապավինել աշխարհում ամենահին և ամենամեծ սփյուռքներից մեկի ֆինանսական աջակցությանը, վերջին տասնամյակում դրամական փոխանցումները կտրուկ նվազել են:

Քաղաքականության մակարդակում 2022 թվականին ընդունված կրթության զարգացման ռազմավարությունն օրենքի ուժ է ստացել, ինչը վկայում է ոլորտի նկատմամբ նշանակալի քաղաքական հետաքրքրվածության մասին:

Հիմնական բացահայտումները

Կրթական համակարգի արդյունավետության ընդհանուր նկարագրություն

Կրթության մեջ ընդգրկվածության միտումները

ՀՀ կրթական համակարգը, որը նախատեսում է 12-ամյա պարտադիր կրթություն, ապահովում է զգալի ընդգրկվածություն՝ սկսած տարրական մակարդակից, ինչը համապատասխանում է հարևան երկրների և միջազգային միջին ցուցանիշներին: Չնայած նախադպրոցական կրթությունը, որը նախատեսված է զրոյից մինչև հինգ տարեկան

¹ ՀՀ միգրացիայի և քաղաքացիության ծառայության տվյալների համաձայն՝ 2023 թվականին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվել է 28 641 երեխա (0-18 տարեկան):

² Համաշխարհային բանկ, Աղքատության և անհավասարության հարթակ՝ <https://data.worldbank.org/indicator/SI.POV.NAHC?locations=AM>



երեխաների համար, պարտադիր չէ Հայաստանում, կրթության մեջ երեքից հինգ տարեկան³ երեխաների ընդգրկվածության ցուցանիշն աճում է, և այս տարիքային խմբի երկու երրորդն այժմ հաճախում է դպրոց: Այդուհանդերձ, գրոյից մինչև երկու տարեկան երեխաների վաղ մանկական խնամքը շարունակում է լինել նվազագույն մակարդակի վրա: Տարրական և թերի միջնակարգ կրթության (lower secondary education) հասանելիությունը շարունակում է մնալ կայուն բարձր՝ չնայած աննշան տատանումներին: Վերջին տարիներին տարրական կրթության մեջ համախառն ընդգրկվածության ցուցանիշը (GER) փոքր-ինչ նվազել է, մինչդեռ թերի միջնակարգ կրթության GER-ի առումով արձանագրվել է չափավոր առաջընթաց: Ավագ դպրոցական ընդհանուր կրթությունը զգալի առաջընթաց է գրանցել հասանելիության հարցում. դրան բաժին է ընկնում թերի միջնակարգ կրթությունն ստացած աշակերտների մոտավորապես երկու երրորդը, մնացած մեկ երրորդը հաճախում է մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) ծրագրերի: Բարձրագույն կրթության առումով նույնպես արձանագրվել է ընդգրկվածության կայուն, բայց դանդաղ աճ: 2010-ականների երկրորդ կեսին արձանագրված կտրուկ անկումից հետո բարձրագույն կրթության մեջ ընդգրկվածության մակարդակում տեղի է ունեցել լճացում. դա նաև ազդարարում է մարդկային կապիտալի կորստի ռիսկի մասին՝ հաշվի առնելով, որ բարձրագույն կրթության առաջին աստիճանում սովորողները կազմում են բարձրագույն կրթության մեջ ընդգրկվածների մեծ մասը (89%):

Որակ և արդիականություն

Կրթական համակարգերի որակը գնահատելու և համեմատելու համար միջազգային գնահատումներին երկրների մասնակցությունը հիմնարար նշանակություն ունի: Չնայած Հայաստանը ԹԻՄՍՍ-ին մասնակցում է 2003 թվականից, այն PISA-ին առաջին անգամ կմիանա 2025 թվականին: Սա փոքր-ինչ դժվարացնում է ուսումնառության միջին որակի ճշգրիտ գնահատումը և համեմատումը⁴: Ինչ վերաբերում է մասնագիտական կրթությանը և ուսուցմանը, ապա դրա տեղն ու դերը՝ որպես կրթության և աշխատաշուկայի միջև ամուր կամուրջ, դեռևս բարելավման կարիք ունեն, մասնավորապես, քանի որ անհրաժեշտ կլինի վերահսկել և ապահովել համապատասխանությունը աշխատաշուկայի կարիքներին, ինչպես նաև ավելի զարգացնել ուսուցման ժամանակակից (դուալ) մեթոդները:

³ Նախադպրոցական կրթության շրջանակում բնակչության թիրախային խումբը կոչվում է 3-5 տարեկան երեխաների տարիքային խումբ, և ընդգրկվածության ցուցանիշների հաշվարկման համար օգտագործվում է հենց այս տարիքային խումբը: Չնայած նախադպրոցական հաստատություններում կան երեխաներ, որոնք արդեն 6 տարեկան են, սա թույլ է տալիս խուսափել 6-9 տարեկան երեխաների կրկնակի հաշվարկից, որոնք պետք է ստանան տարրական կրթություն:

⁴ 2025 թվականի մարտին ԿԳՄՄՆ-ի կողմից ստացված մեկնաբանություններում նշվում էր, որ առաջադիմության վերջին միջազգային թեստերը (ԹԻՄՍՍ 2023) ցույց են տվել միջինից բարձր մակարդակ (գերազանցելով 500 միավորի շեմը) մաթեմատիկայի և բնական գիտությունների ոլորտներում, ընդ որում՝ նվազագույն շեմը չբավարարող սովորողների մասնաբաժինը նվազել է (82%-ն այժմ գերազանցում է նվազագույն շեմը, իսկ 40%-ը՝ հասնում է միջին մակարդակի):



Անհավասարության վերլուծություն

Ըստ օրենքի՝ կրթության հասանելիությունը պետք է ապահովվի բոլոր երեխաների համար՝ սկսած վեց տարեկանից⁵: Սակայն գործնականում անհավասարություններ կան կրթական հնարավորությունների մատչելիության և որակի առումով, որոնք նախևառաջ կախված են բնակության վայրից. սա վերաբերում է ինչպես քաղաքային ու գյուղական բնակավայրերի, այնպես էլ մարզերի միջև եղած տարբերություններին:

Անհավասարություններ հասանելիության և կրթության համակարգում պահելու հարցում
Տարբեր կրթական մակարդակներին հասանելիության մասին տվյալներով բացահայտվում են ակնհայտ անհավասարություններ, մասնավորապես նախադպրոցական կրթության ոլորտում: Չնայած 2019-2023 թվականներին նախադպրոցական հաստատություններում զրոյից հինգ տարեկան երեխաների ներգրավվածության 12% աճին, այս մակարդակին հասանելիությունը Չայաստանում շարունակում է զգալիորեն սահմանափակ լինել պահանջարկը բավարարելու անբավարար կարողությունների պատճառով՝ քաղաքային ու գյուղական բնակավայրերի նշանակալի տարբերություններով: Սոցիալ-տնտեսական կարգավիճակը նույնպես դեր է խաղում, քանի որ անապահով խմբերը նախադպրոցական հաստատությունների հասանելիության հարցում ավելի մեծ դժվարությունների են բախվում ի տարբերություն առավել բարեկեցիկ խմբերի, չնայած պետության կողմից դրական խտրականության միջոցառումներին, որոնք ուղղված են հավասարության ապահովման ուղղությամբ համայնքի գործադրած ջանքերի փոխլրացմանը:

2023 թվականին պետական և մասնավոր հաստատությունների ընդհանուր հզորությունը բավարարել է զրոյից հինգ տարեկան երեխաների պոտենցիալ պահանջարկի միայն մոտ 37%-ը, իսկ երեքից հինգ տարեկան երեխաների պահանջարկի 77%-ը. սա բավարար չէ իրական կարիքները բավարարելու համար՝ բացառությամբ որոշ կոնկրետ մարզերի:

Չնայած տարրական և թերի միջնակարգ կրթության հասանելիությունն էապես համընդհանուր է, և էական անհավասարություններ չեն դրսևորվում, մարզերի միջև անհավասարություններ ի հայտ են գալիս 9-րդ դասարանի ավարտական ցուցանիշներում: 2023-2024 թվականներին այս ցուցանիշներն Արմավիրում կազմել են 75%, իսկ Լոռիում՝ ավելի քան 92%:

⁵ Համաձայն «Կրթության մասին» օրենքի՝ «Ընդհանուր կրթությունը սկսվում է 6 տարեկանից» (հոդված 15, կետ 3): «Տասներկուամյա միջնակարգ կամ մասնագիտական կրթությունը պարտադիր է մինչև սովորողի 19 տարին լրանալը, եթե այդ իրավունքը չի իրացվել ավելի վաղ» (հոդված 18, կետ 7):



Սովորողների ուսումնական առաջադիմության հարցում սեռային անհավասարությունը նույնպես տեսանելի է մարզերի մեծ մասում՝ որոշ մարզերում՝ հոգուտ աղջիկների, իսկ մյուսներում՝ հոգուտ տղաների, չնայած այս տարբերությունները հավասարակշռվում են ազգային մակարդակում: Այդուհանդերձ, 2023-2024 թվականներին 9-րդ դասարանում սովորող աղջիկների ավելի մեծ մասնաբաժինն է գերազանց արդյունքներ գրանցել, քան տղաներինը: Բացի այդ՝ մարզային մակարդակում զգալի սեռային տարբերություններ կան այն երիտասարդների համամասնության մեջ, որոնք 9-րդ դասարանն ավարտելուց հետո շարունակում են ուսումը հանրակրթությունում կամ հաճախում են մասնագիտական կրթության ծրագրերի, ինչը հարցեր է առաջացնում այդ անհավասարությունների պատճառների և երիտասարդների ապագա հնարավորությունների վրա դրանց ազդեցության մասին:

Անհավասարությունն որակի հարցում. ուսուցման և ուսումնառության պայմաններ
 Բոլոր երեխաների համար հավասար ուսումնական հնարավորություններ ապահովելու հարցում Հայաստանի կրթական համակարգը բախվում է մի շարք մարտահրավերների: Այս մարտահրավերները վերաբերում են դպրոցների բնութագրերին, ուսուցչական կազմին և ընդհանուր ուսումնական միջավայրին՝ քաղաքային ու գյուղական բնակավայրերի միջև զգալի տարբերություններով: Օրինակ՝ գյուղական դպրոցների 77%-ն ունի 250-ից պակաս աշակերտ, մինչդեռ քաղաքային դպրոցների 70%-ն ունի 250-ից ավելի աշակերտ: Սա ուղեկցվում է ուսուցչական կազմի առկայության և որակի հարցում զգալի տարբերություններով, օրինակ՝ Երևանում ուսուցիչների 98%-ն ունի մանկավարժական որակավորում, մինչդեռ Տավուշում ընդամենը 80%-ը. աշակերտ-ուսուցիչ հարաբերակցությունը նույնպես զգալիորեն տատանվում է՝ Արագածոտնում կազմելով 7.3, իսկ Երևանում՝ 14.4:

Ավելին, Եական տարբերություններ կան ուսումնական միջավայրի որակի հարցում, գյուղական դպրոցները հաճախ տուժում են անբավարար ենթակառուցվածքներից. որոշ մարզերում հայտնում են, որ հանրակրթական դպրոցների գրեթե կեսն ունի զգալի վերանորոգման կարիք, իսկ բազմաթիվ գյուղական դպրոցներ սահմանափակ հասանելիություն ունեն թվային ռեսուրսներին:

Նախքան վերջերս ձեռնարկված քաղաքական միջոցառումները⁶ ուսուցչական կազմին վերաբերող հիմնական խնդիրներն էին՝

⁶ ԿԳՄՍՆ ճշգրտված տվյալների համաձայն՝ 2023-2024 թվականների ընթացքում համակարգ մուտք է գործել ավելի քան 3000 նոր ուսուցիչ, որոնց մեծ մասը երիտասարդ, ԲՏՃՄ առարկաների ուսուցիչներ են: Ուսուցիչների աշխատավարձի բարձրացման քաղաքականությունը ներդրվել է որակավորումը հաստատող ատեստավորման



- ուսուցիչների պակաս, հատկապես ԲՏՃՄ, արվեստի, օտար լեզուների և ֆիզիկական կրթության առարկաների գծով, մասնավորապես գյուղական բնակավայրերում, ինչն ավելի է սրվում ծերացող աշխատուժի պատճառով.
- այլ մասնագիտությունների համեմատ պակաս գրավիչ աշխատանքային պրոֆիլ, ընդ որում, ուսուցչի միջին աշխատավարձը զգալիորեն ցածր է ազգային միջինից.
- պետական հանրակրթական դպրոցներում աշակերտ-ուսուցիչ հարաբերակցության աճող, սակայն ընդհանուր առմամբ ցածր մակարդակ:

Կարևոր կլինի գնահատել երկարաժամկետ հեռանկարում նոր ներդրված միջոցառումների ազդեցությունը, ինչպիսիք են մենթորական դպրոցի նախագիծը՝ մասնավորապես ուսուցչի մասնագիտության երկարաժամկետ գրավչության առումով:

Ֆինանսական վերլուծություն

Կրթության բյուջե

Չաշվի առնելով երկրի առջև ծառայած սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական և աշխարհաքաղաքական մարտահրավերները, պետական բյուջեի գրեթե կեսը հատկացվում է սոցիալական պաշտպանության ծրագրերին (ներառյալ երեխաներին և խոցելի ընտանիքներին ուղղված ծրագրերին), ինչպես նաև պաշտպանությանն ու ազգային անվտանգությանը: Չնայած վերջին շրջանում կրթությանը հատկացվող բյուջեի զգալի աճին, կրթությանն ուղղվող պետական ծախսերը շարունակում են միջազգային ցուցանիշների համեմատությամբ ցածր լինել: 2020-2023 թվականներին կրթությանը հատկացված պետական բյուջեն կազմել է համախառն ազգային արդյունքի 2%-2.3%-ը⁷ (միջազգային հենանիշը 4-6% է), թեև այն կազմել է պետական բյուջեի միջինը 7.7%-ը⁸ (2024 թվականին աճելով մինչև 8.7%, բայց դեռևս շատ ցածր է 15-20% միջազգային հենանիշից): Ներկայիս համատեքստում կարճաժամկետ հեռանկարում կրթությանն ուղղվող ծախսերի նշանակալի աճի հեռանկարները, մասնավորապես՝ ներքին ռեսուրսներից, սահմանափակ են: Ավելին, բյուջեի պլանավորման և կատարողականի հետ կապված մարտահրավերները պահպանվում են: 2023 թվականին բյուջեի կատարողականի ցուցանիշը կազմել է վերանայված բյուջեի 94%-ը, չնայած տարվա ընթացքում վերանայումների արդյունքում մշտապես կրճատվել են կրթության համար

գործընթացի հիման վրա, որը ուսուցիչների 20%-ը հանձնել է, իսկ մոտ 1300 լրացուցիչ ուսուցիչ պատկանում է այնպիսի կատեգորիաների, որոնցով ապահովվում են լրավճարներ: ԲՏՃՄ առարկաների ուսուցիչները (8 200) ստանում են լրավճար (դրույքաչափի +25%-ի չափով), լրավճար են ստանում նաև գյուղական բնակավայրերի դպրոցներում աշխատող ուսուցիչները (3 200):

⁷ ՅՈՒՆԵՍԿՕ-ի վիճակագրության ինստիտուտի (UIS) տվյալների հրապարակումը 2024 թվականի սեպտեմբերի դրությամբ

⁸ Պետբյուջեի տվյալներ



հաստատված բյուջեները, մինչդեռ պետական բյուջեների ընդհանուր ծավալները վերանայվել են հոգուտ ավելացման:

Պետական ծախսերի ամենամեծ մասը հատկացվել է հանրակրթության ոլորտին, որը վերջին հինգ տարվա ընթացքում կազմել է կրթության բյուջեի միջինում 63%-ը:

Վերջին հինգ տարիների ընթացքում կրթության ոլորտում կապիտալ ծախսերը զգալի աճ են գրանցել, որոնք, մասնավորապես, կապված են ենթակառուցվածքների կառուցման և վերանորոգման հավակնոտ նպատակների հետ: 2021 թվականի 3.62%-ից դրանց բաժինը կրթության ընդհանուր բյուջեում զգալիորեն աճել է՝ 2022-2023 թվականներին կազմելով միջինում 16.4%, իսկ 2024 թվականին հասնելով 40.7%-ի: Միայն «Հանրակրթական դպրոցների և նախադպրոցական հաստատությունների հիմնումը, կառուցումը և հիմնանորոգումը», ինչպես վերնագրված է Կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրում, կազմում է կրթության բյուջեի մեկ երրորդը:

2024-2025 ուսումնական տարին նշանավորում է դպրոցների ֆինանսավորման նոր բանաձևի ներդրման երկրորդ տարին: Այս մոտեցմամբ հանրակրթական հաստատությունների ֆինանսավորումը հիմնվում է «մեկ դասարանի հաշվով» հարաչափի վրա՝ փոխարինելով մեկ աշակերտի հաշվով ֆինանսավորման նախկին մոդելը: Մինչ օրս այս փոփոխության ազդեցությունը գնահատելու համար համապարփակ վերլուծություն չի իրականացվել:

Պետական քաղաքականության ֆինանսական կայունությունը

Կրթության մինչև 2030 թվականի զարգացման ծրագրի գործողությունների ծրագիրը կազմվել է մի մեթոդաբանությամբ, որը հիմնված է միավորի արժեքի հաշվարկի վրա: Սակայն, ծախսերի հաշվարկման գործընթացում հաշվի չեն առնվել կանխատեսվող ֆիսկալ տարածքը կամ բյուջետային միջնաժամկետ սահմանափակումները: Արդյունքում, տրամադրված ծախսերը հիմնականում տեղեկատվական բնույթի են և հիմք չեն ծառայում միջնաժամկետ ծախսերի ծրագրերի կամ տարեկան բյուջեների մշակման համար: Ավելին, չի նշվում այս գնահատված ծախսերի այն մասնաբաժինը, որն ունի երաշխավորված ֆինանսավորվում (ներքին կամ միջազգային դոնորների կողմից):

ԿԳՄՍՆ-ն պատրաստել է 2023 թվականին ծրագրի իրականացման մասին զեկույց, որտեղ մանրամասն նկարագրված է գործողությունների ծրագրով յուրաքանչյուր միջոցառման մասով արձանագրված առաջընթացը: Այնուամենայնիվ, զեկույցում բացակայում են ֆինանսական տվյալներ, ինչը սահմանափակում է ծրագրի իրականացման համար պետական ծախսերի



մանրակրկիտ վերլուծություն կատարելու հնարավորությունը⁹: Այս բացթողումը խոչընդոտում է նաև ապացուցահեն պլանավորումը, ինչն անհրաժեշտ է ծրագրի կայուն ֆինանսավորումն ապահովելու համար:

⁹ ԿԳՄՍՆ-ն պարզաբանել է, որ ծրագրի միջոցառումների մեծ մասը ֆինանսավորվել է պետական բյուջեից, և որ այդ հատկացումները արտացոլված են պետական բյուջեի կատարողականի առանձին հաշվետվություններում՝ բյուջետային միջոցառումների տեսքով: Ներկայումս Հայաստանի կառավարությունը նախաձեռնել է պետական կառավարման բարեփոխումներ, որոնք ներառում են ռազմավարական փաստաթղթերի ներդաշնակեցում և փոխկապակցում: Այս գործընթացը նաև ենթադրում է կրթության ռազմավարության համապատասխանեցում ոլորտի բյուջետային միջոցառումների հետ: ԵԿՀ-ն առաջարկում է գնահատել այս ջանքերի հաջողությունը առաջընթացին հաջորդ մոնիթորինգի ժամանակ:



Կառավարման հարցերի վերլուծություն

Կառավարման կառուցվածքը

Չայաստանն ունի կիսակենտրոնացված կրթական համակարգ, ըստ այդմ էլ՝ քաղաքականության իրականացման բարդ մոդել: ԿԳՄՍՆ և այլ նախարարությունների միջև համագործակցության դրույթներն անուղղակիորեն ձևակերպված են իրավական փաստաթղթերում. դրանցից են Ֆինանսների նախարարությունը, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (ՏԿԵՆ), Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (ԱՄՅՆ), Առողջապահության նախարարությունը, Արդարադատության նախարարությունը և Ներքին գործերի նախարարությունը, որոնցից յուրաքանչյուրն իր նպաստն է ունենում կրթական գործունեության տարբեր կազմակերպչական կողմերում:

Չնայած ԿԳՄՍՆ կանոնադրությունը պարտադրում է նախարարությանը նպաստել կրթության բնագավառի տարածքային հավասարակշռված զարգացմանը (ի թիվս իր պատասխանատվության ներքո գտնվող այլ ոլորտների, մասնավորապես՝ մշակույթի և սպորտի), այս սկզբունքի իրականացման հարցում մի շարք սահմանափակումներ կան: Օրինակ՝ միատեսակ քաղաքականությունը է վարվում բոլոր մարզերում՝ առանց յուրաքանչյուր մարզի կոնկրետ կարիքների, կարողությունների կամ ռեսուրսների վրա հիմնված տարբերակված մոտեցման: Բացի այդ, կանոնադրությամբ չի սահմանվում, թե ինչպես պետք է ԿԳՄՍՆ-ն համագործակցի կրթության մարզային վարչությունների և տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավորապես՝ քաղաքապետարաններում/համայնքապետարաններում նախադպրոցական կրթության համար պատասխանատու մարմինների հետ. այնտեղ նաև չի վերլուծվում կրթության ոլորտում տարածքային քաղաքականության իրականացումը: Նույն կերպ բավարար հստակություն չկա այն մասին, թե ինչպես են մարզպետներն իրականացնում կրթության ոլորտում իրենց մշտադիտարկումային գործառույթները:

Նախարարության կազմում կա մի քանի վարչություն, որոնցից յուրաքանչյուրն ունի իր կոնկրետ լիազորություններն ու խնդիրները, սակայն, ընդհանուր առմամբ, չկա տեղեկատվության փոխանակման, խորհրդակցությունների և փոխադարձ աջակցության կանոնավոր կամ ժամանակին կիրառվող մեխանիզմ: Ակնկալվում է, որ ռազմավարական պլանավորման և մոնիթորինգի վարչությունը վճռորոշ դեր պետք է խաղա երկրում կրթության ընդհանուր արդյունքների համախմբման և կրթության, սպորտի ու մշակույթի ոլորտներում միջնաժամկետ և երկարաժամկետ պետական ծրագրերի նախագծման, պլանավորման և մոնիթորինգի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման գործում: Չնայած այս վարչության



կրիտիկական կարևորությամբ, դրա ներկայիս գործառնական կարողություններն անհամեմատ ցածր են իրեն վերապահված լիազորության մակարդակից:

Նախարարությունից զատ առնվազն ութ առանցքային գերատեսչություն ներգրավված է պետական կրթական ծրագրերի նախագծման, մոնիթորինգի և վերահսկողության գործում. դրանք բոլորն էլ ունեն բազմազան պարտականություններ և պետք է կենսական դերակատարություն ունենան պետական քաղաքականության իրականացման գործում:

Կառավարման խնդիրները

Կրթության ոլորտի կառավարման գնահատումը կենտրոնացած է եղել միջգերատեսչական համակարգման, ԿԳՄՍՆ վարչությունների և նախարարության հետ առնչվող մարմինների ու կազմակերպությունների միջև ներքին համագործակցության, կրթական քաղաքականության նպատակներին համապատասխանության և գործառնական արդյունավետության վրա: Արդյունքում առանձնացվել է չորս հիմնական խնդիր:

- Կառուցվածքային բարդություն և համակարգում. կառույցներից մի քանիսն ունեն լիազորությունների համընկնող շրջանակ, ինչը կարող է հանգեցնել առկա ռեսուրսների օգտագործման անարդյունավետության և ջանքերի հավանական կրկնօրինակման: Ընդհանուր առաջադրանքների և համատեղ միջոցառումների համակարգումը ներկայումս կառավարվում է ոչ ֆորմալ, ժամանակավոր կառուցակարգերի միջոցով՝ առանց հստակ ընդհանուր վերահսկողության: Այս մարտահրավերներն առավել տեսանելի են հանրակրթության ոլորտում:
- Զաղաքականության համաձայնեցում. տարբեր գերատեսչությունների նպատակների և ԿԳՄՍՆ ռազմավարական նպատակների միջև համաձայնեցվածությունը սահմանափակ է, ինչը հանգեցնում է կրթական քաղաքականության իրականացման խնդիրների: Կրթության զարգացման պետական ծրագրի վերանայված գործողությունների ծրագրով հստակ սահմանված չեն այս կազմակերպությունների՝ կոնկրետ արդյունքների ապահովման հետ կապված դերերն ու պարտականությունները:
- Տվյալների, մոնիթորինգի և հաշվետվողականության կառուցակարգերի օգտագործում. չնայած վերջին տարիներին իրավիճակի բարելավման ուղղությամբ գործադրված զգալի և հաջողված ջանքերին, կրթության կառավարման տեղեկատվական համակարգը (ԿԿՏՀ)¹⁰ դեռևս բավարար չափով չի օգտագործվում քաղաքականությանն առնչվող

¹⁰ ԿԳՄՍՆ-ից հայտնում են, որ Համաշխարհային բանկի (ՀԲ) վարկային ծրագրի շրջանակում ներկայումս իրականացվում են բարելավմանն ուղղված աշխատանքներ, այդ թվում՝ տվյալների վերլուծության և վիզուալացման գործիքների մշակման և փորձարկման համար, որոնք պետք է ինտեգրվեն ԿԿՏՀ-ում, տվյալների շտեմարանի կառուցվածքի և դրա օգտագործման դիզայնի վերանայման, տվյալների պահպանման և արխիվացման ենթակառուցվածքների ներդրման, որակի ապահովման և վերահսկման գործիքի ստեղծման, ինչպես նաև



որոշումների և պլանավորման համար տեղեկատվության տրամադրելու առումով: Գործող մոնիթորինգի և հաշվետվողականության շրջանակները կամ թերի են մշակված, կամ հետևողական չեն, ինչն ազդում է գործողությունների թափանցիկության, արդյունավետության և որակի ապահովման, ինչպես նաև այդ գործողություններն իրականացնող շահագրգիռ կողմերի հաշվետվողականության վրա:

- Ռեսուրսների հատկացում. ֆինանսական և մարդկային ռեսուրսները անհավասարաչափ են բաշխված վարչությունների և մարմինների միջև: Արդյունքում որոշ կազմակերպություններ, առանց իրենց ռեսուրսների համապատասխան ավելացման, դժվարությունների են բախվում իրենց առջև դրված էլ ավելի հավակնոտ նպատակներին հասնելու հարցում:

արհեստական բանականության վրա հիմնված կանխատեսման համակարգի ստեղծման ուղղությամբ: Այս ջանքերի շնորհիվ պետք է բարելավվեն համակարգի՝ հաշվետվություններ կազմելու և վերլուծություններ կատարելու կարողությունը:

ՀԲ նախագիծը նախատեսվում է ավարտել մինչև 2025 թվականի դեկտեմբերը, որից հետո ԿԳՄՄՆ-ն նախատեսում է իրականացնել համակարգի համապարփակ թարմացում, կրթության կառավարման համակարգի բոլոր ենթահամակարգերի արդիականացում և բջջային հավելվածների թողարկում:

Առաջարկություններ

Կրթության ոլորտի աշխատանքի բարելավման մասին RED-ի առաջարկությունները դասակարգվել են երեք հիմնական ուղղություններով, որոնք վերաբերում են փոխլրացնող նպատակներին, և յուրաքանչյուրի մասով առաջարկվում է բարելավման ենթակա հնարավոր առաջնահերթությունների ցանկ: Բացի կրթության ոլորտում ընթացիկ բարեփոխումների և քաղաքականության ազդեցությունն առավելագույնին հասցնելու նպատակից՝ այս առաջարկություններն ուղղված են նաև կրթական համակարգի սովորական աշխատանքի բարելավմանը՝

- բարեփոխումների կառավարումը բարելավելու,
- ոլորտին հատկացվող ռեսուրսների արդյունավետությունը բարձրացնելու,
- ԿԳՄՍՆ ինստիտուցիոնալ կարողություններն ամրապնդելու միջոցով՝ իր առանցքային գործառույթները կատարելու համար:

Ոլորտ 1. Բարեփոխումների կառավարման բարելավում (և դրա հաջողության հնարավորությունների մեծացում)

1.1 Ստեղծել համակարգման ֆորմալ կառուցակարգեր բոլոր մակարդակներում՝ բարեփոխումների իրականացումը բարելավելու և արդյունքներն առավելագույնի հասցնելու համար

- Կրթության մինչև 2030 թվականի զարգացման ծրագրում և դրա գործողությունների ծրագրում ավելացնել կառավարման մասին գլուխ՝ ոլորտի կառավարումը պարզեցնելու նպատակով:
- Ամրապնդել միջգերատեսչական համագործակցությունը՝ կարգավորելով ԿԳՄՍՆ և Ֆինանսների նախարարության միջև հարաբերությունները, և անհրաժեշտության դեպքում վերանայել համագործակցության մեթոդները՝ քաղաքականության և ֆինանսավորման միջև ավելի ամուր կապ ապահովելու նպատակով:
- Ներդնել կանոնակարգը և ամրապնդել համագործակցության մեթոդները՝ ԿԳՄՍՆ-ի, ԱՍՀՆ-ի, Առողջապահության նախարարության, ՏԿԵՆ-ի և Ոստիկանության միջև խոցելի երեխաների գործերի կառավարման համար միջգերատեսչական արդյունավետ գործընկերություն ապահովելու համար:
- Ստեղծել շրջանակներ ԿԳՄՍՆ և կրթության մարզային վարչությունների միջև աշխատանքների կանոնավոր համակարգման համար:

1.2 Ապահովել մասնակցային կառավարման կառուցակարգեր՝ բարեփոխումների արդիականությունը, մոնիթորինգը և ընդունումը բարելավելու նպատակով

- Կատարելագործել գործողությունների ծրագիրը՝ դարձնելով իրական, գործառնական ճանապարհային քարտեզ կամ վահանակ (կամ կապել իրական, գործառնական ճանապարհային քարտեզի կամ վահանակի հետ)՝ առաջընթացի արդյունավետ մոնիթորինգի նպատակով:
- Ստեղծել հաշվետվողականության արդյունավետ գործիքներ, որոնք պետք է լրացվեն բարեփոխումն իրականացնող պետական հաստատությունների կողմից:
- Սահմանել շրջանակ, գործիքներ և խորհրդակցական կառուցակարգեր՝ փորձնական միջամտություններից պարբերաբար քաղած դասերի վերլուծության և տեղերում գործընկերներից (ներառյալ ուսուցիչներից և դպրոցների տնօրեններից՝ անսնունդ արձագանքի հնարավորություն ընձեռելով) հետադարձ կապի ապահովման համար, և դրանց համախմբումն ու օգտագործումը վստահել որևէ կազմակերպության (ռազմավարական պլանավորման վարչությանը):
- Կրթական համակարգի հիմնական շահագրգիռ կողմերի ներկայացուցիչների հետ կազմակերպել քաղաքականության երկխոսության ներկայիս մեխանիզմների մասին բաց քննարկում և հավաքել երկկողմ հաղորդակցության ուղիների, հաճախականության և ցանկալի բովանդակության բարելավմանն ուղղված առաջարկություններ, ինչպես նաև միջոցներ ձեռնարկել այդ առաջարկների իրականացման համար:
- Երկարաձգել օրենքով պահանջվող հանրային առցանց խորհրդակցությունների ժամկետները՝ օգտակար ներդրումների համար բավարար ժամանակ ապահովելու համար, ինչպես նաև տեղեկություններ տրամադրել հավաքված արձագանքների և հնարավոր է՝ ձեռնարկված շտկողական միջոցառումների մասին:

1.3 Կազմակերպել ամենամյա համատեղ ոլորտային գնահատումներ՝ բարեփոխումներն ուղղորդելու և շտկողական միջոցառումները տվյալներով համալրելու համար

- Ծանոթանալ միջազգային առաջադեմ փորձին և ներդնել հուսալի մեթոդաբանություն՝ արդյունավետ, ապացույցների վրա հիմնված ոլորտային համատեղ գնահատումների համար:
- Տարեկան առնվազն մեկ անգամ կազմակերպել մեկշաբաթյա ոլորտային համատեղ գնահատում՝ համախմբելով բոլոր մակարդակների շահագրգիռ կողմերին,



քաղաքացիական հասարակությանը և զարգացման գործընկերներին, և համատեղելով տեխնիկական և քաղաքական թեմաներով քննարկումները:

Ոլորտ 2. Կրթության ոլորտին հատկացված ռեսուրսների արդյունավետության բարձրացում

2.1 Պետական բյուջեի միջոցների օգտագործման օպտիմալացում

- Վերլուծել բյուջեի թերծախսման ու տարեկան վերանայումների պատճառները և ստացված արդյունքները ներառել համապատասխան հաշվետվություններում:
- Կատարելագործել Ռազմավարական պլանավորման և մոնիթորինգի վարչության, Ֆինանսաբյուջետային վարչության, ինչպես նաև ԿԳՄՍՆ ոլորտային վարչությունների միջև ֆորմալ համագործակցության շրջանակը՝ կրթական ռազմավարության համակարգված պլանավորում ու ֆինանսավորում ապահովելու համար:
- Վերանայել և հնարավորինս պարզեցնել (առանց վտանգելու թափանցիկությունը) ուսումնական հաստատությունների կողմից կատարվող գնումների ընթացակարգերը:
- Ապահովել բյուջետային տող/միջոցներ, որպեսզի Ռազմավարական պլանավորման և մոնիթորինգի վարչությունը կարողանա կատարել իր գործառույթները:
- Ապահովել ֆինանսավորման համապատասխան մակարդակ՝ բարեփոխումների նոր միջոցառումների շրջանակում լավ կազմակերպված փորձնական ծրագրերի իրականացման և դրանց պատշաճ գնահատման համար՝ քաղաքականության հետ կապված անորոշությունը կամ հակասությունը նվազեցնելու և երկարաժամկետ հեռանկարում դրանց կայունությունը ապահովելու համար՝ ծրագրերի արդյունավետ ընդլայնման նպատակով:
- Բարձրացնել ազգային, մարզային, համայնքային և դպրոցական մակարդակներում համապատասխան շահագրգիռ կողմերի կարողությունները՝ ԿԿՏՀ-ն որպես բյուջեի կազմման և ֆինանսական հաշվետվությունների հիմնական հիմք օգտագործելու համար:
- Անհրաժեշտության դեպքում թարմացնել ԿԿՏՀ դաշտերը՝ ֆինանսական տեղեկատվությունը տեղերից հավաքելու և կենտրոնական մակարդակում համախմբելու համար:

2.2 Ֆինանսավորման աղբյուրների բազմազանեցում

- **Ղարոցներ.** խուսանավելու իրավական հնարավորությունները ստուգելուց և եկամուտների ստեղծմանն ուղղված միջոցառումների մասին միջազգային առաջադեմ փորձի մասին տեղեկություններ հավաքելուց հետո գովազդային արշավների միջոցով



խրախուսել ինչպես մասնագիտական, այնպես էլ հանրակրթական դպրոցներին մշակել նման միջոցառումներ, կամ անհրաժեշտության դեպքում վերանայել օրենսդրությունը՝ դրանք թույլատրելու համար:

- **Սփյուռք.** Կրթության մինչև 2030 թվականի զարգացման ծրագրի շրջանակում սփյուռքի նկատմամբ ռազմավարական մոտեցմանն ավելացնել նոր բաժին՝ ռեսուրսների համախմբման տեսանկյունից. ուսումնասիրել և քննարկել սփյուռքի ներդրումը խթանելու հնարավորությունը (և սովորել սփյուռքի կրթական ֆոնդերից օգտվելու այլոց փորձից՝ որպես սփյուռքի միջոցները կրթական համակարգ ուղղելու հնարավոր երկարաժամկետ նպատակ):
- **Մասնավոր հատված.** վերանայել և հարմարեցնել կարգավորող շրջանակը և խթանման սխեմաները՝ մասնավոր հատվածի առավել ակտիվ ներգրավվածությունը խթանելու համար, հատկապես մասնագիտական կրթության հաստատություններում, այդ թվում՝ պետական-մասնավոր գործընկերության մոդելների միջոցով:
- **Նախադպրոցական հաստատություններ.** նախադպրոցական կրթության ոլորտի կառավարման տարբեր մոդելների ուսումնասիրության և դրանց հետ ծանոթանալու հիման վրա առաջարկել այլընտրանքային մոդելներ (ներառյալ դրանց ֆինանսավորման սխեմաները), որոնք հնարավորություն կտան մեծացնել նախադպրոցական կրթության առաջարկը՝ հատկապես գյուղական վայրերում:

2.3 Ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացում

- **Ապահովել շրջանակը.** թվարկել, թարմացնել և տարածել ռեսուրսների օպտիմալ օգտագործման ընդհանուր սկզբունքները (օրինակ՝ շրջաբերականի միջոցով), ինչպիսիք են՝ ռեսուրսների օգտագործումը, տարածքների բազմակի օգտագործումը տարբեր տեսակի կրթական ծառայությունների մատուցման համար (օրինակ՝ հանրակրթություն, ոչ ֆորմալ կրթություն, մեծահասակների շարունակական ուսուցում և այլն):
- **Պատվիրակել պատասխանատվությունը** և խրախուսել ակտիվների կառավարման ստեղծարար սխեմաների կիրառումը. դպրոցների տնօրեններին հանձնարարել ներկայացնել արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկ՝ հիմնվելով վերոնշյալ շրջանակի և ԿԳՄՍՆ-ի կողմից պատրաստվելիք ուղեցույցների վրա:
- **Ապահովել հաշվետվողականություն.** քարտեզագրել պետական բյուջեի օգտագործման մեջ ներգրավված շահագրգիռ կողմերին և գնահատել ազգային ու ենթաազգային մակարդակներում նրանց հաշվետվողականությունն ապահովելու համար ներկայումս օգտագործվող ուղիները, ստեղծել հաշվետվողականության գործիքներ, որոնց միջոցով պետական միջոցներ ստացող և դրանք կառավարող



դերակատարները պարբերաբար հաշվետվություն կներկայացնեն ռեսուրսների բաշխման մասին իրենց որոշումների հիմքում ընկած չափանիշների և գործելակերպերի մասին՝ դրամական հաշիվների մասին տեղեկությունների ներկայացման հետ մեկտեղ:

- **Կատարել** ծառայությունների մատուցման արտապատվիրակման տարբերակների, մասնավորապես՝ արտապատվիրակման ռազմավարության, շահառուների, աշխատանքային տարածքի և մրցույթի կանոնների **ծախս-օգուտի վերլուծություն** (օրինակ՝ մասնավոր ընկերություններ, ՀԿ-ներ, ուսուցիչների վերապատրաստում, դասագրքերի ստեղծում, տպագրություն կամ առաքում և այլն) և ապահովել առավել արդյունավետ տարբերակների կիրառումը:

2.4 Հավասարության ապահովում

- **Քարտեզագրել և գնահատել բոլոր ներկա կամ վերջերս ձեռնարկված ֆինանսական միջոցները**, մասնավորապես՝ անհավասարությունների հարթեցման մասով (օրինակ՝ պարգևավճարներ և ֆինանսական խթաններ ուսուցիչների և այլ աշխատակիցների համար, կրթաթոշակային ծրագրեր ուսանողների համար, սուբսիդիաներ և այլն):
- **Սահմանել թափանցիկ սկզբունքներ, որոնք թույլ կտան տարբերակված մոտեցում ցուցաբերել մարզերին տրամադրվող ֆինանսական աջակցության նկատմամբ և միջոցներ ձեռնարկել դրական խտրականության միջոցառումների ուղղությամբ՝** կախված նրանց համապատասխան կարիքներից, սեփական ռեսուրսներից, կարողություններից և ներուժից (առաջնահերթություն տալով հեռավոր մարզերին):
- **Ստեղծել հավասարության չափման գործիքներ՝** հենվելով միջազգային առաջադեմ փորձի վրա, և համապատասխան ոլորտային վարչություններին հանձնարարել դրանց կանոնավոր օգտագործում:

Ոլորտ 3. ԿԳՄՍՆ ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդում՝ իր առանցքային գործառնությունները կատարելու համար

3.1 Կրթության ոլորտի տեսլականի ձևավորում

- Վերանայել և ամրապնդել **տարբեր ենթաոլորտային ռազմավարությունների միջև կապը՝** ուղիները, համակարգումը կամ փոխազդեցությունը, ինչպես ձևակերպված է Կրթության մինչև 2030 թվականի զարգացման ծրագրի տարբեր գլուխներում (կամ դրա գործողությունների ծրագրում):
- Մշակել, հստակեցնել և/կամ ավելի կոնկրետացնել աշխատաշուկայի համար **մասնագիտական կրթությունն ու ուսուցումը (ՄԿՈՒ) և բարձրագույն**



կրթությունը (ԲԿ) ավելի համապատասխան դարձնելու համար նախատեսված ռազմավարական քայլերն ու գործողությունները:

- Ավելի հստակ սահմանազատել **նախադպրոցական կրթության ծառայությունների տեսլական(ներ)ը**` գրոյից մինչև երկու տարեկան երեխաների վաղ մանկական զարգացումն ու խնամքը տարբերակելով երեքից մինչև հինգ տարեկան երեխաների նախադպրոցական կրթությունից:

3.2 Պլանավորում, մոնիթորինգ և գնահատում

- Պլանավորման, մոնիթորինգի և գնահատման համար **պատասխանատու** մարմինը տեղափոխել աստիճանակարգային ավելի բարձր մակարդակ` **ղեկավար աստիճանն օրինականացնելու** համար (միգուցե Ռազմավարական պլանավորման վարչություն կամ նախարարի կաբինետին կից համարժեք մարմին):
- Վիզուալացնել, վերանայել և հստակեցնել **տվյալների հետ կապված շրջափուլի կառավարումը**` արտադրությունից մինչև որակի ստուգում, վերլուծություն և օգտագործում, ներառյալ յուրաքանչյուր քայլի համար պատասխանատու տարբեր դերակատարները, ժամանակացույցը, ուղեցույցները, որոնց պետք է հետևել, կարողությունների զարգացման հատուկ կարիքները (տե՛ս նաև «Տվյալների հավաքում և վերլուծություն» բաժինը):
- Բարեփոխումների միջոցառումների նախագծման նկատմամբ կիրառել **տարբերակված մոտեցում` ըստ թիրախային լսարանի** (օրինակ` նոր, երիտասարդ և ավագ սերնդի ուսուցիչներ և հավաստագրման գործընթաց):
- **Ուսումնական հաստատությունների առաջարկի պլանավորում**. ՄԿՈԻ ոլորտում ըստ մասնագիտությունների տեղերի բաշխման նկատմամբ կիրառվող սորմերը համապատասխանեցնել ԱՄՆ-ի կողմից հավաքված տվյալներին և դիտարկել դրանց չհետևելու դեպքում պատժամիջոցներ կիրառելու հնարավորությունը` որակի ապահովման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Կատարել նախադպրոցական հաստատությունների սպասման ցուցակների վերլուծություն և վերանայել առաջնահերթ մուտքի չափանիշները` անհավասարությունների հարթեցման նկատառումով:

3.3 Կրթական քաղաքականության իրականացումը ազգային և ենթաազգային մակարդակներում



- Առաջարկել **ինքնազնահատման գործիք բոլոր գործադիր մարմինների** և վարչությունների համար, որը թույլ կտա գնահատել իրենց լիազորությունների շրջանակը՝ մարդկային ռեսուրսներ համեմատությամբ:
- Կատարել կրթության **մարզային վարչությունների ֆունկցիոնալ գնահատում** և իրատեսորեն վերասահմանել նրանց դերերը՝ հաշվի առնելով նրանց պաշտոնները՝ ընտրված մարմինների և իրենց ռեսուրսների շրջանակում:
- Նպաստել շահագրգիռ կողմերի և շահառուների՝ կրթական համակարգի գործառնական կանոնների մասին **«իրավական գրագիտությանը»**՝ ԿԳՄՍՆ կայքում մշակելով և թարմացնելով իրավական փաստաթղթերի՝ օգտագործողին հարմար պահեստարան՝ ներառելով բանալի բառերով որոնման համակարգ:
- Ուսումնասիրել և քննարկել **ուսուցիչների համալրման գործընթացների** մակարդակը վերանայելու կամ **ուսուցիչների շարժունակության սխեմաներ** ներդնելու հարցում մանևրելու հնարավորությունները՝ նաև աշխարհագրական ավելի մեծ ճկունության հաշվին ուսուցիչների պակասի խնդիրները լուծելու նպատակով:

3.4 Տվյալների հավաքում և վերլուծություն

- Լրացնել այս զեկույցում նշված **տվյալներում առկա բացերի ցանկը**՝ տվյալների հիմնական օգտագործողների հետ համակարգված խորհրդակցությունների միջոցով, այդ բացակայող տվյալները կապելով դրանց ենթադրյալ օգտագործման հետ, և անհրաժեշտության դեպքում համապատասխան փոփոխություններ կատարել ԿԿՏՅ դաշտերում ներառյալ ֆինանսական հոսքերը, դպրոցների, ուսուցիչների և երեխաների վերաբերյալ հատուկ տվյալները (առաջարկությունները ներկայացված են զեկույցի հիմնական մասում):
- Ուսումնասիրել կրթության ոլորտում տվյալների մշակման հետ կապված ամբողջ շրջափուլը՝ հավաքումից մինչև օգտագործում՝ թույլ կողմերը բացահայտելու համար՝ ներառյալ դերակատարներին ուղղվող ավելորդ հարցումները, անարդյունավետությունը, տվյալների մուտքագրման և վերլուծության կարողությունների զարգացման հետ կապված կարիքները, գործընթացներն օպտիմալացնելու և դրանց օգտագործումը քաղաքականության ողջ շրջափուլի ընթացքում հեշտացնելու պահանջները, ինչպես նաև այլ կարևոր ազգային տվյալների շտեմարանների հետ փոխգործունակության նախապայմանները (տե՛ս նաև «Կառավարում» բաժինը):
- Մշակել և ապահովել ռեսուրսներ **կարողությունների զարգացման ծրագրի** համար՝ հիմնված օգտագործողի համար հարմար ուղեցույցների վրա, որոնք ուղղված են

տվյալների տարբեր արտադրողներին՝ տվյալների մուտքագրման որակն ապահովելու նպատակով:

- Մշակել **որակական տվյալների** արտադրության և օգտագործման շրջանակ ու մեթոդաբանություն՝ նոր միջոցառումների կամ ծրագրերի ազդեցությունը գրեթե իրական ժամանակում գնահատելու համար, այսինքն՝ նախքան ազդեցությունը տեսանելի կլինի ԿԿՏՅ քանակական տվյալների միջոցով:
- **Պարտավորեցնել ԿՏԱԿ-ին և ՀՀԿԿ (ARMSTAT)-ին** համագործակցել և՛
 - համակարգված կերպով հաշվարկել և ներկայացնել առանցքային ցուցանիշներն ըստ կրթության մակարդակի (Կրթության միջազգային ստանդարտ դասակարգում՝ ISCED 1, 2, 3), որոնք համադրելի են միջազգային համեմատական հեռանկիշների հետ.
 - բարելավել ԿԿՏՅ և ՀՀԿԿ առցանց հարթակների հասանելիությունը՝ տրամադրելով սպառիչ ծանոթագրություններ և մետատվյալներ.
 - վիճակագրական հաշվետվությունները միայն PDF ձևաչափի փոխարեն հասանելի դարձնել աղյուսակային ձևաչափերով (օրինակ՝ xlsx կամ csv)՝ տվյալների վերլուծությունը հեշտացնելու համար:
- Հետևել դպրոցի տնօրենի պաշտոնի համար դիմումների վերաբերյալ տվյալներին. թվայնացնել հավակնորդի՝ դպրոցի զարգացման ծրագրի ներկայացման և գնահատման գործընթացները՝ գործընթացի հետևողականությունն ու թափանցիկությունն ապահովելու նպատակով:
- Ընտրել **աշխատանքի տեղավորվելու կարողության չափման գործիքների** օգտագործման համար համապատասխան մեթոդաբանություն, այնուհետև համակարգել աշխատանքը ԱՍՀՆ-ի հետ՝ հմտությունների կարիքների մասին պահանջը գործատուների հարցումներում ներառելու համար, և ՄԿՈԲ քոլեջների հետ՝ թեկնածուների հետագծի ուսումնասիրություններ իրականացնելու համար:
- Գնահատել ոլորտային հանձնաժողովների աշխատանքի ընթացիկ արդյունավետությունը և, ԱՍՀՆ-ի հետ համակարգելով, ուսումնասիրել դրանք հմտությունների մասով ավելի ակտիվ ոլորտային խորհուրդների վերածելու հնարավորությունը, որոնք պատասխանատու կլինեն **աշխատաշուկայում պահանջվող հմտությունների կարիքների մասին կանոնավոր տեղեկությունների տիրապետման** համար և կկարողանան ուղղորդել ՄԿՈԲ և բարձրագույն կրթության ոլորտի կողմից ներկայացվող առաջարկը:

3.5 Յետագոտություն և նորարարություն

- Պաշտոնապես նշանակել **հետագոտությունների և նորարարության գործառույթով** օժտված մարմին և հստակեցնել դրա լիազորությունների շրջանակը (օրինակ՝ հատուկ (ad hoc) ուսումնասիրություններ, միջազգային առաջադեմ փորձի համեմատական վերլուծություն, փորձնական նախաձեռնությունների գնահատումներ և այլն):
- Անցկացնել հայաստանյան համակարգի կոնկրետ կողմերի մասին մի շարք **հատուկ (ad hoc) ուսումնասիրություններ**:
- Սահմանել և կիրառել **ուղեցույցներ փորձնական ծրագրերի համար**՝ ներառյալ քաղաժ դասերի վերլուծության փուլը:
- Չարգացնել ԿՏԱԿ-ի **վերլուծական կարողությունները** (անձնակազմի վերապատրաստման ծրագիր):
- Հավաքել Հայաստանում ռազմավարական քննարկման փուլում գտնվող թեմաների մասին **միջազգային առաջադեմ փորձը** և կատարել վերլուծություն հայկական համատեքստում կիրառելիության տարրերի, ներառյալ, օրինակ, նախադպրոցական կրթության ոլորտի կառավարման, դպրոցներում եկամուտների ստեղծմանն ուղղված գործունեության և այլ այլընտրանքային մոդելների մասին:

3.6 Որակի ապահովում և մանկավարժական նորմեր

- Սահմանել որակի ապահովման հետ կապված առանցքային պարտականությունները և բաշխել գործող հիմնական մարմինների միջև (կամ միգուցե ստեղծել նորը)՝ ըստ անհրաժեշտության վերանայելով նրանց լիազորությունների շրջանակը. Կրթության տեսչական մարմին (ԿՏՄ), Կրթության զարգացման և նորարարության ազգային կենտրոն (ԿՉՆԿԿ), մարզային վարչություններ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ (ՈԱԿԿ) և այլն:
- Ամենայն մանրամասնությամբ վերանայել հաշվետվության և հաշվետվողականության շրջանակները, այդ թվում՝ ԿԳՄՆ-ից ստացված միջոցների առնչությամբ:
- Բարելավել մանկավարժական կազմի համալրման գործընթացը՝ միաժամանակ հստակեցնելով մի կարգավիճակից մյուսին անցնելու ուղիները (մասնավորապես, տարբերակված մոտեցում ունենալ ատեստավորման գործընթացում՝ կախված աշխատողի պրոֆիլից և տարիքից):
- Ներդնել հավաքագրման բոլոր գործընթացների (ուսուցիչներ, դպրոցի տնօրեններ և այլն) մոնիթորինգի և հաշվետվողականության մեթոդներ՝ լավ հավասարակշռություն



ապահովելով արդյունավետության և որակի (հատկապես հեռավոր և սահմանամերձ բնակավայրերում), թափանցիկության և հավասարության միջև:

- Մանկավարժական ուղղորդում. ԿԳՄՍՆ-ի ակնկալվող դերը համապատասխան մանկավարժական շրջանակի (ուսումնական ծրագրերի մշակում, ուսուցիչների վերապատրաստում և այլն) ապահովման գործում էական նշանակություն ունի: Սակայն դա RED-ի ուշադրության առանցքը չէր, հետևաբար, այս մասով առաջարկություններ չեն մշակվել:

Առաջարկվող գործողությունների ուղղությունների բազմազանությունից ԵԿԶ-ն առաջարկում է հետևյալ անհապաղ առաջնահերթությունները՝ ԵՄ-ի կամ այլ դոնորների աջակցությունը ստանալու համար՝

- ամրապնդել Ռազմավարական պլանավորման վարչությունը (դիրքը և աստիճանակարգային լիազորությունները, մարդկային ռեսուրսները, վերլուծական և պլանավորման կարողությունները).
- քարտեզագրել և գնահատել ուսուցիչների և սովորողների համար ձեռնարկված տարբեր ֆինանսական խթանների և աջակցության միջոցների ազդեցությունը՝ անհավասարությունների հարթեցման նպատակի ֆոնին.
- ներդնել հաշվետվողականության թափանցիկ կառուցակարգեր և օգտագործողին հարմար հաշվետվողականության գործիքներ բոլոր մակարդակներում:

Եզրակացություն

Թեև այս արագ կրթական ախտորոշումը (RED) կարող է ամբողջովին նոր պատկերացում չտալ Հայաստանի կրթական համակարգի առջև ծառայած մարտահրավերների մասին՝ մարտահրավերներ, որոնց մասնագետները, հավանաբար, արդեն ծանոթ են սեփական փորձով կամ բնագրաբար, այն ապահովում է այս տեղեկատվության համապարփակ, համակարգված, տվյալների վրա հիմնված և, հուսանք, օգտագործողին հարմար պարզաբանում: Այս բացահայտումների լայն տարածումը կարող է օգնել ամենահրատապ խնդիրների և առաջնահերթությունների շուրջ համաձայնության ձևավորմանը: Այնուամենայնիվ, այս ախտորոշման իրական արժեքը քաղաքականության մշակողների ձեռքում է, որոնք իրենց նախընտրած խորհրդատվական և պլանավորման գործընթացների միջոցով կորոշեն, թե ինչպես ներգրավվել RED առաջարկությունների կատարման գործում, հենվել դրանց վրա, կատարելագործել դրանք կամ պլանավորել դրանց հետագա ընթացքը:

Ներածություն

Նախապատմություն և հիմնավորում

Արագ կրթական ախտորոշումը (RED) «Աջակցություն կրթական բարեփոխումներին և հմտություններին» (SER) ծրագրի առաջին բաղադրիչը կամ 1-ին հենասյունն է. Այս տարածաշրջանային նախաձեռնության շրջանակում աջակցություն է ցուցաբերվում Արևելյան գործընկերության հինգ երկրների՝ Ադրբեջանին, Հայաստանին, Մոլդովային, Վրաստանին և Ուկրաինային: Այն ֆինանսավորվում է Եվրոպական հանձնաժողովի կողմից և իրականացվում է Եվրոպական կրթական հիմնադրամի (ԵԿՀ) կողմից՝ մարդկային կապիտալի զարգացման հարցերով ավագ փորձագետ Տիմո Կուուսելայի ղեկավարությամբ: SER-ը եռամյա ծրագիր է (2024-2026 թթ.), որի բյուջեն կազմում է 2.5 միլիոն եվրո:

RED-ի հետ մեկտեղ ծրագիրը ներառում է երկու լրացուցիչ բաղադրիչ՝ 2-րդ հենասյունը, որն ուղղված է երկրի մակարդակով ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդմանը՝ հասցեագրելով RED-ի և այլ գնահատումների միջոցով հատկորոշված կարիքները, և 3-րդ հենասյունը, որը նվիրված է գիտելիքների փոխանակման և փոխուսուցման խթանմանը՝ ինչպես Արևելյան գործընկերության երկրների, այնպես էլ նրանց և ԵՄ անդամ պետությունների միջև:

Նպատակները և թիրախային լսարանը

RED-ի հիմնական նպատակը կրթության ոլորտում առկա կարևորագույն («կարմիր») մարտահրավերների՝ ներառյալ քաղաքականության բացթողումների, խոչընդոտների ու ռիսկերի հայտնաբերումն է, և կառավարության, ԵՄ և զարգացման գործընկերների ուշադրությունը միջամտության ենթակա այս առաջնահերթ ոլորտների վրա հրավիրելը: Այն նաև նախատեսված է ԵՄ և Հայաստանի Հանրապետության (ՀՀ) միջև քաղաքականության երկխոսության համար տեղեկատվական հենք ապահովելու համար: Հետևաբար, այս փաստաթուղթը պակաս շեշտադրում է կատարում կրթական բարեփոխումների առաջընթացի և ձեռքբերումների վրա, չնայած դրանք, անշուշտ, արժանի են ճանաչման:

RED գեկույցի մեթոդաբանությունը և կառուցվածքը

Համատեքստը համառոտ ներկայացնելուց հետո այս փաստաթուղթում ներկայացվում են Հայաստանի կրթական համակարգի վեցամսյա տևողությամբ, պարբերական ախտորոշիչ գնահատման արդյունքները՝ շեշտը դնելով անհավասարությունների, ֆինանսավորման ու կառավարման խնդիրների վրա, ինչպես նաև հնարավոր առաջարկություններ:



Արդյունքները հիմնված են լայնածավալ գրասենյակային ուսումնասիրության, տվյալների վերլուծության, դաշտային, այդ թվում՝ Կոտայքի և Գեղարքունիքի մարզեր¹¹ այցելությունների վրա, որոնք լրացվել են թիրախային հարցազրույցների և ութ ֆոկուս-խմբային քննարկումների միջոցով հավաքված տվյալներով: Ընդհանուր առմամբ, այս վերլուծությունը կազմելու համար խորհրդակցել ենք Հայաստանի կրթական համակարգի շուրջ հարյուր մասնագետի հետ:

Չեկույցի բուն տեքստում ներկայացված են վերլուծության հիմնական տարրերը և, ըստ անհրաժեշտության, այն պատկերազարդված է ինֆոգրաֆիկայով: Լրացուցիչ տեղեկատվություններ բերված են ծանոթագրություններում և տեքստային դաշտերում (մասնավորապես՝ ֆոկուս-խմբային քննարկումների ընթացքում ձեռքբերված որակական տվյալները կամ բարձրացված կարևոր դիտողությունները ներառելու համար): Այստեղ ներկայացված վերլուծության տարրերը չեն հավակնում լինել համապարփակ՝ հատկապես հաշվի առնելով հիմնականում կարևորագույն մարտահրավերների վրա կենտրոնանալու մտադրությունը: 2025 թվականի մարտին ԿԳՄՍՆ-ն մեկնաբանություններ է ներկայացրել զեկույցի սկզբնական նախագծի վերաբերյալ, որոնք հաշվի են առնվել և ներառվել կամ բուն տեքստում, կամ ծանոթագրություններում պահպանելով տվյալների վերլուծության համար համաձայնեցված ժամկետները¹²:

Չեկույցի հեղինակները և երախտիքի խոսքեր

Սույն զեկույցում ի մի են բերված ԵԿՀ մարդկային կապիտալի զարգացման ավագ փորձագետ Մարի Դորլեանի գլխավորած լայն փորձագիտական խմբի լարված աշխատանքի արդյունքները: Չեկույցի կազմման գործում իրենց ներդրումն են ունեցել նաև ԵԿՀ գործընկերներ Միրելա Գավուչին, Ստեֆանո Լազանյին և Տեոլտա Տոթ Մուչիաչիարոն, ինչպես նաև խորհրդատուներ Մարիամ Մարտիրոսյանը, Էլեն Իսպիրյանը, Արամ Ավագյանը, Ալեքսանդր Շագաֆյանը և Լյուկ Գակուկյուրը, որոնց հետ պայմանագիր է կնքվել PPMI կազմակերպության միջոցով: Վերջնական ներքին փորձագիտական գնահատականը տվել են Զրիստիանա Բուրգին, Ալիս Ալդինուչին և Պյոտր Ստրոնկովսկին: Աշխատանքներում իրենց մասնակցությունն են ունեցել նաև ԵԿՀ աշխատակից Վիտա Գլուշկոն և PPMI կազմակերպության աշխատակից Ստեյլա Թանգիյանը:

¹¹ Մարզ՝ Հայաստանի վարչատարածքային միավոր: Երկիրը բաղկացած է 10 մարզից և մայրաքաղաք Երևանից, որն ունի հատուկ կարգավիճակ:
¹² 2024 թվականի հոկտեմբերից հետո հավաքված կամ հրապարակված տվյալները ներկայացվել են ծանոթագրություններում, բայց չեն օգտագործվել անմիջապես վերլուծության համար, քանի որ այդ ժամանակ զեկույցի նախնական տարբերակը հիմնականում պատրաստ էր:



Խուճբը ցանկանում է իր անկեղծ երախտագիտությունը հայտնել Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը՝ հետաքրքրվածության և շարունակական աջակցության համար, մասնավորապես՝ նախարար Ժաննա Անդրեասյանին, փոխնախարարներ Արաքսիա Սվաջյանին և Արթուր Մարտիրոսյանին, ինչպես նաև բոլոր վարչությունների ղեկավարներին: Մենք նաև հատուկ շնորհակալություն ենք հայտնում SER ծրագրի ազգային համակարգողներ Ռոբերտ Ստեփանյանին և Թամարա Ալեքսանյանին, որոնց անսասան օգնությունը անգնահատելի էր RED-ի իրականացման գործում: Մեր երախտագիտությունն ենք հայտնում նաև Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնին՝ Էական նշանակության տվյալներ և պարզաբանումներ տրամադրելու համար:

Եվ վերջում՝ մենք ցանկանում ենք շնորհակալություն հայտնել այն բոլոր հաստատություններին ու մասնագետներին, որոնք մասնակցել են հարցազրույցներին ու ֆոկուս-խմբային քննարկումներին: Նրանց տեսակետները մեծապես հարստացրել են այս ախտորոշիչ գնահատման որակական կողմը: Հուսով ենք, որ զեկույցը կծառայի որպես օգտակար ռեսուրս՝ տրամադրելով ինչպես մտորելու տեղիք տվող մտքեր, այնպես էլ գործնական առաջարկություններ՝ ուղղված Հայաստանի կրթական համակարգի հզորացմանը:

Համատեքստը

Գծապատկեր 1. Հայաստանի քարտեզը



Map No. 3762 Rev. 5 UNITED NATIONS
April 2015

Department of Field Support
Cartographic Section

Աղբյուրը՝ www.un.org/geospatial/content/armenia-0 last accessed on 20.03.2025

Հայաստանը կրթության բնագավառում բախվում է բազմաթիվ մարտահրավերների, որոնք հիմնականում պայմանավորված են ավելի լայն սոցիալ-տնտեսական համատեքստով: Երկրի բնակչությունը 2023 թվականին նվազել է մինչև 2.77 միլիոն՝ 1990 թվականի 3.5 միլիոնի համեմատությամբ (Համաշխարհային բանկ, 2024), մասնավորապես՝ արտագաղթի բարձր մակարդակի¹³ և ծնելիության համեմատաբար ցածր մակարդակի (փոխարինման մակարդակից շատ ցածր)¹⁴ պատճառով: Ըստ գնահատումների՝ նախադպրոցական տարիքի

¹³ Հայաստանի բնակչության մոտ 30%-ն ապրում է երկրից դուրս (ՏՀԶ, 2017):

¹⁴ Չնայած 2000-ականների կեսերից ի վեր արձանագրված աճին, Հայաստանում ծնելիության մակարդակը մնում է համեմատաբար ցածր՝ 2022 թվականին մեկ կնոջ հաշվով կազմելով 1.6 ծնունդ (Համաշխարհային բանկ, 2024):



(3-5 տարեկան) երեխաների թիվը վերջին երեք տարիների ընթացքում նվազել է 11%-ով, և եթե այս միտումը շարունակվի, 2024-2025 թվականների դրությամբ անկումը կազդի հանրակրթության վրա (տե՛ս Հավելվածի 24-րդ գծապատկերը): Իրականում, ըստ ՄԱԿ-ի բնակչության կանխատեսումների, մինչև 2050 թվականը կանխատեսվում է դպրոցական յուրաքանչյուր տարիքային խմբի հետագա անկում՝ 32%-40% միջակայքում (տե՛ս Հավելվածի 25-րդ գծապատկերը):

Հայաստանը միջինից բարձր եկամուտ ունեցող երկիր է, որտեղ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կազմում է 7 018 ԱՄՆ դոլար (Համաշխարհային բանկ, 2024), սակայն դա ուղեկցվում է Եսկան տնտեսական անհավասարություններով: Ընդհանուր բնակչության 26.5%-ը և 0-17 տարեկան երեխաների ու երիտասարդների 30%-ը աղքատ են (ՀՀՎԿ, 2022), ինչը նշանակում է, որ նրանց մեկ շնչի հաշվով սպառումը ցածր է ազգային միջին աղքատության գծից, որը հավասար է մեկ շնչի հաշվով օրական 1 727 ՀՀ դրամի կամ մոտավորապես 4 եվրոյի (Նույն տեղում)¹⁵: Եսկան տնտեսական անհավասարությունները արտացոլված են Ջինիի գործակցում, որը հավասար է 27.9-ի, ինչը երկրորդ ամենաբարձրն է Արևելյան գործընկերության տարածաշրջանում, չնայած ցածր է ԵՄ երկրների միջին ցուցանիշից¹⁶ (Համաշխարհային բանկ, 2021):

Երկիրը կարող է պոտենցիալ առումով ապավինել աշխարհի ամենահին և ամենամեծ սփյուռքներից մեկին. աշխարհում էթնիկ հայ բնակչության մասով հաճախ մեջբերվող գնահատականը 10 միլիոնն է, որոնց մոտ երկու երրորդն ապրում է սփյուռքում¹⁷ (Պևրոյան, 2023): Սակայն վերջին տասնամյակում կարելի է նկատել դրամական փոխանցումների կտրուկ անկում՝ 2013 թվականի 19.7%-ից 2023 թվականին հասնելով ընդամենը 7.6%-ի (Նույն տեղում), ինչը 2023 թվականին դրամական փոխանցումների չափի առումով՝ որպես ՀՆԱ-ի տոկոս, Հայաստանը դասել է աշխարհում 44-րդ տեղում:

Կրթության ոլորտը լրացուցիչ լարվածության է ենթարկվում այնպիսի ցնցումների համատեքստում, ինչպիսին է 2023 թվականի սեպտեմբերի ռազմական գործողություններից

¹⁵ Ծայրահեղ աղքատության միջազգային ստանդարտի առումով՝ մեկ անձի հաշվով կազմում է օրական 2.15 ԱՄՆ դոլար կամ 2 եվրո (Համաշխարհային բանկ, 2022). 2022 թվականի դրությամբ Հայաստանում ընդհանուր բնակչության 0.8%-ը (Համաշխարհային բանկ, 2024) և երեխաների ու երիտասարդների (0-17 տարեկան) մոտ 2%-ը (ՀՀՎԿ, 2023) գոյատևում են այդ ցուցանիշից ցածր մակարդակում:

¹⁶ Բելառուսի (2020), Վրաստանի (2022), Մոլդովայի (2021) և Ուկրաինայի (2020) վերաբերյալ ամենավերջին տվյալները համապատասխանաբար 24.4, 33.5, 25.7 և 25.6 են: Ադրբեջանի վերաբերյալ տվյալները հասանելի չեն: ԵՄ երկրների (2020-2021) ամենավերջին տվյալների պարզ միջինը 30.8 է:

¹⁷ Այնուամենայնիվ, այս ցուցանիշը հաշվի չի առնում մասամբ հայկական ծագում ունեցող անձանց, որոնք, ըստ Սփյուռքի գործերի գերագույն հանձնակատարի գրասենյակի, սփյուռքի ներգրավվածության ծրագրերի ամենաակտիվ մասնակիցներից են թե՛ Հայաստանում, թե՛ իրենց հայրենի համայնքներում (Նույն տեղում):



հետո Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանից ավելի քան 100 000 խաղաղ բնակիչների, այդ թվում՝ 28 641 երեխաների (0-18 տարեկան)¹⁸ ժամանումը:

Այս զարգացումները տեղի են ունենում փխրուն անվտանգային ու քաղաքական համատեքստում/տարածաշրջանային լարվածության պայմաններում, ինչը դժվարացնում է կրթության ոլորտին առաջնահերթություն տալը՝ պետական ռեսուրսների նկատմամբ մրցակցային պահանջարկի պայմաններում, որոնք պարտադիր կերպով հատկացվում են ինչպես անվտանգության ոլորտին, այնպես էլ սոցիալական պաշտպանությանը, որոնք միասին կազմում են պետական բյուջեի գրեթե կեսը:

Կրթությունը Հայաստանի ազգային քաղաքականության առանցքային ուղղություններից է, ինչպես նախանշված է ՀՀ կառավարության ծրագրում (2021-2026 թթ.) և Կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրում, որն Ազգային ժողովի կողմից հաստատված¹⁹ ուժ ռազմավարություններից միակն է, որը ներկայումս գտնվում է իրականացման փուլում: Նպատակն է ստեղծել ներառական, սովորողակենտրոն միջավայր, բարելավել կրթության արդյունավետությունը և միջազգայնացնել կրթական ծառայությունները: Այս կրթական ծրագրի միջոցով ԿԳՄՍՆ ներկայիս ջանքերը հիմնականում կենտրոնանում են հետևյալ բարեփոխումների վրա²⁰

- կրթական ենթակառուցվածքների բարելավում, օրինակ՝ մինչև 2026 թվականը 500 նախադպրոցական հաստատությունների և 300 դպրոցների կառուցում, հիմնանորոգում կամ վերակառուցում՝ առաջնահերթություն տալով դպրոցական ցանցերի օպտիմալացմանը և վերակառուցմանը՝ որակյալ կրթության հավասար հասանելիությունն ապահովելու նպատակով.
- Տավուշի մարզում իրականացված փորձնական ծրագրից հետո նոր պետական կրթական չափորոշիչների (հանրակրթական ուսումնական ծրագրեր, ուսուցիչների պրոֆիլներ և նախադպրոցական հաստատությունների դաստիարակների վերապատրաստում) մշակում.
- ուսուցչական աշխատուժի որակի բարելավում և ուսուցչի մասնագիտության գրավչության բարձրացում, մասնավորապես՝ կառավարության 2022 թվականի ապրիլի

¹⁸ Նրանցից 17 849-ն ընդգրկվել են Հայաստանի կրթական հաստատություններում: Աղբյուրը՝ ՀՀ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն:

¹⁹ «Կրթության մասին» օրենքի համաձայն (Հոդված 4, կետ 4)՝ կրթության զարգացման պետական ծրագրերը համարվում են կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը և հաստատվում են Ազգային ժողովի կողմից, այսինքն՝ որպես օրենք:

²⁰ Տեղեկատվությունը ԵԿՀ ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ տրամադրել է փոխնախարար Արաքսյա Սվաջյանը, 19 մարտի 2024 թ.:



28-ի թիվ 596 որոշմամբ սահմանված ատեստավորման գործընթացի միջոցով, ինչպես նաև ուսուցիչների՝ առանց աշխատանքից կտրվելու վերապատրաստման կառուցվածքային ծրագիր սահմանելու փորձեր.

- դպրոցների կառավարման նոր համակարգ՝ երկու ղեկավարների միջև կառավարման պարտականությունների բաժանմամբ, որոնցից մեկը պատասխանատու է բովանդակային և մանկավարժական, իսկ մյուսը՝ ֆինանսական և վարչական-գործառնական կառավարման համար.
- ՄԿՈՒ մասին նոր օրենք, որտեղ առաջնահերթություն է տրվում ՄԿՈՒ առաջարկին՝ հիմնվելով աշխատաշուկայի կարիքների վրա. լուծման մի մասը կապահովվի մասնավոր հատվածի հետ դուռը ուսուցման համար գործընկերության հաստատման և պահանջվող մասնագիտություններին ուղղված ՄԿՈՒ մասնագիտացումների համար կրթաթոշակների տրամադրման միջոցով (որոնք ունեն 10 անգամ ավելի շատ ռեսուրսներ, քան պակաս պահանջարկ ունեցողները).
- «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» նոր օրենքի նախագծի վերջանակագումը՝ ներառյալ ԵՄ աջակցությամբ «ակադեմիական քաղաքի» ստեղծում (2.5 միլիարդ եվրո, 1 տրիլիոն դրամ).
- կրթության բոլոր մակարդակների (սկսած նախադպրոցականից մինչև բարձրագույն կրթություն) մասին բոլոր տվյալների համախմբում ԿԿՏՀ ազգային տվյալների շտեմարանում:

Արտաքին գործոնները, ինչպիսիք են COVID-19 համավարակը և Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, հետաձգել են նոր ռազմավարությունների և բարեփոխումների իրականացումը: Ավելին, այլ երկրների համեմատ՝ ոլորտը տուժում է կրթության վրա կատարվող պետական ծախսերի ցածր մակարդակից, որոնք 2023 թվականին կազմել են ՀՆԱ-ի ընդամենը 2.5%-ը (Համաշխարհային բանկ, 2024), ինչը զգալիորեն ցածր է միջազգային 4%-6% հեռանկից:

Չնայած այս մարտահրավերներին՝ Հայաստանի կառավարությունը շարունակում է հավատարիմ մնալ իր բարեփոխումների օրակարգին, չնայած բյուջետային հետևանքների պատճառով անհրաժեշտ են ճշգրտումներ, մասնավորապես՝ ռեսուրսների վերաբաշխման հարցում՝ հակամարտությունից հետո հասարակության դիմակայունությանն ուղղված տնտեսական և սոցիալական ծրագրերին առաջնահերթություն տալու համար:

Գծապատկեր 2. Հայաստանի ուսումնական հաստատությունների կառուցվածքը, եզրաբանությունը և հիմնական թվերը

Հայաստանի ուսումնական հաստատությունների կառուցվածքը, եզրաբանությունը և հիմնական թվերը


Հայաստանի կրթական համակարգը հիմնված է **6-18 տարեկան երեխաների և երիտասարդների համար նախատեսված 12-ամյա պարտադիր կրթության** վրա (մինչև 2017 թվականը պարտադիր կրթությունը սահմանափակվում էր 9 տարով): Կրթական ցիկերը ներառում են միջնակարգ ընդհանուր կրթություն (եվրոպական ընդհանուր եզրաբանությամբ համապատասխանում է տարրական, թերի միջնակարգ և ավագ միջնակարգ դպրոցներին), մասնագիտական կրթություն և ուսուցում (ՄԿՈՒ) և բարձրագույն ու հետբուհական կրթություն: Ստորև ներկայացված սխեման իրականացնելու համար միաժամանակ գործում են տարբեր տեսակի ուսումնական հաստատություններ:

- Վաղ մանկական կրթության և զարգացման (ՎՄԶ) ծառայությունները մատուցվում են «**մսուր**» (0-2 տարեկան երեխաների համար), «**մսուր-մանկապարտեզ**» (0-5 տարեկան) և «**մանկապարտեզ**» (3-5 տարեկան) հաստատությունների կողմից: ՎՄԶ-ի վերջին տարին (որը նախատեսված է 5 տարեկան երեխաների համար) (նախկինում կոչվում էր «**նախադպրոցական**») երբեմն ինտեգրվում է հիմնական կամ միջնակարգ դպրոցների հետ: Հայաստանում կա 917 ՎՄԶ հաստատություն (ներառյալ 55 մասնավոր), որտեղ հաճախում է 77 587 երեխա:
- «**Տարրական դպրոցները**» առաջարկում են 1-4-րդ դասարանների կրթություն. 11 տարրական դպրոց՝ 1 370 աշակերտով:
- «**Հիմնական դպրոցները**» առաջարկում են 1-9-րդ դասարանների կրթություն. 466 հիմնական դպրոց՝ 207 149 աշակերտով:
- «**Միջնակարգ դպրոցները**» առաջարկում են 1-12-րդ դասարանների կրթություն. 805 միջնակարգ դպրոց՝ 176 945 աշակերտով:
- «**Ավագ դպրոցները**» առաջարկում են ավագ ավագ միջնակարգ կրթություն 10-12-րդ դասարանների համար. 105 ավագ դպրոց՝ 33 022 աշակերտով:
- «**Ճեմարանը**» առաջարկում է 5-12-րդ դասարանների կրթություն. 9 ճեմարան՝ 5 591 աշակերտով:
- «**Հատուկ դպրոցները**» առաջարկում են կրթական և զարգացման ծրագրեր կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար. 7 հատուկ դպրոց՝ 545 աշակերտով:
- «**Մասնագիտացված դպրոցները**» առաջարկում են հանրակրթական ծրագրեր, որոնք մասնագիտացված են սպորտի, արհեստների, արվեստի, ռազմագիտության կամ այլ գիտությունների ոլորտներում. 11 մասնագիտացված դպրոց՝ 4 044 աշակերտով:
- «**Քոլեջները**» համապատասխանում են ՄԿՈՒ-ին և առաջարկում են կրթություն 9-րդ դասարանից հետո (ընդունվել հնարավոր է նաև 12-րդ դասարանից հետո). դրանք տալիս են որակավորում (դիպլոմ) և ընդհանուր միջնակարգ կրթություն (հասունության վկայական). 120 քոլեջ (ներառյալ նախկին «արհեստագործական դպրոցները», որոնք ՄԿՈՒ մասին նոր օրենքով 2024 թվականին նույնպես վերանվանվեցին քոլեջներ)՝ 41 300 սովորողով:

Տվյալների աղբյուրը՝ «Սոցիալական վիճակը Հայաստանի Հանրապետությունում 2023 թվականին»: ՀՀ վիճակագրական կոմիտե, 2024: <https://armstat.am/am/?nid=82&id=2681>:



Փճապատկեր 3. Հայաստանի կրթական համակարգի վիզուալ պատկեր



Աղբյուրը՝ ԵԿՀ սեփական դիզայն

Հիմնական բացահայտումները

Ներածական ակնարկ Հայաստանի կրթական համակարգի մասին

Հանրակրթության հասանելիությունը


Տարրական և թերի միջնակարգ կրթության հասանելիության մակարդակը մշտապես բարձր է եղել՝ չնայած փոքր տատանումներին. վերջին մի քանի տարիների ընթացքում տարրական դպրոցում համախառն ընդգրկվածության ցուցանիշը (GER) նվազել է (2017 թվականի 102%-ից 2023 թվականին կազմելով 94%), մինչդեռ թերի միջնակարգ դպրոցի ցածր GER-ը փոքր-ինչ աճել է (2017 թվականի 96%-ից 2023 թվականին կազմելով 99%):

Նշանակալի առաջընթաց է գրանցվել ավագ դպրոցի հասանելիության առումով՝ GER-ը 2018 թվականի 72%-ից 2023 թվականին կազմել է 88%:

Չնայած նախադպրոցական կրթությունը պարտադիր չէ, այստեղ նույնպես արձանագրվել է երեքից մինչև հինգ տարեկան տարիքային խմբի ընդգրկվածության մակարդակի աճ, գրոյից մինչև երկու տարեկան երեխաների վաղ մանկական խնամքի ապահովումը պահպանվում է նվազագույն մակարդակում: Երեքից մինչև հինգ տարեկան երեխաների մասնակցությունը կայուն աճ է գրանցել՝ 2017 թվականին երկու երեխայից մի փոքր ավելի քան մեկ երեխա (56%), որը 2023 թվականին հասել է երեք երեխայից ավելի քան երկուսի (69%)՝ 2020 թվականին COVID-19 ճգնաժամի հետ կապված զգալի անկումից հետո: Բարձրագույն կրթության ոլորտում նույնպես արձանագրվել է ընդգրկվածության մակարդակի մի փոքր ավելի դանդաղ, բայց կայուն աճ (Գծապատկեր 4):




Գծապատկեր 4. Համախառն ընդգրկվածության ցուցանիշը՝ ըստ կրթական մակարդակի, 2017-2023 թթ.



Աղբյուրը՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի վիճակագրության ինստիտուտ՝ տարրականից մինչև բարձրագույն կրթության մասով, ՀՀՎԿ՝ Նախադրարոցական կրթության մասով

Տարրական և միջնակարգ կրթության մեծ մասը տրամադրվում է ինտեգրված հիմնական և միջնակարգ դպրոցներում: Գյուղական բնակավայրերում աշակերտների 94%-ը կրթություն է ստանում միջնակարգ դպրոցներում, որոնք առաջարկում են 12-ամյա ընդհանուր կրթություն, մինչդեռ քաղաքային բնակավայրերում, հավանաբար մասամբ դպրոցների մեծ չափերի պատճառով, աշակերտների մեծ մասը հաճախում է հիմնական դպրոց (1-9-րդ դասարաններ), ապա՝ ավագ դպրոց (10-12-րդ դասարաններ) (Գծապատկեր 5):

Գծապատկեր 5. Սովորողների թիվը՝ ըստ դպրոցի տեսակի, քաղաքային և գյուղական բնակավայրեր, 2023-2024 թթ.




Աղբյուրը՝ ԿԿՏԳ և ԵԿԳ հաշվարկներ



Ավելի մեծ դպրոցներն ու մասնավոր առաջարկները կենտրոնացված են Երևանում:

Աշխարհագրական առումով Երևանում կենտրոնացված է երկրի հանրակրթական հաստատությունների 18%-ը, իսկ խոշոր դպրոցներում՝ աշակերտների 34%-ը (յուրաքանչյուր դպրոցում միջինը 574 աշակերտ՝ համեմատած երկրի մնացած հատվածում 245 աշակերտի հետ): Քաղաքային բնակավայրերում դպրոցներն ընդհանուր առմամբ ավելի մեծ են, քան գյուղական բնակավայրերում. **գյուղական դպրոցների 77%-ն ունի 250-ից պակաս աշակերտ, մինչդեռ քաղաքային դպրոցների 70%-ն ունի 250-ից ավելի աշակերտ** (տե՛ս Զավելվածի 26-րդ գծապատկերը): Երևանում կենտրոնացված են նաև **մասնավոր կրթության** գրեթե ողջ **հնարավորությունները, որը կազմում է հաստատությունների 16%-ը և աշակերտների թվի 8%-ը:** Մայրաքաղաքից դուրս միայն Արմավիրում, Լոռիում, Շիրակում և Տավուշում կա մեկ կամ երկու մասնավոր հաստատություն, բայց դրանք սպասարկում են այս մարզերի աշակերտների առավելագույնը 1%-ին (Գծապատկեր 6):

Գծապատկեր 6. Հաստատությունների և աշակերտների թիվը, մասնավոր և պետական, ըստ մարզի, 2023-2024 թթ.



Աղբյուրը՝ ԿԿՏԳ

Ուսուցիչների թվի կրճատման և աշակերտների թվի ավելացման հետ կապված վերջին զարգացումը հանգեցնում է աշակերտ-ուսուցիչ հարաբերակցության արդյունավետության գործակցի աճի: Վերջին տարիներին նկատվել է հանրակրթական պետական դպրոցներում սովորող աշակերտների թվի նկատելի աճ (2013 թվականի 353 580-ից 2023 թվականին կազմելով 413 047): Միևնույն ժամանակ նվազել է ուսուցիչների թիվը



(2013 թվականի 38 529-ից 2023 թվականի կազմելով 36 967²¹), ինչը հանգեցրել է աշակերտ-
 ուսուցիչ հարաբերակցության զգալի աճի, որը վերջին տասնամյակում 9-ից աճել է մինչև 11
 (ԵԿՅ հաշվարկները՝ ՀՀԿԿ տվյալների հիման վրա):

Հանրակրթության միջին որակը

**Միջազգային ուսումնական գնահատումները քիչ են և մաթեմատիկայի ու
 բնագիտության ոլորտներում պատմականորեն արձանագրել են միջին կամ միջինից
 ցածր մակարդակներ:** Վերջին միջազգային ուսումնական գնահատումը, որն անցկացվել է

Հայաստանում, եղել է ԹԻՄՍՍ-ը (մաթեմատիկայի և բնական գիտությունների միջազգային
 ուսումնասիրություն)՝ 2023 թվականին, չնայած Հայաստանը մասնակցել է միայն 4-րդ
 դասարանի գնահատմանը: Արդյունքների համաձայն՝ Հայաստանի 4-րդ դասարանի
 աշակերտները բարելավել են իրենց մաթեմատիկական գիտելիքները՝ 2019 թվականի
 միավորների համեմատ գրանցելով 15 կետային աճ և առաջին անգամ միջինից բարձր
 առաջադիմություն՝ 513 միավոր (միջին միավորը 500 է): Սակայն բնագիտության ոլորտում
 առաջադիմությունը մնացել է միջինից ցածր (457 միավորով), չնայած բնագիտության
 ոլորտում նվազագույն շեմը չբավարարող աշակերտների համամասնությունը նվազել է. 82%-ը
 գերազանցում է նվազագույն շեմը, իսկ 40%-ը՝ հասնում է միջին մակարդակի: Ավելին,
 Հայաստանը առաջին անգամ մասնակցելու է PISA 2025 գնահատմանը: ԹԻՄՍՍ-ի կամ PISA-ի
 պես միջազգային գնահատումների (վերջինս հայտարարվում է) հետագա շրջափուլերին
 մասնակցությունը Հայաստանի սովորողների առաջադիմության օգտակար համեմատական
 գնահատում կատարելու հնարավորություն կտա:

Ընդգրկվածությունը մասնագիտական կրթության և ուսուցման մեջ

**Մասնագիտական կրթության և ուսուցման դերը, որպես կրթության և
 աշխատաշուկայի միջև ամուր կամուրջ, դեռևս ենթակա է բարելավման՝ մի շարք
 պատճառներով:**

**Նախ, ընդգրկվածության դանդաղ, բայց կանոնավոր աճը վկայում է սովորողների
 կայուն հետաքրքրվածության մասին, չնայած դրանք մնում են միջազգային
 ցուցանիշի միջինից ցածր:** 2023/2024 ուսումնական տարում Հայաստանում նախնական


²¹ Այս թվերը ներառում են ինչպես միայն դասավանդման պարտականություններ, այնպես էլ ի հավելումն վարչական
 պարտականություններ ունեցող ուսուցիչներին, որոնցից վերջիններս 2018 թվականից ի վեր ՀՀԿԿ-ի կողմից
 վերանվանվել են դասախոսներ և առանձնացվել «գուտ» ուսուցիչներից: Կարևոր է միավորել այս երկու
 կատեգորիաները՝ ուսուցիչների թվի խոր և կտրուկ նվազման սխալ մեկնաբանությունից խուսափելու համար:



(արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ծրագրերում եղել է մոտ 34 000 սովորող, ինչը կազմում է ավագ դպրոցում ընդգրկված բոլոր աշակերտների 35%-ը:

Հետևյալ գծապատկերներում ներկայացված է սովորողների՝ մասնագիտական կրթության հաստատություններ ընդունվելու և ավարտելու շարժընթացը: Մասնագիտական կրթություն ընտրող սովորողների թիվն աճում է պետական հաստատություններում, մինչդեռ մասնավոր հաստատություններում թիվը մնում է նույնը, հիմնականում՝ Երևանում (տե՛ս լրացուցիչ աղյուսակը հավելվածում)²²: Նախնական մասնագիտական կրթությունն ու ուսուցումը, կարծես, ավելի մատչելի և գրավիչ են երիտասարդ սովորողների համար, քան շարունակական մասնագիտական կրթության և ուսուցման ծրագրերը՝ մեծահասակների համար²³:

Գծապատկեր 7. ՄԿՈՒ հաստատություններ ընդունվածների և շրջանավարտների թիվը, մասնավոր և պետական, 2019-2023 թթ.



Աղբյուրը՝ ՀՀԿԿ

²² Ծանոթագրություն. այս թվերը ներկայացնում են ՄԿՈՒ հաստատությունները (քոլեջներն ու նախկին արհեստագործական ուսումնարանները), մինչդեռ ՄԿՈՒ ծրագրեր կարող են իրականացվել նաև այլ տեսակի կառույցների շրջանակներում՝ կրթական համալիրներ, համալսարաններ, ձեռնարկություններ և այլն: Այս առումով, եթե դիտարկվող միավորը ՄԿՈՒ կրթական ծրագիրն է, ապա երկրում իրականացվող ներկայումս լիցենզավորված ՄԿՈՒ ծրագրերի ընդհանուր թիվը մոտ 180 է՝ համաձայն ԿԳՄՍՆ կայքում (<https://escs.am/am/news/10957>) առկա տվյալների: Անհրաժեշտ են լրացուցիչ ուսումնասիրություններ՝ հասկանալու համար, թե արդյոք ՄԿՈՒ ծրագրերը ողջամտության սահմաններում հավասարապես հասանելի են երկրի բոլոր մարզերի սովորողներին:

²³ Զաղաքականության առանցքային զարգացումները կրթության, ուսուցման և զբաղվածության ոլորտներում. Հայաստան 2023, ԵԿՀ (հղումները հիմնված են 2023 թվականի Թուրինյան գործընթացի համակարգի մասին զեկույցի վրա, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.etf.europa.eu/en/TRP-Armenia-2023>:



ՄԿՈՒ շրջանավարտները կարող են դիմել համալսարաններ՝ համաձայն ընդհանուր կանոնների, սակայն ներկայումս միջին մասնագիտական կրթության շրջանավարտների համար բարձրագույն կրթության երկրորդ կուրս փոխադրվելու հնարավորությունները սահմանափակ են, քանի որ այս անցումը շնորհվում է միայն բարձր առաջադիմություն ունեցող շրջանավարտներին և ԿԳՄՍՆ մակարդակում սահմանված մասնագիտությունների և քվոտաների շրջանակներում: ՄԿՈՒ շրջանավարտների համար բարձրագույն կրթության կարճաժամկետ դասընթացներ չկան²⁴:

Ներկայումս չկա աշխատաշուկայի կարիքներին ՄԿՈՒ համապատասխանությունը, ինչպես նաև շրջանավարտների աշխատանքի տեղավորվելու կարողությունը համակարգված կերպով մշտադիտարկելու ոչ մի եղանակ (ԵԿՀ, 2024): Այս սահմանափակման առաջին պատճառը գործատուների շրջանում կանոնավոր հարցումների բացակայությունն է, ինչը շահագրգիռ կողմերին հնարավորություն կտար որոշել և դիտարկել աշխատաշուկայի կարիքները: ՄԿՈՒ բազմաթիվ ծրագրեր դեռևս բավարար կապեր չունեն աշխատաշուկայի հետ, ինչը բացասաբար է անդրադառնում նրանց շրջանավարտների աշխատանքի տեղավորվելու կարողության վրա: Բայց այստեղ բացերը չափելու հնարավորությունը սահմանափակում է նաև հետագծի ուսումնասիրությունների բացակայությունը:

Այնուամենայնիվ, համընդհանուր կերպով ընդունվում է, որ ենթակառուցվածքների արդիականացման և առաջարկների (ներառյալ նոր մասնագիտությունների կամ ուսուցման ժամանակակից մեթոդների) արդիականացման կարիք կա: Հաշվետվություններն ու հարցազրույցները համընկնում են ՄԿՈՒ ոլորտում ենթակառուցվածքների զարգացման և նոր մասնագիտությունների առաջարկի արդիականացման առումով զգալի աջակցության կարիքների հարցում: Բացի այդ, 2023 թվականին դուրս մոդելով ուսուցանվող մասնագիտությունների մասնաբաժինը կազմել է ընդամենը 5%, իսկ դրանում ներգրավված ուսումնական հաստատություններինը՝ 18.3%:

ՄԿՈՒ առաջարկի առումով Կրթության տեսչական մարմնի (ԿՏՄ) կողմից անցկացված մի քանի ստուգումների արդյունքում բացահայտվել են յուրաքանչյուր մասնագիտության համար սահմանված նորմերին չհամապատասխանելու դեպքեր, մասնավորապես՝ ընդունված դիմորդների թիվը գերազանցել է նախատեսված սահմանաչափերը: Ինչևէ, ավելի լայնածավալ ստուգումների բացակայության, տեղական աշխատաշուկայի կարիքների վերաբերյալ սահմանափակ տվյալների և կենտրոնական

²⁴ Նույն տեղում:



մակարդակում հուսալի, տվյալների վրա հիմնված պլանավորման մոտեցման բացակայության պատճառով գործող նորմերի և իրական գործելակերպերի միջև եղած բացը բացահայտելու շրջանակից դուրս գալը դժվար է: ՄԿՈՒ հաստատությունների տնօրենների որոշումների արդիականությունը պետք է գնահատել աշխատաշուկայի կարիքների լույսի ներքո: Նպատակահարմար համարվելու դեպքում նման գործելակերպը կարող է հիմք ծառայել նորմերի սահմանումը (որը նույնպես անհասկանալի է) և թարմացումը վերանայելու համար:

ՄԿՈՒ որակի ապահովում. Կրթության տեսչական մարմնի ներկա գործելակերպը

Կրթության տեսչական մարմնի 2023 թվականի զեկույցների համաձայն²⁵, որը ստուգել է 10 ՄԿՈՒ հաստատություն (ընդհանուր 152 հաստատությունից), օրենսդրության ամենահաճախ արձանագրված խախտումը վերաբերում է դիմորդների ընդունելության գործընթացին և պահանջներին, քանի որ հաճախ գերազանցել են ըստ մասնագիտությունների նորմայով սահմանված առավելագույն շեմը:

ՄԿՈՒ հաստատությունների՝ օրենսդրության պահանջներին համապատասխանության կապակցությամբ պետական ստուգումից բացի՝ 2021 թվականից ի վեր ԿՏՄ-ն նաև գնահատել է ՄԿՈՒ ծառայությունների մատուցման որակը՝ թեև շատ սահմանափակ թվով ՄԿՈՒ հաստատությունների շրջանում: 2022 թվականի զեկույցում ԿՏՄ-ն պնդում է, որ ծառայությունների մատուցման որակի հետ կապված խնդիրներ կան սկսած ուսանողական փորձնակության կազմակերպման (մասնագիտական փորձի ձեռքբերում) գործընթացներից ու գործելակերպից մինչև անհրաժեշտ ռեսուրսների ու ակտիվների առկայություն և հասանելիություն, և այլն²⁶:

²⁵ ԿՏՄ 2023 թվականի տարեկան հաշվետվությունը և ԿՏՄ 2023 թվականի 4-րդ եռամսյակի հաշվետվությունը, <https://eib.am/hy/report>: Ստուգված 152 ուսումնական հաստատություններից միայն 10-ն է եղել ՄԿՈՒ հաստատություն (2 արհեստագործական ուսումնարան և 8 քոլեջ): Ստուգված 10 ՄԿՈՒ հաստատություններից 9-ում գրանցվել են խախտումներ և/կամ անհամապատասխանություն 33 կրթական օրենսդրության պահանջներին: Սակայն այս բարձր ցուցանիշն անտրամաբանական չէ, քանի որ այն, հավանաբար, բխում է այն փաստից, որ ԿՏՄ-ի կողմից ստուգման ենթակա հաստատությունների ընտրությունը շատ դեպքերում բխում է արտահայտված բողոքներից (հանդիպում ԿՏՄ-ի հետ, 2024 թվականի մարտ): Օրենքի պահանջներին համապատասխանության հետ կապված խնդիրները, ի թիվս այլ բաների, կապված են դիմորդների ընդունելության համար լիցենզիայի պահանջների խախտման հետ (ընդունվել է ավելի շատ դիմորդ, քան թույլատրվում է լիցենզիայի նորմերով), քննական հանձնաժողովների ձևավորման գործընթացի պահանջների և հաստատության տնօրենի պատասխանատվության ու պարտականությունների կատարման հետ:

²⁶ ԿՏՄ 2022 թվականի հաշվետվությունը ՄԿՈՒ հաստատություններում կրթական գործընթացի որակի գնահատման մասին, <https://eib.am/hy/report>:



Աշխատանքի վրա հիմնված ուսումնառություն

Կրթության զարգացման պետական ծրագրի 2023 թվականի առաջընթացի մասին ԿԳՄՍՆ հաշվետվության համաձայն²⁷ գյուղատնտեսական չորս մասնագիտությունների համար մշակվել և փորձարկվել է աշխատանքի վրա հիմնված (դուալ) ուսուցման համակարգ²⁸: Նպատակն է՝ այս մոդելը ներդնել գյուղատնտեսության, ՏՏ, զինեզործության, զբոսաշրջության, ճարտարագիտության և լոգիստիկայի ոլորտների մասնագիտություններում: **2023 թվականին դուալ մոդելով դասավանդվող մասնագիտությունների մասնաբաժինը կազմել է 5%, իսկ դրանում ներգրավված ուսումնական հաստատություններինը՝ 18.3%:**

Նախապատրաստական քայլերի և գնահատումների հիման վրա մեկնարկել են 12 երկարաժամկետ ՄԿՈՒ դուալ ուսուցման դասընթացներ 10 ՄԿՈՒ հաստատություններում՝ վերը նշված ոլորտների ընտրված մասնագիտացումների համար: Երկարաժամկետ ծրագրերից բացի, GIZ-ն աջակցել է **ՄԿՈՒ չորս քոլեջներում նոր մասնագիտությունների համար նախատեսված երեք դուալ կարճաժամկետ դասընթացների (չորսից հինգ ամիս տևողությամբ)** փորձնական ներդրմանը՝ մասնավոր հատվածի ընկերությունների կարիքները բավարարելու համար: Կարճաժամկետ ծրագրերի դերը շատ կարևոր է շարունակական և ցկյանս ուսումնառության առումով, քանի որ դրանք թույլ են տալիս շատ արագ արձագանքել մասնավոր ընկերություններում որոշակի թափուր աշխատատեղերի առաջացմանն ու պահանջարկին²⁹: Նախնական (արհեստագործական) մասնագիտական կրթության համար սահմանվել է 21 առաջնահերթ որակավորում, իսկ միջին մասնագիտական կրթության համար՝ 14 առաջնահերթ որակավորում:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության համար սահմանվել է 21 առաջնահերթ մասնագիտություն, իսկ միջին մասնագիտական կրթության համար՝ 14³⁰:

Ընդգրկվածությունը բարձրագույն կրթության հաստատություններում

Կտրուկ անկումից հետո բարձրագույն կրթության հաստատություններում

ընդգրկվածությունը լճացել է, ինչը վկայում է մարդկային կապիտալի կորստի բարձր ռիսկի մասին: ԲՈՒՀ ընդունվողների թիվը կտրուկ անկում է ապրել (-25%) 2010-ականների երկրորդ կեսին, և 2020 թվականին փոքր-ինչ վերականգնվելուց հետո մնացել է կայուն: **21-24 տարեկան երիտասարդների կեսից մի փոքր ավելին (55%) ընդգրկված է բարձրագույն կրթության առաջին աստիճանում՝** կազմելով բարձրագույն կրթության մեջ բոլոր ընդգրկվածների գերակշռող մեծամասնությունը (89%), ինչը բարձր է 2014 թվականի 84%-ից:

²⁷ <https://escs.am/files/files/2024-04-01/65be0c23cac0b14400d7cf979164cf9c.pdf>

²⁸ Հայաստանում դուալ ՄԿՈՒ համակարգի ներդրումը ոգեշնչված է գերմանական մոդելով՝ միաժամանակ հաշվի առնելով ՄԿՈՒ ոլորտի տեղական զարգացումներն ու մասնավոր հատվածի կառուցվածքը: Այս մեթոդաբանությունը ենթադրում է պետական և մասնավոր հատվածների միջև համագործակցության շրջանակի ստեղծում, հմտությունների վերլուծություն ընտրված ոլորտներում և վերապատրաստման կարիքների բացահայտում: Ավելին, մեթոդաբանությունը երաշխավորում է, որ վերապատրաստված անձնակազմի որակը և հմտությունները կճանաչվեն մասնավոր հատվածի կողմից: GIZ-ը աջակցում է ՄԿՈՒ քոլեջներում որակավորումների ինստիտուցիոնալ ձևավորմանը և մասնավոր ընկերություններում աշխատանքի վրա հիմնված ուսուցման (WBL) կազմակերպմանը, ինչպես նաև ՄԿՈՒ հաստատությունների ուսուցիչների և ձեռնարկություններում հրահանգիչների հմտությունների զարգացմանը: ԿԳՆ-ն նաև վկայակոչում է ՄԿՈՒ համակարգի այլ նախագծերի նկատմամբ դուալ մոտեցում կիրառելու վերաբերյալ GIZ-ի մեթոդաբանությունը, որոնք հիմնականում ֆինանսավորվում են ԵՄ-ի կողմից:


²⁹ https://www.giz.de/en/downloads/GIZ_PSD%20TVET_Dual%20TVET%20Results.pdf

³⁰ <https://escs.am/files/files/2023-08-25/7c9317ec367363d5640fc94a7f1e0e13.pdf>



Այս տեղաշարժն արտացոլում է ուսումնառության առաջին աստիճանում ուսանողների թվի ընդհանուր աճը, որը հիմնականում պայմանավորված է ոչ պետական հաստատություններում ընդգրկվածությամբ՝ ուսումնառության երկրորդ աստիճանում և հետբուհական կրթության մեջ ընդգրկվածության մակարդակի անկմամբ: Այս միտումները տեղի են ունեցել բարձրագույն կրթության տարիքի բնակչության կրճատման ֆոնին, որը 2014 թվականից ի վեր նվազել է 23%-ով՝ առաջին աստիճանի, և 40%-ով՝ երկրորդ աստիճանի առումով: Այս օրինաչափությունը մտահոգություններ է առաջացնում կրթված երիտասարդների հնարավոր արտագաղթի կապակցությամբ (այդ թվում՝ նրանց, ովքեր այլապես կարող էին շարունակել իրենց ուսումը)՝ այդպիսով խաթարելով Հայաստանի մարդկային կապիտալի զարգացումը: Ինչևէ, անկման պատճառներն արժանի են լրացուցիչ վերլուծության՝ արտագաղթի դերը դրանում հաստատելու համար:

Գծապատկեր 8. ԲՈՒՅ-երում ուսանողների թիվը և համախառն ընդգրկվածության ցուցանիշը, մասնավոր և պետական, 2019-2023 թթ.



Աղբյուրը՝ ՀՀՎԿ

1. Անհավասարությունների վերլուծություն

1.1 Անհավասարություններ կրթության հասանելիության և կրթության մեջ պահելու առումով

Չնայած ընդհանուր առմամբ ընդգրկվածության բարձր մակարդակին (բացառությամբ նախադպրոցական հաստատությունների), Հայաստանի կրթական համակարգում անհավասարությունները պահպանվում են, մասնավորապես՝

Նախադպրոցական և 9-րդ դասարանից հետո կրթական հնարավորությունների առումով:

Նախադպրոցական կրթության հասանելիությունը. Չնայած վերջին շրջանում նախադպրոցական հաստատություններում ինչպես ընդգրկվածության, այնպես էլ մասնակցության զգալի աճին (զուտ ընդգրկվածության մակարդակը 2020 թվականի 42%-ից 2023 թվականին աճել է մինչև 64%), հետագա առաջընթացը խոչընդոտում են պոտենցիալ պահանջարկը բավարարելու բավարար կարողությունների բացակայությունը, գյուղական/քաղաքային բնակավայրերի միջև առկա զգալի անհավասարությունը և տվյալների կառավարման ու թափանցիկության ապահովման հետ կապված մարտահրավերները: Նախադպրոցական կրթության հասանելիության առումով այս անհավասարությունը ռիսկի գործոն է հնարավորությունների հավասարության ապահովման համար, ինչը հաստատվում է հետազոտական գրականությամբ³¹:

- **Նախադպրոցական կրթության հասանելիությունը, որը պարտադիր չէ, անհամաչափ է դառնում առաջարկի բացակայության պատճառով. անհամապատասխանություն կա նախադպրոցական կրթության առաջին երկու և վերջին տարվա միջև, քանի որ ջանքերն առաջին հերթին ուղղվում են վերջին տարվա վրա: Վերջին տասնամյակում, չնայած ընդգրկվածության և հաստատությունների թվի աճին³², նախադպրոցական հաստատությունները դեռևս չեն կարողանում ընդունել բոլոր պոտենցիալ սաներին:** Նախադպրոցական հաստատությունների թվի աճը, զուգորդված համապատասխան տարիքի բնակչության թվի նվազման հետ, նպաստել է սաների թվի աճին: Սակայն, թեև նախադպրոցական կրթության մեջ ներգրավվածների թիվն աճել է վերջին տասնամյակում³³, մասնակցությունը դեռևս հեռու է համընդհանուր լինելուց: 2023 թվականին տեղերի քանակը (նախագծային հզորությունը) անբավարար էր երկրում ընդունվելու համար գրանցված երեխաների թիվը սպասարկելու համար: **Պետական և մասնավոր հաստատությունների ընդհանուր հզորությունը սահմանափակվում էր մի փոքր ավելի քան 84 000 տեղով, ինչը համարժեք է 0-5 տարեկան երեխաների**

³¹ Վաղ մանկական կրթության ու ինամբի հասանելիությունը և ընդգրկվածությունը (սովորաբար 0-5 կամ 6 տարեկան երեխաների համար) կարևոր է ոչ միայն տարրական կրթության և դրանից հետո սովորողների արդյունքների վրա դրական ազդեցության համար (del Boca, Monfardini, & See, 2023), այլև այն պատճառով, որ այն ծննդյան հետ կապված անհավասարությունը հարթելու միջոց է (Fessler & Schneebaum, 2019): Դիտրիխսոնը, Քրիստիանսենը և Վայնհոլտը (Dietrichson, Kristiansen, & Viinholt (2020)) կատարել են նախադպրոցական կրթության երկարաժամկետ արդյունքների վրա ազդեցության համակարգային ուսումնասիրություն և պարզել, որ այն ավելի օգտակար է ցածր սոցիալ-տնտեսական կարգավիճակ ունեցող երեխաների համար՝ անկախ սեռից:

³² 2023 թվականին եղել է 917 նախադպրոցական հաստատություն (ներառյալ 55 մասնավոր հաստատություն), ինչը նկատելի աճ է 2010 թվականի 606-ի համեմատ (+ 42.4%), չնայած ընդհանուր հզորությունը այդ ժամանակահատվածում աճել է ընդամենը 16%-ով:

³³ Նախադպրոցական հաստատություններում ընդգրկվածությունը 2010-2019 թվականների ընթացքում աճել է 23 773 երեխայով:



հավանական պահանջարկի մոտ 37%-ին (մոտավորապես 227 000 երեխա) կամ **3-5 տարեկան մանկական բնակչության 77%-ին**, ինչը նշանակում է, որ հզորությունը պետք է զգալիորեն մեծացվեր միայն այս տարիքային խմբին տեղավորելու համար: Մասնավոր հաստատությունները, որոնք կարող են նպաստել կրթական առաջարկի ընդլայնմանը, ներկայումս գործում են միայն Երևանում:

- **Այդուհանդերձ, առկա հաստատությունների զբաղվածությունը համեմատաբար ցածր է (ընդհանուր առմամբ՝ 89% Հայաստանում):** Թեև նախադպրոցական հաստատություններն ամբողջ հզորությամբ են գործում (99%) Երևանում և Արագածոտնում (և 95% հզորությամբ՝ Կոտայքում), մյուս մարզերում զբաղվածության հարաբերակցությունը 86%-ից ցածր է (իսկ Վայոց Ձորում՝ ընդամենը 74%): Չբաղվածության ցածր մակարդակը ենթադրում է, որ նախադպրոցական կրթության հասանելիության համար հնարավոր է լրացուցիչ խոչընդոտներ լինեն, օրինակ՝ ոչ ճկուն աշխատանքային ժամերը, այդ հաստատությունների նկատմամբ վստահության ցածր աստիճանը կամ անուղղակի ծախսերը: Բացի այդ, գյուղական բնակավայրերում գործազրկության ավելի բարձր մակարդակի պատճառով որոշ ընտանիքներ նախընտրում են ինսամոդի դեր կատարել և հրաժարվում են նախադպրոցական հաստատությունների կրթական դերից: Սյունիքում, Վայոց Ձորում և Տավուշում նախադպրոցական հաստատությունների հզորության առումով առաջարկն ավելի մեծ է, քան երեքից հինգ տարեկան երեխաների թիվը: Չնայած այս լրացուցիչ տարածքները կարող են օգտագործվել նաև փոքր երեխաների համար, **այս անհավասարություններն ընդգծում են առաջնահերթ մարզերում (Երևան, Արագածոտն և Կոտայք) նախադպրոցական հաստատությունների առաջարկի նպատակային ընդլայնման անհրաժեշտությունը:**



Փծապատկեր 9. 3-5 տարեկան մանկական բնակչությունը, նախադպրոցական հաստատություններում ստեղծված տեղերի քանակը, սաների թիվը, նախադպրոցական հաստատությունների առաջարկի³⁴ և գրադավածության հարաբերակցությունը՝ ըստ մարզերի, 2023 թ.



Աղբյուրը՝ ՀՀԿԿ

- Նախադպրոցական կրթության հասանելիության հետ կապված խնդրի պատճառներից մեկն էլ քաղաքային և գյուղական բնակավայրերի միջև զգալի անհամապատասխանությունն է:** Բազմաթիվ գյուղական բնակավայրերում նախադպրոցական հաստատություններ ընդհանրապես չկան, ինչը կտրուկ հակադրություն է ստեղծում քաղաքային բնակավայրերի հետ, որտեղ հանրային առաջարկը լրացվում է մասնավոր նախադպրոցական հաստատություններով, որոնց մեծ մասը կենտրոնացած է Երևանում: **2023 թվականին համախառն ընդգրկվածության ցուցանիշը եղել է 36.2%՝ կազմելով 45.9% քաղաքային և 23.5% գյուղական բնակավայրերում:** 972 պետական նախադպրոցական հաստատություններից (55 մասնավոր) 482-ը գտնվում էին քաղաքային, իսկ 490-ը՝ գյուղական համայնքներում, **ընդհանուր առմամբ 201³⁵ համայնք մնացել է առանց որևէ նախադպրոցական ծառայության³⁶:** Մարզերում 2023 թվականին նախադպրոցական հաստատություններում երեխաների ընդգրկվածության ցուցանիշը

³⁴ Նախադպրոցական կրթության առաջարկի հարաբերակցությունը սահմանվել է որպես 0-5 տարեկան երեխաների համար նախատեսված նախազբային հզորության (կամ ստեղծված տեղերի քանակի) և նույն տարիքի բնակչության հարաբերակցությունը:
³⁵ 2023 թվականի համար այս համայնքների բաշխումն ըստ մարզերի հասանելի չէ: Բոլոր մարզերի նախադպրոցական հաստատություններ չունեցող համայնքների վերջին ցանկը տրամադրվել է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի 2020 թվականի զեկույցում:
³⁶ 2021 թվականին դրանց թիվը եղել է 229:



տատանվել է մոտավորապես 51%-ից և 46%-ից՝ Սյունիքում ու Երևանում, մինչև 25%՝ Գեղարքունիքում, և 29%՝ Արագածոտնում ու Լոռիում: Ավելին, 2019 թվականին կատարված կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության արդյունքում (ԿՄԱՀ) պարզվել է, որ նախադպրոցական կրթության մեջ երեխաների ընդգրկվածության մակարդակն աղքատ տնային տնտեսություններում ավելի ցածր է, քան ոչ աղքատ տնային տնտեսություններում:

- **Վաղ մանկական կրթության հասանելիության հետ կապված մեկ այլ անհավասարություն կապված է անապահով խմբերի կողմից նախադպրոցական ծառայություններից օգտվելու դժվարությունների հետ՝** ի տարբերություն բարեկեցիկ խմբերի: Չնայած նախադպրոցական հաստատությունները հաճախ սուբսիդավորվում են համայնքների կողմից, այս աջակցությունը չի ծածկում բոլոր ծախսերը: Պետությունը նաև որոշակի կատեգորիաների համար տրամադրում է մեկ երեխայի հաշվով ֆինանսավորում³⁷: Այդուհանդերձ, չնայած սուբսիդիաների առումով այս բարի մտադրություններին, անապահով ընտանիքների երեխաները շարունակում են բացառված մնալ նախադպրոցական կրթության համակարգից:
- **Հյուսիսային շրջաններն ամենաշատն են տուժում նախադպրոցական հաստատությունների փոքր հզորությունից:** Նախադպրոցական հաստատությունների առաջարկը տարբեր մարզերում տարբեր է եղել, ամենափոքր հզորությունն արձանագրվել է Արագածոտնում, Գեղարքունիքում և Շիրակում: Միայն Սյունիքում, Վայոց ձորում և Տավուշում է նախադպրոցական հաստատությունների առաջարկը կարողացել դրականորեն արձագանքել երեքից հինգ տարեկան երեխաների պոտենցիալ պահանջարկին: Տեղական համայնքների ֆինանսական միջոցների պակասը կարող է խոչընդոտ լինել գրանցված երեխաների թվի ավելացման համար:

³⁷ ԿԳՄՄ-ն պարզաբանել է, որ նախադպրոցական հաստատությունը ֆինանսավորվում է պետական բյուջեից՝ յուրաքանչյուր երեխայի հաշվով՝ հետևյալ խմբերի երեխաների համար՝
 1) 2022 թվականի սեպտեմբերի 1-ից՝ կրթական և զարգացման հատուկ կարիքներ ունեցող երեխաները.
 2) 2023 թվականի սեպտեմբերի 1-ից՝ զինծառայող ծնողի, ռազմական գործողություններին մասնակցած ծնողի երեխաները, Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություններ կատարելու ընթացքում կամ հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով զոհված (մահացած) կամ Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություններ կատարելու ժամանակ անհայտ կորելու հետևանքով դատական կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողի երեխաները.
 3) 2026 թվականի սեպտեմբերի 1-ից՝ ընտանիքի սոցիալական գնահատման համակարգում հաշվառված սոցիալապես անապահով կամ «Պետական նպաստների մասին» օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված կարգով ընտանիքի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի չափն անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմի 160 տոկոսի արժեքից ցածր ամսական եկամուտ ունեցող և ընտանիքի անապահովության գնահատման կարգով սոցիալապես անապահով ճանաչված, անապահովության սահմանային միավորից՝ 28-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքների երեխաները.
 4) 2025 թվականի ապրիլի 1-ից մինչև 2026 թվականը՝ ներառյալ՝ 0-2 տարեկան երեխաները (թվով 10 փորձական խումբ):



- **Գրանցման և տվյալների կառավարման կենտրոնացված համակարգի բացակայությունը բարդացնում է ընդունելությունն ու պլանավորումը, ինչպես նաև խոչընդոտում է թափանցիկության ապահովումը:** Հետազոտության ավարտի օրվա դրությամբ չկա երեխաների ընդունման, տվյալների հավաքագրման և պահպանման միասնական համակարգ: Թեև որոշ մարզպետարանների կայքերում կա բոլոր հաստատությունների ամբողջական ցանկը, որոշ դեպքերում ներկայացված են միայն համայնքների համար նախատեսված հաստատությունների ցանկերը՝ առանց մանրամասն տեղեկատվություն տրամադրելու, իսկ որոշ մարզերում ընդհանրապես բացակայում է առցանց գործընթացը³⁸: Սա անհավասար գործընթացներ և խոչընդոտներ է ստեղծում նախադպրոցական հաստատություններում ընդգրկվածության ապահովման համար:
- **Եվ վերջում, այսպես կոչված սահմանային դպրոցները, օրինակ՝ Սյունիքի, Գեղարքունիքի կամ Տավուշի դպրոցները, ունեն հատուկ կարիքներ,** այդ թվում՝ կարողությունների, ֆինանսական ռեսուրսների կամ նույնիսկ անվտանգության առումով, ինչը դպրոցներին ցուցաբերվող աջակցության նկատմամբ տարբերակված մոտեցում է պահանջում:
- **Նույն դասարանում մնալը և հանրակրթությունից դուրս մնալը.** հանրակրթության ոլորտում մարզերի միջև տարբերություններ կան սովորողների հոսքի, նույն դասարանում մնալու և, ամենակարևորը, 9-րդ դասարանից հետո կրթության հասանելիության առումով, ինչպես բացատրվում է ստորև:
- **Տարբերություններ նույն դասարանում մնալու հարցում.** Չնայած նույն դասարանում մնալու ցուցանիշը Հայաստանում շատ ցածր է (բոլոր դասարաններում միջինը 1%-ից ցածր)³⁹, մարզերի միջև որոշ տարբերություններ կան, մասնավորապես՝ Արմավիրում 2023/2024 թվականներին 1-9-րդ դասարաններում մնացողների ցուցանիշը կազմել է 2.3%-ից մինչև 3%⁴⁰: Որոշ մարզերում (մասնավորապես՝ Արարատում, Արագածոտնում, Վայոց Ձորում և Լոռիում) նույն դասարանում մնալու ցուցանիշը մեծանում է ավագ դպրոցում, հատկապես 10-րդ դասարանում, մինչդեռ մյուս մարզերում այն շարունակում է լինել նվազագույն: Չնայած նույն դասարանում մնալու այս ցուցանիշները շարունակում են ցածր լինել, նման տարբերությունները (մակարդակի առումով առնվազն մինչև ավագ դպրոց) և/կամ միտումները պահանջում են նույն

³⁸ Նախադպրոցական կրթության մասին ամփոփիչ տվյալների միակ աղբյուրը ՀՀՎԿ-ն է


³⁹ Նույն դասարանում մնալու մասին թվերը վերաբերում են միայն պետական դպրոցներին, քանի որ ոչ պետական դպրոցներում նույն դասարանում մնալու մասին տվյալները հասանելի չէին ԿԿՏՀ տվյալներում, որից օգտվել է ԵԿՀ-ն:

⁴⁰ Այս իրավիճակը, կարծես, բնորոշ է միայն 2023/2024 ուսումնական տարվան և չի նկատվել 2022/2023 թվականներին:



դասարանում մնալու այս բարձր ցուցանիշների պատճառների և հետևանքների շուրջ լրացուցիչ ուսումնասիրություն:

Գծապատկեր 10. Նույն դասարանում մնացողների տոկոսը պետական դպրոցներում՝ ըստ դասարանի և մարզի, 2023-2024 թթ.



Աղբյուրը՝ ԿԿՏԴ


- 9-րդ դասարանից հետո կրթական ուղիների սեռային և մարզային անհավասարությունները մտահոգություններ են առաջացնում երիտասարդների համար հավասար հնարավորությունների կապակցությամբ:**
 Հայաստանում մոտավորապես յուրաքանչյուր երեք աշակերտից երկուսը (65%) 9-րդ դասարանի վկայականը ստանալուց հետո իրենց ուսումը շարունակում են ավագ դպրոցում, իսկ մնացածի մեծ մասը դիմում է ՄԿՈԲ ծրագրերի⁴¹: Սակայն 9-րդ դասարանի այն շրջանավարտների մասնաբաժինը, որոնք ուսումը շարունակում են հանրակրթությունում, զգալիորեն տարբերվում է մարզից մարզ՝ Լոռիում այն կազմում է շրջանավարտների կեսից մի փոքր ավելին (56%), իսկ Վայոց Ձորում՝ վեցից հինգը (83%): Գոյություն ունեն սև սեռային տարբերություններ. աղջիկների 69%-ը շարունակում է ավագ դպրոցում՝ տղաների ընդամենը 61%-ի համեմատ: Այս անհավասարությունները լայնորեն տարբերվում են՝ Վայոց Ձորում այն կազմում է փոքր՝ 2 տոկոսային կետի, իսկ Տավուշում շատ ավելի մեծ՝ 18 տոկոսային կետի տարբերություն: Չնայած հանրակրթության և ՄԿՈԲ միջև կան ուղիներ, հնարավոր է, որ կրթության հարցում վաղ կատարված ընտրությունը երկարատև ազդեցություն ունենա

⁴¹ Միայն 1%-ն է մնում 9-րդ դասարանում, իսկ 2%-ը դուրս է մնում:



Երիտասարդների հետագա հնարավորությունների վրա: Այս տարբերությունների պատճառներն ու հետևանքները տարբերվում են անձնական նախասիրություններից մինչև տեղական աշխատաշուկայի հեռանկարներ, ուսումնական առաջադիմություն կամ տեղական կրթական ու վերապատրաստման ծրագրերի առկայություն (կամ բացակայություն): Շրջանավարտների հետագծի հետազոտությունները կամ դպրոցից աշխատանքի անցման ուսումնասիրությունները կարող են օգնել գնահատել, թե որքանով են այս տարբեր ուղիները հանգեցնում զբաղվածության Էականորեն տարբեր արդյունքների՝ աշխատանքային հնարավորությունների, եկամտի և զբաղվածության երաշխիքների առումով:

Պճապատկեր 11. 9-րդ դասարանի շրջանավարտների մասնաբաժինը, որոնք ուսումը շարունակում են ավագ դպրոցում՝ ըստ մարզի և սեռի, 2023 թ.



Աղբյուրը՝ ԿԿՏ

- Բարձրագույն կրթության հաստատությունների առկայության առումով մարզային տարբերությունները թեև անխուսափելի են, բայց ստեղծում են որոշակի անհավասարություններ:** ԲՈՒՅ-երի 10 ուսանողներից գրեթե 9-ը (88%) կենտրոնացած են Երևանում: Այնպիսի մարզերում, ինչպիսիք են Արմավիրն ու Կոտայքը, պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների բացակայությունը բոլոր ուսանողներին ստիպում է բարձրագույն կրթության առաջին աստիճանի համար ընդունվել ոչ պետական հաստատություններ: Ավելին,



Արագածոտնում, Արարատում, Տավուշում և Վայոց ձորում ոչ մի բարձրագույն ուսումնական հաստատություն չկա, ինչը տեղի երիտասարդներին զրկում է բարձրագույն կրթություն ստանալու հնարավորություններից, եթե նրանք չեն հաճախում այլ մարզերի համալսարաններ: Չնայած տարածքի չափը, հավանաբար, չի արդարացնի ԲՈՒՀ-երի գոյությունը բոլոր մարզերում, քաղաքականություն մշակողները պետք է հիշեն, որ ներկայիս իրավիճակը հաճախ հանգեցնում է գործնական և ֆինանսական դժվարությունների, որոնք լրացուցիչ խոչընդոտներ են ստեղծում բարձրագույն կրթություն ստանալու համար: Մինչ օրս կրթաթոշակային հնարավորություններին ուղեկցող ֆինանսական կամ այլ ռեսուրսներով աջակցության տեսակները (միջքաղաքային ճանապարհածախսի փոխհատուցում, անվճար հանրակացարաններ կամ ոչ թանկ բնակարանային տարբերակներ և այլն) բոլորովին բավարար չեն անապահով խավի/մարզերից եկող ուսանողների համար:


1.2 Անհավասարություններ որակի հարցում. դասավանդման և ուսումնառության պայմանները

Որակի առումով, Հայաստանի կրթական համակարգը բախվում է զգալի մարտահրավերների, որոնք կապված են **ուսուցչական կազմի բնութագրերի և ընդհանուր ուսումնական միջավայրի** հետ: Այս խնդիրներն ընդգծում են ուսուցչական կազմի առկայության և որակի հետ կապված կարևոր անհավասարությունները, մասնավորապես՝ ազդելով գյուղական բնակավայրերի վրա և ընդհանուր առմամբ հանգեցնելով որակյալ ուսուցիչների պակասի:

- **Ուսուցչական կազմ. ներկա ուսուցչական կազմի ծերացումը** կրիտիկական խնդիր է Հայաստանում, քանի որ բազմաթիվ ուսուցիչներ մոտենում են կենսաթոշակային տարիքի՝ առանց իրենց փոխարինող երիտասարդ, որակյալ ուսուցիչների բավարար քանակի: ԿԿՏՀ-ի տվյալների համաձայն՝ 2023-2024 թվականներին ուսուցիչների 13%-ը եղել է կենսաթոշակային տարիքի, իսկ ևս 4%-ը՝ 2 տարի հետո կանցներ կենսաթոշակի: Ուսուցիչների տարիքային բուրգը ցույց է տալիս 25-29 տարեկան և մինչև 25 տարեկան ուսուցիչների թվի զգալի անկում, ինչը մտահոգություններ է առաջացնում ուսուցչական կազմի սերնդափոխության կապակցությամբ:



Գծապատկեր 12. Ուսուցիչների թիվը՝ ըստ տարիքային խմբի և սեռի, 2023-2024 թթ.



Աղբյուրը՝ ԿԿՏՀ


- Ուսուցիչների պակասը հատկապես սուր է զգացվում ԲՏՃՍ, արվեստի, օտար լեզուների և ֆիզիկական դաստիարակության առարկաների առումով,** հատկապես գյուղական բնակավայրերում: Այն փաստը, որ **ուսուցիչ միջին աշխատավարձը զգալիորեն ցածր է ազգային միջինից** և որակավորման նմանատիպ մակարդակ ունեցող աշխատատեղերի աշխատավարձերից⁴², այս մասնագիտությունը շատ ավելի պակաս գրավիչ է դարձնում այլ մասնագիտությունների հետ համեմատությամբ: Բացի այդ, ուսուցիչների աշխատավարձերը մասամբ համաչափ են նրանց դասավանդման ժամերի քանակին⁴³, և դա կախված է դասավանդման կարիքներից, այլ ոչ թե ուսուցիչների կարիքներից: Ավելին, ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի թիվ 596 որոշմամբ հաստատված կարգով պահանջվում է, որ ուսուցիչներն ունենան բարձրագույն կրթության աստիճան և մանկավարժական որակավորում, ինչն էլ ավելի է սրում ուսուցիչների պակասի հետ կապված ռիսկը, քանի որ բազմաթիվ ուսուցիչներ ներկայում չեն համապատասխանում այդ չափանիշներին: ԿԿՏՀ-ի տվյալների համաձայն՝ 2023-2024 թվականներին հանրակրթական դպրոցների ուսուցիչների 93%-ն ուներ բարձրագույն կրթության աստիճան, իսկ 84%-ը՝

⁴² Անհամապատասխանության աստիճանի հարցում տարբեր աղբյուրների տվյալներ տարբեր են:
⁴³ Ուսուցիչը կարող է վարձատրվել լրիվ դրույքաչափով միայն այն դեպքում, եթե դասավանդում է պաշտոնական ստանդարտ դասավանդման ժամերի առնվազն 50%-ը: Այս շեմից ցածր դասավանդելու դեպքում աշխատավարձի չափը համամասնորեն համապատասխանում է փաստացի դասավանդած ժամերի թվին:



մանկավարժական որակավորում մարզերի միջև համեմատաբար փոքր տարբերություններով (համապատասխանաբար՝ Արագածոտնում 95%-ից մինչև 98% երևանում ու Արարատում և Տավուշում 80%-ից մինչև 89% Լոռիում): Ուսուցիչների աշխատանքի ընդունվելու համար մանկավարժական որակավորման խիստ պայմանների կիրառումն ուսուցիչների պակասի պայմաններում իր արտացոլումը կունենա որոշ մարզերում, մասնավորապես՝ սահմանամերձ դպրոցներում:

Գծապատկեր 13. Հանրակրթական դպրոցների ուսուցիչների բաշխվածությունը՝ ըստ կրթական մակարդակի և մանկավարժական որակավորման, ըստ մարզերի, 2023-2024 թթ.



Աղբյուրը՝ ԿԿՏՀ


- Վերջին տարիներին պետական հանրակրթական դպրոցներում աշակերտ-ուսուցիչ միջին հարաբերակցությունը անշեղորեն աճում է՝ կազմելով մոտ 11.2⁴⁴ 2023 թվականին, մինչդեռ 2013 թվականին այն կազմել է 9.2 (ԵԿՀ հաշվարկները՝ ՀՀՎԿ տվյալների հիման վրա⁴⁴): Սակայն այս հարաբերակցությունը մեծապես տարբերվում է մարզից մարզ՝ Արագածոտնում այն 7.3 է, իսկ երևանում՝ 14.4:
- 2020 թվականին աշակերտ-ուսուցիչ հարաբերակցությունը ամենաբարձրն է եղել տարրական և թերի միջնակարգ դպրոցներում՝ ոչ միայն կրթական այլ մակարդակների, այլև միջազգային հեռանկիների համեմատ (ՅՈՒՆԻՍԵՖ 2022թ): Մարզերի քաղաքային բնակավայրերում հարաբերակցությունը մոտ 50%-ով ավելի բարձր է եղել, քան

⁴⁴ Այս աշակերտ-ուսուցիչ հարաբերակցության հաշվարկը ներառում է ինչպես դասավանդման, այնպես էլ վարչական և օժանդակ պարտականություններ ունեցող ուսուցիչներին (որոնք կոչվում են «դասախոսներ», օրինակ՝ ՀՀՎԿ հետևյալ փաստաթղթում https://armstat.am/file/article/soc_sit_2023_en_2.pdf):



գյուղական բնակավայրերում. 2023/2024 ուսումնական տարում այն համապատասխանաբար կազմել է 16.9 և 11.7⁴⁵: 2022/23 թվականներին առավելագույնը 100 աշակերտ ունեցող 430 հանրակրթական դպրոցներում (որոնց մեծ մասը գյուղական բնակավայրերում) աշակերտ-ուսուցիչ հարաբերակցությունը կազմել է ընդամենը 4.7, մինչդեռ 500-ից ավելի աշակերտ ունեցող խոշոր դպրոցներում (որոնց մեծ մասը գտնվում է քաղաքային բնակավայրերում) աշակերտ-ուսուցիչ հարաբերակցությունը կազմել է միջինը 18.3 աշակերտ մեկ ուսուցչի հաշվով:

Գծապատկեր 14. Աշակերտ-ուսուցիչ հարաբերակցությունը հանրակրթական դպրոցներում՝ ըստ տարածքի, մարզի և դպրոցի չափի, 2022-2023 թթ.




Աղբյուրը՝ ԿԿՏԶ և ԵԿՆ հաշվարկներ
 Ծանոթագրություն. այս գծապատկերում հաշվարկում ներառված են միայն բացառապես դասավանդման ժամեր ունեցող ուսուցիչները:

- Դպրոցների ռեսուրսներ և ուսումնական միջավայր.** Հայաստանի դպրոցները բնութագրվում են բազմափոփ աշխատանքի առկայությամբ և շատ հաճախ անբավարար ենթակառուցվածքային պայմաններով, ինչը սահմանափակ ռեսուրսների հետևանք է: **Որոշ մարզերում հանրակրթական դպրոցների գրեթե կեսն ունի հիմնանորոգման կարիք:** 834 դպրոցների (կամ ընդհանուր թվի 60%-ը) շենքային պայմաններն ունեն անհապաղ կամ հետագա վերանորոգման կարիք: Թեև Հայաստանում միջին կտրվածքով դպրոցների 40%-ը համարվում է, որ գտնվում է լավ

⁴⁵ ԵԿՆ-ի հաշվարկները՝ [3344 տվյալների](#) հիման վրա, որոնք վերաբերում են պետական և ոչ պետական հանրակրթական դպրոցներին՝ հաշվի առնելով միայն բացառապես դասավանդման պարտականություններ ունեցող ուսուցիչներին:

վիճակում, իսկ 27%-ը՝ խոշոր վերանորոգման կարիք ունի, իրավիճակն առավել բարենպաստ է երևանում, որտեղ դպրոցների մեծ մասը (51%) լավ վիճակում է, չնայած մեկ երրորդից ավելին (35%) ունի միայն զգալի վերանորոգման կարիք: Սակայն հիմնանորոգման կարիք ունեցող դպրոցների համամասնությունը Սյունիքում և Գեղարքունիքում հասնում է համապատասխանաբար 42%-ի և 48%-ի:

Գծապատկեր 15. Դպրոցների տոկոսը՝ ըստ շենքային պայմանների, ըստ մարզերի, 2023-2024 թթ.



Աղբյուրը՝ ԿԿՏՀ և ԵԿՀ հաշվարկներ: Մարզերը դասակարգված են լավ վիճակում գտնվող շենքերի համամասնության նվազման կարգով:


- Բազմափորձ ուսուցումը, որն աշակերտների միայն 3%-ին է բաժին ընկնում, ուսուցիչների որոշ պակասի ցուցիչ է:** Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (ԿՏԱԿ) տվյալների համաձայն՝ 2023/2024 ուսումնական տարում 1399 գործող հանրակրթական հաստատություններից (1352-ը՝ պետական և 47-ը՝ մասնավոր) մոտավորապես 6%-ը գործել է երկուսից երեք հերթափոխով, չնայած, կարծես թե, այդ դպրոցների ոչ բոլոր դասարաններում է իրականացվում բազմափորձ ուսուցում: Միջին հաշվով, ըստ ԿԿՏՀ տվյալների, քաղաքային բնակավայրերում դասարանների 4%-ում և գյուղական բնակավայրերում դասարանների 1%-ում կազմակերպվում է բազմափորձ ուսուցում (հիմնականում երկու հերթափոխով), ինչը տարածվում է հանրակրթական դպրոցների բոլոր աշակերտների մոտավորապես 3%-ի վրա



(համապատասխանաբար՝ 4% և 2%՝ քաղաքային և գյուղական բնակավայրերում) ⁴⁶: Հետաքրքրական է, որ բազմահերթ ուսուցմամբ դպրոցներում

միշտ չէ, որ արձանագրվում է զբաղվածության ամենաբարձր հարաբերակցությունը: Որոշ մարզերում, օրինակ՝ Արագածոտնում և Արարատում, գյուղական բնակավայրերում բազմահերթ ուսուցմամբ դպրոցների մասնաբաժինն ավելի մեծ է, քան քաղաքային դպրոցներում: Հնարավոր է, որ լրացուցիչ ուսումնասիրության անհրաժեշտություն լինի՝ պարզելու համար, թե ինչու են դպրոցները որոշում աշխատել բազմակի հերթափոխով, որքանով է դա պայմանավորված նաև ուսուցիչների պակասով, և ինչ ազդեցություն ունի այս որոշումը մանկավարժական գործընթացի վրա, այդ թվում՝ դասավանդման ժամանակի առումով:

Գծապատկեր 16. Երկու կամ երեք հերթափոխով ուսուցմամբ հանրակրթական դպրոցների տոկոսը, ըստ մարզի և տարածքի, 2023-2024 թթ.



Աղբյուրը՝ ԿԿՏՀ և ԵԿՀ հաշվարկներ

- Բացի այդ, դասերից հետո ոչ ավելի, քան 100 դպրոց է երկարորյա ծառայությունն առաջարկում է (77 պետական և 21 մասնավոր): Ընդամենը 13 գիշերօթիկ դպրոց կա: Ուսումնական միջավայրի առումով նկատելի են Եսկան տարբերություններ՝ մասնավորապես քաղաքային և գյուղական բնակավայրերի միջև: Գյուղական

⁴⁶ Հաշվարկը հիմնված է մի քանի հերթափոխով ուսուցմամբ յուրաքանչյուր դպրոցի դասարանների միջին չափի վրա:



դպրոցներում ենթակառուցվածքները հաճախ անմխիթար վիճակում են, թվային ռեսուրսների հասանելիությունը սահմանափակ է, և ունեն որակյալ ուսուցչական կազմի պակաս:


- 2023/2024 ուսումնական տարվա սկզբին հանրակրթական դպրոցների ընդհանուր հզորությունը նախատեսված է եղել 661 202 աշակերտի սպասարկելու համար, ինչը զգալիորեն ավելի մեծ թիվ է, քան ընդգրկված 424 927 աշակերտի թիվը, ինչպես հաղորդել է ԿԿՏՀ-ն, ինչը վկայում է դպրոցական ցանցի ոչ օպտիմալ և անարդյունավետ օգտագործման մասին: 2022-2023 թվականներին **հանրակրթական դպրոցների 17%-ը (242) ունեցել է 50-ից պակաս աշակերտ և սպասարկել է երկրի աշակերտների 2%-ին** (յուրաքանչյուր դպրոցում միջինը 7.6 ուսուցիչ և մեկ ուսուցչի հաշվով 4-ից պակաս աշակերտ): Ի տարբերություն դրա՝ դպրոցների 17%-ն ունեցել է 500-ից ավելի աշակերտ և սպասարկել բոլոր աշակերտների գրեթե կեսին (48%) (յուրաքանչյուր դպրոցում միջինը 45 ուսուցիչ և 18.3 աշակերտ-ուսուցիչ հարաբերակցությամբ) (ԿԿՏՀ): Այն դեպքում, երբ շատ դպրոցներ գործում են իրենց հզորությունից ցածր ծավալով, ինչը հանգեցնում է ռեսուրսների թերօգտագործման, որոշ դպրոցներ էլ աշխատում են բազմակի հերթափոխով՝ ռեսուրսների սահմանափակության պատճառով: Կրթության կազմակերպման որակի հետ կապված այս անհավասարությունը խորացնում է դպրոցական ցանցի ընդհանուր անգործունակությունն ու արդյունավետությունը:

Անհավասարություններ ուսումնառության հարցում


Մեծ տարբերություններ կան 9-րդ դասարանի ավարտական վկայական ստացող աշակերտների համամասնության մեջ: Շրջանավարտների համամասնությունը⁴⁷ տարբեր է՝ տատանվելով Արմավիրում 75%-ից մինչև Լոռիում ավելի քան 92%-ի միջև⁴⁸: Բացի Երևանից՝ բոլոր մարզերում, շրջանավարտների համամասնության առումով, սեռային տարբերություններ են նկատվում Սյունիքում, Գեղարքունիքում, Արագածոտնում և Տավուշում՝ հօգուտ աղջիկների, իսկ Լոռիում, Շիրակում, Արարատում և Կոտայքում՝ հօգուտ տղաների (սեռերի հավասար ներկայացվածության ճշգրտված ցուցիչները (GPIAs) տատանվում են 0.9-ից մինչև 1.13-ի սահմաններում), չնայած ազգային մակարդակում դրանք լրացնում են իրար:

⁴⁷ Քանի որ ավարտական քննություններին մասնակցող աշակերտների թիվը բացակայում էր ԵԿՀ-ին հասանելի տվյալներում, շրջանավարտների հարաբերակցությունը հաշվարկվել է որպես 9-րդ դասարանի շրջանավարտների թվի և տվյալ տարում 9-րդ դասարանում ընդգրկվածների թվի հարաբերակցություն:

⁴⁸ Վայոց Ձորի համար հաշվարկված շրջանավարտների համամասնությունը գերազանցում է 100%-ը, ինչը կարող է վկայել արտաքին թեկնածուների մեծ թվի կամ տվյալների հետ կապված խնդրի մասին, և ամեն դեպքում պահանջում է լրացուցիչ ուսումնասիրություն:



Փծապատկեր 17. 9-րդ դասարանի շրջանավարտների հարաբերակցությունը՝ ըստ սեռի և GPIA-ի, ըստ մարզերի, 2023-2024 թթ.




Աղբյուրը՝ ԿԿՏՀ և ԵԿՀ հաշվարկներ

Ինչ վերաբերում է ամենաբարձր առաջադիմությանը, Շիրակն ու Սյունիքը այն մարզերի շարքում են, որտեղ 9-րդ և 12-րդ դասարանների շրջանավարտների ամենաբարձր համամասնությունն է ցուցաբերել գերազանց արդյունքներ, մինչդեռ Արագածոտնում, Կոտայքում, Տավուշում և Արարատում նման արդյունքներ գրանցած աշակերտների թիվն ավելի է փոքր է: Բոլոր մարզերում, և երկու մակարդակներում էլ, չնայած 9-րդ դասարանում ավելի համընդհանուր ցուցանիշ է գրանցվել, գերազանց արդյունքներ ցուցաբերած աղջիկների համամասնությունը շատ ավելի մեծ է, քան տղաներինը: Հետաքրքիր է, որ Գեղարքունիքում արձանագրվել է գերազանց արդյունքներ ցուցաբերած 9-րդ դասարանի շրջանավարտների ամենամեծ համամասնությունը, իսկ 12-րդ դասարանում՝ ամենացածր համամասնությունը: Վայոց Ձորում էլ հակառակն պատկերն էր. այս բացահայտումը պահանջում է հետագա ուսումնասիրություն՝ պարզելու համար, թե ինչը կարող է լինել այս տարբերությունների պատճառը:



Գծապատկեր 18. 9-րդ և 12-րդ դասարաններում գերազանց առաջադիմությամբ շրջանավարտների տոկոսը՝ ըստ մարզերի, 2023-2024 թթ.



Աղբյուրը՝ ԿԿՏԳ և ԵԿԳ հաշվարկներ

2. Ֆինանսական վերլուծություն

2.1 Ռեսուրսների համախմբում

Պետական բյուջեն և պետական ներդրումները կրթության մեջ. ցածր մակարդակ, որը բացատրվում է համատեքստով

- Չնայած վերջին շրջանում կրթության ոլորտի բյուջեում կատարված զգալի աճին, կրթության ոլորտի ծախսերը շարունակում են ցածր մակարդակում մնալ՝ միջազգային հենանիշների համեմատ:** Վերջին հինգ տարվա ընթացքում (2020-2024 թթ.) կրթության ոլորտին հատկացված պետական բյուջեն անվանական արտահայտությամբ աճել է 98.9%-ով՝ 2020 թվականի մոտ 141 միլիարդ դրամից 2024 թվականին հասնելով 282 միլիարդ դրամի⁴⁹: Իրականում աճն ավելի համեստ է եղել՝ 17% աճ 2020-2023 թվականների ընթացքում, չնայած 2024 թվականի համար նախատեսվել էր կրթության ոլորտի վրա կատարվող ծախսերի մեծ աճ (+ 47% անվանական արտահայտությամբ), ընդ որում, տարվա համար կանխատեսվել է նվազագույն գնաճ⁵⁰, ինչը նշանակում է, որ այս աճի մեծ մասը նկատելի կլինի իրական արտահայտությամբ:


⁴⁹ Ֆինանսների նախարարություն, պետական բյուջեի տվյալներ:

⁵⁰ 2024 թվականի հոկտեմբերի «Գլոբալ տնտեսական հեռանկարներ» զեկույցում Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄԳ) կանխատեսում է 0.2% գնաճ 2024 թվականին (ԳՏԳ տվյալների շտեմարան, հասանելի էր 2024 թվականի դեկտեմբերի 5-ի դրությամբ):



Այդուհանդերձ, չնայած այս աճին, կրթության ոլորտի ծախսերի մասնաբաժինը զգալիորեն ցածր է պետական բյուջեի 15-20%-ի և ՀՆԱ-ի 4-6%-ի միջազգայնորեն ճանաչված հեռանկից: Իսկապես, Հայաստանում կրթության ոլորտի պետական բյուջեի մասնաբաժինը ՀՆԱ-ում տատանվել է 2%-2.3%-ի միջև (2023 թվականին՝ 2.3%), մինչդեռ այն կազմել է պետական բյուջեի միջինը 7.7%-ը (2024 թվականին՝ 8.7%): Այս ցուցանիշները ամենացածրերից են՝ Արևելյան գործընկերության երկրների և այլ համադրելի երկրների համեմատությամբ⁵¹:

Գծապատկեր 19. Կրթության հաստատված և կատարված բյուջեի և կրթության պետական ծախսերի տոկոսը՝ ընդհանուր պետական ծախսերի և ՀՆԱ-ի նկատմամբ, 2020-2024 թթ.



Աղբյուրը՝ Ֆինանսների նախարարություն (պետական բյուջեի տվյալներ), UIS (2024 թվականի սեպտեմբերի տվյալների հրապարակում)՝ կրթության պետական ծախսերի տոկոսը՝ ընդհանուր պետական ծախսերի նկատմամբ, և Համաշխարհային բանկ (դեֆյատորներ):

- **Վերջին տարիներին կրթության բյուջեն համակարգված կերպով վերանայվել է դեպի ներքև, մինչդեռ որոշ ծրագրերի մասով ծախսերը մնում են համեմատաբար ցածր:** 2022 թվականի ընթացքում բյուջեի վերանայումները հասել են -13%-ի, իսկ 2023 թվականին մնացել են համեմատաբար բարձր՝ 10% կրճատմամբ⁵²,

⁵¹ Համեմատական երկրներ՝ Չեխիա, Էստոնիա, Վրաստան, Լատվիա, Լիտվա, Մոլդովա, Ռումինիա, Սլովակիա:
⁵² Չեկոյցը գրեթե օրվա դրությամբ 2024 թ. ֆինանսական տարվա վերանայման վերաբերյալ տվյալներ հասանելի չեն:



չնայած ընդհանուր պետական բյուջեի ընդհանուր վերանայմանը դեպի վեր՝ 2022 և 2023 թվականներին կազմելով համապատասխանաբար 5% և 1%: Չնայած այս վերանայումներին, կրթության պետական բյուջեի կատարման ցուցանիշը, որը 2021 և 2022 թվականներին հասել է 98% և 97%, 2023 թվականին նվազել է մինչև 94%: Ծրագրերի առումով՝ «ՏՀՏ-ների ներդրում», «Ապահով դպրոց» և «Կրթության որակի ապահովում» ծրագրերն ունեցել են բյուջեի կատարման ամենացածր ցուցանիշները (համապատասխանաբար 74%, 76% և 81%, տե՛ս Հավելվածի 31-րդ գծապատկերը), ինչը պահանջում է ավելի խոր ուսումնասիրություն կատարել ԿԳՄՍՆ-ի՝ խոշոր կապիտալ ենթակառուցվածքային ծրագրեր իրականացնելու և անհրաժեշտ դրամաշնորհներ տրամադրելու կարողության վերաբերյալ (տե՛ս Հավելվածի 32-րդ գծապատկերը՝ ծրագրերի բյուջեի բաշխումը՝ ըստ տնտեսական դասակարգման):

Գծապատկեր 20. Հաստատված և վերանայված պետական և կրթության պետական բյուջեները և կատարման ցուցանիշները, 2020-2024 թթ.

Table Header	Պետական բյուջե			Կրթության պետական բյուջե			Կրթության պետական բյուջեի վերանայում
	Հաստատված	Վերանայված	Շեղում	Հաստատված	Վերանայված	Շեղում	
2020	1 856	1 989	7%	141	139	- 2%	95.7%
2021	1 851	2 049	11%	142	140	- 2%	98.0%
2022	2 184	2 288	5%	174	152	- 13%	97.2%
2023	2 591	2 625	1%	191	172	- 10%	93.9%
2024	3 207	3 203	0%	280	279	0%	49.4%*

Աղբյուրը՝ Ֆինանսների նախարարություն: Ծանոթագրություն. կատարման ցուցանիշները հաշվարկվում են վերանայված բյուջեների հիման վրա: *2024 թվականի կատարման ցուցանիշը հիմնված է տարվա առաջին ինը ամիսների վրա:

- Հաշվի առնելով երկրում առկա սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական և աշխարհաքաղաքական մարտահրավերները, մասնավորապես՝ Ադրբեջանի հետ պատերազմից հետո Լեռնային Ղարաբաղից հայերի հայրենադարձությունը, ինչպես նաև 2021-2026 թվականների կառավարության ծրագրում սահմանված առաջնահերթությունները՝ **պետական բյուջեի գրեթե կեսը հատկացվում է սոցիալական պաշտպանությանը** (ներառյալ երեխաներին և խոցելի ընտանիքներին



ուղղված ծրագրերը), պաշտպանությանն ու ազգային անվտանգությանը, որը 2024 թվականին կազմել է համապատասխանաբար 22.8% և 23.5%⁵³: Ակնկալվում է, որ 2025 թվականին երկու բյուջեներն էլ կհաստատվեն քառորդ չափով (26.2%՝ ըստ 2025 թվականի պետական բյուջեի նախագծի և 2025-2027 թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրի): Այս իրավիճակը խոչընդոտում է կարճաժամկետ հեռանկարում առնվազն ներքին ռեսուրսների հաշվին կրթության ծախսերի աճի հավանականությունը:

Պետական քաղաքականության ֆինանսական կայունությունը

- Կրթության մինչև 2030 թվականի զարգացման ծրագիրը հաստատվել է 2022 թվականի նոյեմբերին՝ որպես օրենք, որով սահմանում են ոլորտի զարգացման առաջնահերթ ուղղությունները և ակնկալվող արդյունքները:
- Թեև ծրագիրը հաստատվել է 2022 թվականին, իրականում այն ձևակերպել է արդեն ընթացքի մեջ գտնվող բարեփոխումները: 2020-2022 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հետևել է այս քաղաքականության շրջանակին, որի միջոցառումներն ու ծրագրերն ուղղված են եղել որոշ առաջնահերթություններին և արդյունքներին: Այդուհանդերձ, Կրթության մինչև 2030 թվականի զարգացման ծրագրի գործողությունների ծրագիրը ներառում է այնպիսի միջոցառումներ, որոնք կրթության ոլորտի բյուջետային ֆինանսավորումից զատ պահանջում են լրացուցիչ ծախսեր:
- Գործողությունների ծրագրի նախահաշիվը կազմվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բարեփոխումների ընդհանուր արժեքը կազմում է մոտ 1 835 միլիարդ դրամ (4.3 միլիարդ եվրո), որը պետք է իրականացվի 2023-2030 թվականների միջև ընկած ժամանակահատվածում⁵⁴, կամ տարեկան միջինը մոտ 230 միլիարդ դրամ (539 միլիոն եվրո): Երկու ամենաթանկ միջոցառումներն են՝ (1) դպրոցների և նախադպրոցական հաստատությունների վերանորոգումը, կահավորումը և պահպանումը (488 միլիարդ դրամ – 1.1 միլիարդ եվրո) և (2) ակադեմիական քաղաքի կառուցումը⁵⁵ (440 միլիարդ դրամ – 802 միլիոն եվրո): Ծախսերի նախահաշիվը կազմման մեթոդաբանությունը հիմնված է եղել միավոր ծախսերի հաշվարկի վրա, սակայն այն հիմնված չի եղել

⁵³ Աղբյուրը՝ 2024-2026 թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիր, 2024 թ. պետական բյուջե:

⁵⁴ Աղբյուրը՝ ԿԳՄՄՆ:

⁵⁵ «Ակադեմիական քաղաք» նախագիծը, որը ՀՀ կառավարության կողմից հաստատվել է 2023 թվականի հոկտեմբերին՝ Կրթության մինչև 2030 թվականի զարգացման ծրագրի շրջանակում, կկառուցվի Երևանի 17-րդ թաղամասում՝ մոտ 700 հեկտար տարածության վրա (primeminister.am, acarmenia.am): Դրա նպատակն է միավորել մինչև 16 համալսարան՝ 8 պետական և 8 մասնավոր կամ միջազգային՝ չորս կլաստերներում (տեխնոլոգիական, արվեստների, կրթական և սպայական) և տեղավորել մոտ 44 000 ուսանող: Ծրագիրը ներառում է հետազոտական կենտրոններ, ուսանողական կացարաններ, մշակութային վայրեր, մարզական կառույցներ, համերգասրահ և 35 000 տեղանոց ազգային մարզադաշտ: Ծրագիրը սահմանում է փուլային ժամանակացույց՝ նախագծում՝ մինչև 2025 թվականը, շինարարություն՝ 2025-2029 թվականներին, և լիարժեք շահագործում՝ մինչև 2030 թվականը: Այն բարձրագույն կրթության շահագրգիռ կողմերի շրջանում քննարկումների տեղիք է տալիս, մասնավորապես՝ ծախսի և ավելացված արժեքի միջև անորոշ համամասնության պատճառով (Աղբյուրը՝ բարձրագույն կրթության ֆոկուս խումբ):



կանխատեսվող ֆիսկալ տարածքի և միջնաժամկետ բյուջետային սահմանափակումների վրա: Հետևաբար, ծախսերն ավելի շատ տեղեկատվական բնույթի են, քան միջնաժամկետ ծախսերի ծրագրերի կամ տարեկան բյուջեների մշակման հիմք:

- ԿԳՄՄՆ-ն պատրաստել է 2023 թվականին ծրագրի իրականացման մասին զեկույց, որտեղ ներկայացված է գործողությունների ծրագրի յուրաքանչյուր միջոցառման կատարման հետ կապված առաջընթացը: Սակայն փաստաթղթում ներառված չէ ֆինանսական հաշվետվությունը, որը թույլ կտար մանրամասն վերլուծել ծրագրի իրականացման վրա պետական ծախսերը որպես ամբողջություն:

Ընտանիքների ֆինանսական բեռը

- **Ծնողների կողմից կրթության ոչ ֆորմալ ֆինանսավորումը** փոփոխական մեծության խնդիր է՝ կախված կրթական մակարդակից՝ որպես այդպիսին և անհավասարությունների առումով⁵⁶:
- 2021 և 2022 թվականներին կրթության ծախսերը (մեկ շնչի հաշվով) կազմել են տնային տնտեսությունների ամսական անվանական ծախսերի միջինը 2%-ը (2.2 եվրո): Բաղաքային բնակավայրերում այս ցուցանիշը կազմել է 2-2.1%, իսկ գյուղական բնակավայրերում՝ 1.9-1.8%⁵⁷:
- ՅՈՒՆԻՍԵՖ/ՄԱԶԾ-ի 2024 թվականի զեկույցի համաձայն՝ 2018-2021 թվականներին տնային տնտեսությունների կրթության ծախսերի կառուցվածքում ամենամեծ բաժինը (44-54%) հատկացվել է բարձրագույն կրթությանը⁵⁸, որին հաջորդում են հանրակրթությունը և նախադպրոցական կրթությունը: Տնային տնտեսությունների կրթության ծախսերի կառուցվածքում հիմնական ծախսերի կատեգորիաներն են՝ ուսման վարձ և այլ վճարումներ՝ 39.5%, համազգեստ և այլ հագուստ՝ 27.8%, մասնավոր կրկնուսույցի ծախսեր՝ 10.4%:
- Պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսման տարեկան միջին վարձը տատանվում է 1100-1600 եվրոյի միջև, ամսական վարձը կազմում է միջինը մոտ 135 եվրո⁵⁹, ինչը, կարծես, բարձր է հարևան երկրների համեմատ, և չկան շրջանակներ կամ չափանիշներ՝ յուրաքանչյուր համալսարանի կողմից պահանջվող վճարները սահմանելու համար՝ կախված համալսարանի մակարդակից: Պետական

⁵⁶ Մասնավոր կրկնուսուցումը լայնորեն տարածված երևույթ է ավագ դպրոցի մակարդակում: Հարուստ ընտանիքները, ի տարբերություն սոցիալապես անապահով ընտանիքների, կարողանում են իրենց երեխաների համար ապահովել որակյալ մասնավոր կրկնուսուցում, ինչը նրանց թույլ է տալիս ավելի լավ պատրաստվել համալսարանի ընդունելությանը:

⁵⁷ Աղբյուրը՝ https://armstat.am/file/article/poverty_2023_a_3.pdf:

⁵⁸ Համալսարանների մեծ մասը գտնվում է Երևանում, և այլ մարզերից եկած ուսանողները մայրաքաղաքում ապրելու հետ կապված ֆինանսական դժվարություններ են ունենում (կացարան, տրանսպորտ, սնունդ):

⁵⁹ Հաշվարկված է ուսումնական տարվա 10 ամիսների համար:



ՄԿՈՒ հաստատություններում ուսման տարեկան միջին վարձը տատանվում է 400-600 եվրոյի միջև, ամսական միջին վճարը կազմում է մոտ 50 եվրո:

- ՄԿՈՒ ոլորտում նախնական և, մասնավորապես, միջին մասնագիտական կրթության հաստատություններում վճարովի կրթության առկայությունը հասանելիության խնդիրներ է առաջացնում տնտեսապես անապահով խմբերի համար, չնայած նրանց կարող է շնորհվել անվճար հասանելիություն: Շարունակական մասնագիտական կրթության և ուսուցման առումով գործազուրկների, հաշմանդամություն ունեցող անձանց կամ այլ խոցելի խմբերի համար հասանելիությունը, հիմնականում աշխատաշուկայում Աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության ակտիվ քաղաքականության շրջանակում, երաշխավորվում է միայն պետական բյուջեից հասանելի ֆինանսավորման շրջանակներում⁶⁰:

Այս պայմանները լրացուցիչ ծանրաբեռնվածություն են ստեղծում տնտեսապես անապահով ընտանիքների համար՝ ավելացնելով կրթությանն ուղղվող նրանց ֆինանսական բեռը:

⁶⁰ Զաղաքականության հիմնական գարգացումները կրթության, ուսուցման և զբաղվածության ոլորտներում..
Հայաստան 2023 թ., ԵԿՀ:



Ուսման տարեկան վարձի օրինակներ (Աղբյուրը՝ համապատասխան հաստատությունների կայքեր)

Բակալավրի աստիճանի համար՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում՝

- Երևանի պետական համալսարան՝ 1 100 – 1 800 եվրո
- Երևանի պետական ճարտարագիտական համալսարան՝ 1 300 – 1 900 եվրո
- Երևանի պետական մանկավարժական համալսարան՝ 900 – 1 300 եվրո

ՄԿՈՒ հաստատություններում՝

- Երևանի բժշկական քոլեջ՝ 840 եվրո
- Գյումրիի բժշկական քոլեջ (Շիրակի մարզ)՝ 500 – 600 եվրո
- Գավառի գյուղատնտեսական քոլեջ (Գեղարքունիքի մարզ)՝ 250 – 350 եվրո

Կառավարությունը միջոցներ է ձեռնարկում ընտանիքների ֆինանսական բեռը թեթևացնելու, ինչպես նաև ուսանողներին կրթություն ստանալու խթաններ տրամադրելու ուղղությամբ, մասնավորապես՝ բարձրագույն կրթության և մասնագիտական կրթության հաստատություններում (բայց նաև, ինչպես նշվեց ավելի վաղ, խոցելի խմբերի երեխաների համար նախադպրոցական հաստատությունների հասանելիության ապահովման ուղղությամբ): Այս աջակցությունը կարող է ունենալ երեք հիմնական ձև՝ i) ուսման վարձի ամբողջական փոխհատուցում՝ կրթությունն ամբողջովին անվճար է, ii) ուսման վարձի մասնակի փոխհատուցում⁶¹, կամ iii) կրթաթոշակների վճարում:

Անվճար կրթություն ստանալու, ծախսերի մասնակի փոխհատուցման և կրթաթոշակների համար պահանջներին համապատասխանության չափանիշները սահմանվում են կառավարության կողմից և ներառում են բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին, սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողներին (որոնք գրանցված են սոցիալական ապահովության ընտանեկան նպաստների համակարգում), հաշմանդամություն ունեցող ուսանողներին, ռազմական հակամարտության ընթացքում հաշմանդամություն ստացած կամ զոհված անդամներ ունեցող ընտանիքների ուսանողներին և կառավարության կողմից որպես առաջնահերթություն սահմանված դասընթացներում ընդգրկված ուսանողներին:

2023/2024 ուսումնական տարում (2023 թ. ֆինանսական տարի) բարձրագույն կրթության բյուջեի 83.6%-ը հատկացվել է ուսանողների 18%-ի ուսման վարձի վճարման համար: Այլ կերպ

⁶¹ Ուսման վարձի գեղից օգտվող ուսանողների թվի մասին վիճակագրական տվյալներ բացակայում են:



ասած՝ մոտ 26 միլիոն եվրո է հատկացվել բարձրագույն կրթության առաջին և երկրորդ աստիճաններում 11 990 ուսանողների անվճար կրթությանը:

Նույն թվականին մասնագիտական կրթության բյուջեի 68.8%-ը հատկացվել է ուսանողների 58%-ի ուսման վարձի վճարմանը, այսինքն՝ մոտ 23 միլիոն եվրո՝ 18 300 ուսանողների անվճար կրթության համար⁶²: Սա ՄԿՈՒ ոլորտում կրթաթոշակների դրական վերանայման քաղաքականության ֆինանսական արտահայտությունն է⁶³:

Անվճար կրթություն և կրթաթոշակ ստացող ուսանողների համամասնությունը, ՄԿՈՒ և բարձրագույն կրթության մակարդակներ

Կրթական մակարդակ	Անվճար կրթություն		Ուսանողական կրթաթոշակներ	
	Անվճար կրթություն ստացող ուսանողների ընդհանուր թվի %	Անվճար կրթության բյուջեն ծրագրի բյուջեի համեմատ, %	Կրթաթոշակ ստացող ուսանողների ընդհանուր թվի %	Կրթաթոշակների բյուջեն ծրագրի բյուջեի համեմատ, %
ՄԿՈՒ	58%	68.8%	24.4%	8.6%
Բարձրագույն կրթություն	18%	83.6%	11.4%	8.7%

⁶² Հաշվարկները կատարվել են ՀՀՎԿ տվյալների (https://armstat.am/file/article/socsit_2023_6.pdf) և 2023 թվականի պետբյուջեի տվյալների հիման վրա:

⁶³ 2023 թվականին վերանայվել է ՄԿՈՒ ոլորտի կրթաթոշակային քաղաքականությունը: Երիտասարդներին դեպի տնտեսության համար առաջնահերթ համարվող մասնագիտություններ, ինչպիսիք են գյուղատնտեսությունը, արդյունաբերությունը և շինարարությունը, գրավելու համար 2023/2024 ուսումնական տարվակից կրթաթոշակի չափը բարձրացվել է մինչև ամսական 50 000 դրամ՝ նախնական մասնագիտական կրթության ոլորտում ներկայիս 4 650 դրամի և միջին մասնագիտական կրթության ոլորտում 4 750 դրամի փոխարեն, ինչը նպաստում է այս մասնագիտություններով ուսանողների ընդգրկվածության աճին:

Կրթաթոշակը տրամադրվում է հետևյալ չափերով՝

- ՀՀ կառավարության կողմից յուրաքանչյուր տարի հաստատված առաջնահերթ և կարևոր ոլորտների մասնագիտությունների ցանկով հիմնական կրթության հիմքով ընդունված ուսանողներին առաջին կուրսում տրամադրվում է 50000 դրամի չափով կրթաթոշակ, իսկ հաջորդ կուրսերում՝ նախորդ ուսումնական տարվա արդյունքներով: Միայն «գերազանց» և (կամ) «լավ» գնահատականներ ունենալու դեպքում՝ 50000 դրամի չափով, իսկ 75 տոկոսից ոչ պակասը «գերազանց» և (կամ) «լավ» գնահատականներ ունենալու դեպքում՝ 40000 դրամի չափով:
- «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» կամ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքներով սահմանված սոցիալական խմբի, ինչպես նաև սահմանամերձ և բարձրեռնային բնակավայրերի ուսումնական հաստատության ուսանողներին՝ գերազանց առաջադիմության դեպքում՝ 25000 դրամի չափով կրթաթոշակ:

2.2 Ռեսուրսների հատկացում

Բյուջեի բաշխումը կրթության տարբեր մակարդակների միջև

Կրթության բյուջեն 2024 թվականին ներառում է 12 ծրագիր՝


- Մասնագիտական կրթություն և ուսուցում
- Բարձրագույն և հետբուհական կրթություն
- Հանրակրթություն
- Արտադպրոցական դաստիարակություն
- Ապահով դպրոց
- Կրթության որակի ապահովում
- Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում
- Սփյուռքի հետ համագործակցության զարգացում
- Տոեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրում
- Նախադպրոցական կրթություն
- Դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացում (ԱԶԲ աջակցություն)
- Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում

Բացարձակ թվերով՝ կրթական ոլորտի ծրագրերի բյուջեն հինգ տարվա ընթացքում աճել է՝ ՄԿՈՒ՝ 25.5%-ով, բարձրագույն և հետբուհական կրթություն՝ 16%-ով, հանրակրթություն՝ 22.1%-ով:

Վերջին հինգ տարվա ընթացքում ամենամեծ պետական ծախսերը հատկացվել են հանրակրթության ծրագրին՝ միջին կտրվածքով կազմելով կրթության բյուջեի 63%-ը: 2024 թվականին, համաձայն Կրթության մինչև 2030 թվականի զարգացման ծրագրի, կրթության բյուջեում ներդրվել է «Հանրակրթական դպրոցների և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում և բարելավում» նոր ծրագիրը, որը կապիտալ ներդրումների ծրագիր է և կլանել է կրթության ընդհանուր բյուջեի 33%-ը:



Գծապատկեր 21. Կրթության պետական բյուջեի բաշխումը (հաստատված բյուջե)՝ ըստ ծրագրերի, 2020-2024 թթ.




Աղբյուր՝ Ֆինանսների նախարարություն և ԵԿՀ հաշվարկներ: Ծանոթագրություններ. * Նախքան 2024 թվականը Նախադպրոցական կրթության, Հանրակրթական և Նախադպրոցական հաստատությունների հիմնական ծրագրերը ներառված էին Հանրակրթության մեջ. 2024 թվականի ընդհանուր գումարը կազմում է կրթության ընդհանուր բյուջեի 78%-ը: ** Ապահով դպրոցը, Դպրոցների սեյսմիկ անվտանգությունը (ԱԶԲ աջակցություն), Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրումը և Սկյուռքի հետ համագործակցությունն առանձին ծրագրեր են, որոնք այստեղ խմբավորված են հարմարության նկատառումներով:



Հանրակրթության ծրագիրը ներառում է. (i) տարրական կրթություն, (ii) հիմնական կրթություն և (iii) միջնակարգ կրթություն, որոնցից յուրաքանչյուրը ներառում է ընդհանուր, հատուկ և մասնագիտացված կրթության դպրոցներ: Ծրագիրը ներառում է նաև «օժանդակ միջոցառումներ», որոնք ուղղված են հանրակրթության բոլոր մակարդակներին աջակցելուն: 2023/2024 ուսումնական տարում (2023 թ. ֆինանսական տարի) հանրակրթության ծրագրի 83%-ը հատկացվել է վերը նշված երեք կրթական մակարդակներին, իսկ 16.9%-ը՝ օժանդակ միջոցառումներին, որոնք ներառում են ավելի քան 20 միջոցառում (ենթածրագրեր), այդ թվում՝ դասագրքերի տրամադրում, ուսուցիչներին տարբեր լրացուցիչ վճարումներ/խթաններ, մեթոդական աջակցություն և այլն:

Հանրակրթության երեք մակարդակների միջև բյուջեի բաշխումը հրաշալիորեն համապատասխանում է այս կրթական մակարդակների համեմատական կշռին՝ սովորողների թվի առումով՝ դպրոցների ֆինանսավորման բանաձևի շնորհիվ (Գծապատկեր 22):

Գծապատկեր 22. Հանրակրթության բյուջեի բաշխվածությունը և սովորողների թիվը՝ ըստ կրթական մակարդակի, 2024 թ.



Աղբյուրը՝ ԿԿՏՀ, Ֆինանսների նախարարություն և ԵԿՀ-ի հաշվարկներ

Բյուջեի «Կրթության որակի ապահովում» ծրագիրը ներառում է բոլոր կրթական մակարդակներին աջակցելու միջոցառումներ: Դրանք հիմնականում մասնագիտացված հաստատությունների (օրինակ՝ Կրթության և գիտության պետական կոմիտե) ծառայություններն են, ինչպես նաև Համաշխարհային բանկի կողմից տրամադրված վարկային միջոցների հաշվին կապիտալ ներդրումները:

Բյուջեի բաշխումը ըստ տնտեսական հողվածների. կապիտալ ծախսերի առաջնահերթություն

2020 և 2021 թվականներին կապիտալ ծախսերի մասնաբաժինը կրթության ընդհանուր բյուջեում կազմել է համապատասխանաբար 3.74% և 3.62%: Սակայն հաջորդ տարիներին այն զգալիորեն աճել է՝ 2022-2023 թվականներին միջինը մինչև 16.4%՝ **հասնելով 40.7%-ի (մոտ 260 միլիոն եվրո)** 2024 թվականին: Վերջինս հիմնականում կապված է նոր՝ 1236 ծրագրի՝ «Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում» ներդրման հետ, որի նպատակն է ծրագրի ավարտին ունենալ շահագործման հանձնված 500 նախադպրոցական և 300 հանրակրթական հաստատություն (կառուցված, վերանորոգված կամ արդիականացված):

Ընթացիկ ծախսերի բյուջեն բաղկացած է ստորև բերված դասակարգումներից՝

- սուբսիդիաներ. կազմակերպությունների կողմից կառավարության հանձնարարականների կատարման ընթացքում կրած ծախսերի փոխհատուցում՝ սահմանված գներով: Սուբսիդիաները տրամադրվում են բոլոր մակարդակների հանրակրթական հաստատությունների աշխատանքը և գործունեությունը ֆինանսավորելու համար.
- դրամաշնորհներ. հիմնականում տրամադրվում են ԿԳՄՄՆ-ի միջոցով կրթության ոլորտում իրենց կանոնադրական գործառույթները կատարող այն կազմակերպություններին ու հաստատություններին, որոնք աջակցում կամ ապահովում են կրթական ծրագրերի իրականացումը.
- սոցիալական նպաստներ և կրթաթոշակներ. (i) ուսանողական կրթաթոշակներ և (ii) ուսանողական նպաստներ, ինչը (ա) ըստ երկրային ներառում է ուսուցիչների աշխատավարձերը և ՄԿՈԻ և բարձրագույն ու հետբուհական կրթության ծրագրերի շրջանակներում հաստատությունների պահպանման ծախսերը: Այս բաղադրիչը գնահատվում է դասարանների քանակի/ուսուցչի դրույքաչափի հարաբերակցությամբ, և (բ) ուսուցիչներին և ուսանողներին տրամադրվող նպաստներ այլ ծրագրերի շրջանակներում (օրինակ՝ տրանսպորտային ծախսերի փոխհատուցում, ուսուցիչների ատեստավորում և այլն):
- Ծառայությունների ձեռքբերում:

Չափի առնելով պետական բյուջեի տնտեսական դասակարգումները՝ հնարավոր չէ առանձնացնել և տարբերակել ուսումնական հաստատությունների աշխատավարձերը, պահպանման և այլ ծախսերը:



Բյուջեի ըստ տնտեսական դասակարգման վերլուծության առանցքային դիտարկումն այն է, որ բյուջետային միջոցները Հանրակրթության ծրագրին հատկացվում են հիմնականում սուբսիդիաների միջոցով, մինչդեռ ՄԿՈՒ և բարձրագույն ուսումնական հաստատությունները ֆինանսավորվում են սոցիալական նպաստների և կրթաթոշակների միջոցով:

2024 թվականի ֆինանսական տարում կապիտալ ծախսերը կազմել են կրթության բյուջեի 40.65%-ը, իսկ ընթացիկ ծախսերը՝ 59.35%-ը:

Ռեսուրսների հատկացումը դպրոցներին

2023/2024 ուսումնական տարվանից սկսած հանրակրթական հաստատությունների համար ֆինանսավորման նոր բանաձևը սովորողների թվի փոխարեն

ֆինանսավորման հաշվարկի հիմնական հարաչափ է ընդունում յուրաքանչյուր դպրոցի դասարանների քանակը, սակայն դրա ազդեցությունը դեռևս պետք է գնահատել: Ըստ դասարանների թվի ֆինանսավորման բանաձևի համաձայն

(կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 1481 որոշում)⁶⁴ դպրոցի բյուջեն գնահատվում է 1/ դասարանների միջին թվի, 2/ մեկ դասարանին ընկնող ամսական ուսուցչական դրույքների թվի, 3/ ուսուցչական մեկ դրույքի համար սահմանված նվազագույն աշխատավարձի չափի, 4/ ուսուցչական, վարչական և կառավարչական անձնակազմի համար նախատեսվող լրավճարի, 5/ սննդի և դասագրքերի և այլ ծախսերի հիման վրա: Բանաձևը⁶⁴ կիրառվել է (1352-ից) 1120 պետական դպրոցներում:

Այնուամենայնիվ, «փոքր չափի» դպրոցների համար բավարար ֆինանսավորում ապահովելու համար, կառավարության վերոնշյալ որոշման մեջ (5-րդ կետ) նշվում է, որ մեկ դասարանի հաշվով ֆինանսավորման բանաձևը չի կիրառվի վերակառուցման կամ վերակազմակերպման համար կրթական որակյալ ծառայությունների հասանելիության ապահովման ծրագրում ներառված դպրոցների համար: Սա վերաբերում է ամբողջ երկրի 232 դպրոցների, այսինքն՝ տարրական կրթության մակարդակում 73-ից պակաս, հիմնական կրթության (միջնակարգ դպրոց) մակարդակում՝ 163-ից պակաս և միջնակարգ կրթության (ավագ դպրոց)

⁶⁴ Բանաձևում կիրառվող բոլոր նորմատիվներն ու գործակիցները մանրամասն ներկայացված են ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 79 հրամանում՝ դրույքաչափերը, աշխատավարձերը և այլ կետեր սահմանելու մանրամասն կանոններով: Դասարանների քանակը և դասարաններում աշակերտների թիվը ձևավորվում են Առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 28-ի թիվ 12 հրամանով հաստատված նորմերի հիման վրա, որով սահմանվում է սանիտարահիգիենիկ պայմանների, դասարանների ֆիզիկական չափումների հետ կապված յուրաքանչյուր կողմի մանրամասն չափորոշիչներ, և այլն:



մակարդակում՝ 208-ից պակաս աշակերտ ունեցողներին (ԿԳՄՍ Նախարարի 2023 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 1790-Ա/2 հրաման):

Մինչ օրս այս փոփոխության ազդեցությունը գնահատելու համար ոչ մի մանրակրկիտ վերլուծություն չի իրականացվել:

3. Կառավարման հարցերի վերլուծություն

3.1 Ինստիտուցիոնալ կառուցվածք, պատասխանատվություն և հաշվետվողականություն

ՀՀ կրթական համակարգը, որը կառավարվում է առանձին Նախարարության կողմից՝ տարբեր գործադիր մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և ԿԳՄՍՆ ապակենտրոնացված ծառայությունների հետ միասին, բախվում է պարտականությունների անորոշ սահմանազատման, թույլ համակարգման և սահմանափակ համագործակցության հետ կապված խնդիրների: Հաջորդ բաժնի ուշադրության առանցքում կենտրոնական մակարդակն է, իսկ մյուս բաժինը կանդրադառնա մարզային, տեղական (համայնքային) և դպրոցական մակարդակներին վերաբերող խնդիրներին:

Ընդհանուր առմամբ, բացակայում են ԿԳՄՍՆ-ի վերահսկողության ներքո գտնվող հաստատությունների աշխատակցի արդյունավետությունը պարբերաբար գնահատելու համար համակարգված մեխանիզմներ, անկախ նրանից՝ դրանք կենտրոնական, մարզային, թե՛ տեղական մակարդակում են. դպրոցների կանոնավոր հետազոտություններ չեն կատարվում, ոչ էլ արտապատվիրակվում են հետազոտական ընկերություններին՝ Նախարարության հետ առնչություն ունեցող հաստատությունների, մարմինների կամ կառույցների գործունեության ուժեղ և թույլ կողմերը բացահայտելու համար:

Կենտրոնական մակարդակի բարդ ինստիտուցիոնալ պատկերը. ԿԳՄՍՆ-ն և գործադիր մարմինները (կամ լիազորված մարմինները)

Հիմնվելով կենտրոնական մակարդակի ինստիտուցիոնալ կառուցվածքի համապարփակ քարտեզագրման վրա, որը ներկայացված է ստորև բերված տեքստային դաշտում՝ կարելի է առանձնացնել մի քանի խնդիր:



Մինչև 2019 թվականը Կրթության և գիտության նախարարությունը (ԿԳՆ) այն լիազորված մարմինն էր, որը պատասխանատու էր Հայաստանի Հանրապետությունում կրթության և գիտության ոլորտի քաղաքականության մշակման և իրականացման համար: 2019 թվականին այս նախարարությունը, միավորելով երկու այլ՝ Մշակույթի նախարարությունը և Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը, վերակազմակերպվեց Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (ԿԳՄՄ)՝⁶⁵:

Նախարարության կայքում հասանելի «Հաստիքացուցակ» փաստաթղթի համաձայն⁶⁶ ներկայումս նախարարությունն ունի 333 հաստիք: Նախարարն ունի վեց տեղակալ, տեղակալներից մեկը վերահսկում է հանրակրթության, ինչպես նաև նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման վարչությունների աշխատանքը: Փոխնախարարներին նշանակում է վարչապետը: Փոխնախարարի պաշտոնը նախկինում համարվում էր հայեցողական, սակայն 2018 թվականին ընդունված «Հանրային ծառայության մասին» օրենքի համաձայն՝ այն դարձել է քաղաքական պաշտոն: Միավորված ԿԳՄՄ-ն ունի 12 հիմնական («տեխնիկական») կառուցվածքային ստորաբաժանում⁶⁷, ի տարբերություն նախկինում երեք առանձին նախարարությունների միասին ունեցած 18 հիմնական կառուցվածքային ստորաբաժանումների⁶⁸: Կան նաև ինը օժանդակ կառուցվածքային ստորաբաժանումներ⁶⁹, որոնք իրականացնում են աշխատակազմի կառավարման, իրավաբանական, հաշվապահական և այլ վարչական գործառնություններ և անմիջականորեն հաշվետու են նախարարության գլխավոր քարտուղարին, որը քաղծառայող է:

2020 թվականին Ռազմամարզական և արտադպրոցական կրթության վարչությունը միացվեց **Հանրակրթության վարչությանը**, և վերջինս՝ իր 19 աշխատակիցներով, ստանձնեց նաև արտադպրոցական կրթության համար պատասխանատվությունը: Ներկայումս այն ունի երեք բաժին՝ (ա) Հանրակրթության և արտադպրոցական ծրագրերի մշակում և իրականացում, (բ) Հանրակրթության և արտադպրոցական կրթության քաղաքականության մշակում և վերլուծություն, (գ) Հանրակրթության և արտադպրոցական հաստատությունների համակարգում: Առաջին բաժինը ձևավորվել է Նախադպրոցական և միջնակարգ կրթության քաղաքականության մշակման և վերլուծության բաժնի և Նախադպրոցական և միջնակարգ կրթության բաժնի միավորման արդյունքում: Մյուս երկու բաժինները նորաստեղծ են:

Կրթության հետ կապված մյուս հիմնական ստորաբաժանումներն են՝ **Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչությունը**, ներառյալ մասնագիտական կրթության և ուսուցման համակարգման բաժինը, մասնագիտական կրթության և ուսուցման քաղաքականության մշակման և ռազմավարության բաժինը, ինչպես նաև **լրացուցիչ և շարունակական կրթության բաժինը**:

⁶⁵ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենք, 2019թ.:

⁶⁶ Նախարարության կառուցվածքը ներկայացված է իրենց կայքում՝ «Նախարարության կառուցվածք» բաժնում (<https://escs.am/am/static/structura>), ինչպես նաև «Հաստիքացուցակ» վերնագրով փաստաթղթում, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://escs.am/files/files/2025-08-19/acb5843442e01217261ef4d928e6858e.pdf>: Այս 333 հաստիքները չեն ներառում Լեզվի կոմիտեի, Լեզվի վերահսկողության բաժնի և Վարչական իրավախախտումների բաժնի աշխատակազմերը:

⁶⁷ Համաձայն ԿԳՄՄ 2019 թվականին հաստատված կանոնադրության (<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=163434>) պետք է լինի 11 գլխավոր («տեխնիկական») կառուցվածքային ստորաբաժանում, սակայն նախարարության պաշտոնական կայքում (<https://escs.am/en/static/structura>) դրանք 12-ն են:

⁶⁸ Բոլոր հիմնական կառուցվածքային ստորաբաժանումներն ունեն կանոնադրություն, որով սահմանվում են տվյալ ստորաբաժանման նպատակները, խնդիրները, գործառնությունները և կառուցվածքը՝ <https://escs.am/am/static/charter>:

⁶⁹ Կրկին, ԿԳՄՄ կանոնադրության համաձայն, պետք է լինի 12 օժանդակ ստորաբաժանում, սակայն նախարարության պաշտոնական կայքում ներկայացված են 9-ը:



Ռազմավարական պլանավորման և մոնիթորինգի վարչությունը⁷⁰ կրթական գործունեության կարևոր բաղադրիչներից է: Վարչությունն ունի ինը աշխատակից՝ ներառյալ բաժնի վարիչ, չորս աշխատակից ներգրավված են ռազմավարական պլանավորման բաժնում, իսկ մյուս չորսը՝ մոնիթորինգի բաժնում: Չնայած պաշտոնների պաշտոնական անձնագրերի համաձայն՝ յուրաքանչյուր բաժնից միայն մեկ աշխատակից է պատասխանատու կրթության համար⁷¹, վարչության կողմից վերահսկվող ոլորտների լայն շրջանակի համեմատ աշխատակիցների համեմատաբար փոքր թվի պատճառով երկու բաժնի աշխատակիցներն էլ, անհրաժեշտության դեպքում, կատարում են նաև մյուս ոլորտներին վերաբերող աշխատանքներ, և հակառակը, մյուս աշխատակիցներն էլ հաճախ ներգրավված են կրթության հետ կապված գործողություններում: Վարչության կանոնադրության համաձայն, ի թիվս այլ բաների, վարչության նպատակներն ու խնդիրներն են՝

- * երկրի պետական քաղաքականության մշակում կրթության, սպորտի, մշակույթի և երիտասարդության հարցերի ոլորտներում,
- * կրթական, սպորտի, մշակույթի և երիտասարդության հարցերի միջնաժամկետ և երկարաժամկետ պետական ծրագրերի մշակում և մոնիթորինգ.
- * նպատակային ծրագրերի իրականացում՝ կրթության զարգացման պետական ծրագրի հիման վրա:

Լիցենզավորման վարչությունը կրթության ոլորտում ԿԳՄՍՆ հիմնական կառուցվածքային ստորաբաժանումներից մեկն է: Վարչության կազմում գործում է երկու՝ (ա) լիցենզավորման և թույլտվությունների ու (բ) մոնիթորինգի և վերլուծության բաժին: Վարչությունը ղեկավարվում է «Լիցենզավորման մասին» օրենքով և «Կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման կարգը հաստատելու մասին» կառավարության որոշմամբ (Կառավարություն, 2009թ.):

Գոյություն ունեն նաև մի շարք կառույցներ, որոնք աջակցում են նախարարությանը իրենց իրավասության ներքո գտնվող ոլորտների կառավարման գործում.

* **Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե.** Կոմիտեն ստեղծվել է 2023 թվականին ԿԳՄՍՆ իրավասության ներքո և ապահովում է երկու ոլորտների համագործակցությանն ու ինտեգրմանն ուղղված պետական քաղաքականության իրականացումը: Այն պատասխանատու է նախկինում երեք կառույցների՝ Գիտության կոմիտեի, ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի և ԿԳՄՍՆ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչության հետ կապված գործունեության համար:

* **Կրթական ծրագրերի կենտրոն (ԿԾԿ).** այն համակարգում է Համաշխարհային բանկի վարկային ծրագրերի իրականացումը:

* **Գնահատման և թեստավորման կենտրոն (ԳԹԿ).** այն պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որն անցկացնում է կենտրոնացված պետական ավարտական քննությունները, հիմնական դպրոցի ավարտական քննությունները, ազգային ստուգատեսներ և ուսումնական հաստատությունների արտաքին գնահատումների վերլուծություն: Այն համակարգում է Հայաստանի մասնակցությունը միջազգային գնահատման ուսումնասիրություններին և մշակում է ուսուցիչների կամավոր ատեստավորման քննական թեստերը⁷²:

⁷⁰ ԿԳՄՍՆ Չարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչությունը 2023 թվականին վերակազմակերպվել և վերանվանվել է Ռազմավարական պլանավորման և մոնիթորինգի վարչություն: Վերջինիս կանոնադրությունը հաստատվել է, բայց դեռևս հրապարակված չէ՝ նախարարության կայքում:

⁷¹ <http://hesc.am/am/e05fcf734e3a707251301869>

⁷² ԳԹԿ-ի կանոնադրությամբ սահմանվել են հետևյալ գործառույթները՝ գիտելիքների, կարողությունների ու հմտությունների գնահատման չափանիշների և դրանց իրականացման մեխանիզմների ու գործիքակազմի մշակման ապահովում, սովորողների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների գնահատման նպատակով նյութերի և



*** Կրթության զարգացման և նորարարության ազգային կենտրոն (ԿՉՆԱԿ).** այն հիմնադրամ է, նախկին Կրթության ազգային ինստիտուտի (ԿԱԻ – մարզերում ունեւր մասնաճյուղեր՝ մոտ 400 աշխատակիցներով) իրավահաջորդը, որը պատասխանատու է ուսումնական գործընթացների կազմակերպման և մոնիթորինգի, հանրակրթական չափորոշիչների մոնիթորինգի և կրթական բովանդակության մշակման համար: Այն նաև ներառում է Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնը (ՄԿՈԻՉԱԿ), որը զբաղվում է մասնագիտական կրթության բովանդակային հարցերով:

*** Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն (ԿՏԱԿ).** պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որը վարում է կրթության ոլորտի վարչական գրանցամատյանները (ԿՎՏՅ) և իրականացնում է էլեկտրոնային կառավարում, ՏՅՏ բովանդակության մշակում և հեռավար ուսուցման ծրագրեր:

*** Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն (ՈԱԱԿ).** հիմնադրվել է 2008 թվականին, ունի նախնական, մասնագիտական և բարձրագույն կրթության ոլորտում որակի ապահովման գործընթացների իրականացման և վերահսկման լիազորություն:

*** Դասագրքերի և ՏՅՏ ոլորտի շրջանառու հիմնադրամ (ԴՇՅ).** հիմնադրամը համակարգում է դասագրքերի ստեղծման մրցույթների կազմակերպումը, ինչպես նաև դասագրքերի հրատարակումն ու տարածումը:

*** Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնը (ՀՄԿ)**՝ իր 24 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններով կամ արտապատվիրակման ծառայությունների բազաներով պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որը պատասխանատու է աշակերտների կարիքների գնահատման և դպրոցների/լաբորատորիաների ենթակառուցվածքները հատուկ կարիքներ ունեցող երեխաներին հարմարեցնելու համար:

*** Կրթության տեսչական մարմին (ԿՏՄ).** այս մարմինը հաշվետու է կառավարությանը, իրականացնում է պետական վերահսկողություն կրթական ոլորտում օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ և նպաստում է որակյալ կրթության ապահովմանը՝ իրականացնելով կանխարգելիչ միջոցառումներ և խորհրդատվական գործունեություն:

Կա նաև **Մասնագիտական կողմնորոշման և կարողությունների զարգացման կենտրոն,** որը գործում է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ԱՄՅՆ) իրավասության ներքո: Կենտրոնը սերտորեն համագործակցում է ողջ կրթական համակարգի հետ և ունի առաքելություն՝ ինստիտուցիոնալացնելու և զարգացնելու բնակչությանը մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ծառայությունների ցկյանս մատուցման համակարգ:

Ըստ Էուրոյան՝ ԿԳՄՄՆ-ն հիմնականում պատասխանատու է կրթության ոլորտի քաղաքականության մշակման համար, իսկ կրթական համակարգի կառավարման գործում կատարման ենթակա տարբեր գործառույթները վստահված են նրա իրավասության ներքո գտնվող **մասնագիտացված կառույցներին** (նաև կոչվում են լիազորված մարմիններ): Վերջին երկու տասնամյակների ընթացքում այս կառույցների թիվը

առաջադրանքների տրամադրման ապահովում, առաջադրանքների տրամադրում, ուսումնական գործընթացում գնահատման նոր ձևերի արդյունավետ օգտագործման նպատակով կրթության համակարգի մանկավարժներին մեթոդական օժանդակության ցուցաբերում, սովորողների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների գնահատման ազգային և միջազգային ստուգատեսների անցկացում (ԳԹԿ կանոնադրություն, 2004. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=54950>):




զգալիորեն աճել է: Երկու մակարդակներում էլ՝ և՛ ԿԳՄՍՆ-ում, և՛ կառույցներում, բազմապիսի հարցեր պետք է դիտարկել:

Կրթության ոլորտում միջգերատեսչական համակարգումը, մի կողմ թողնելով համագործակցությունը, բավականին թույլ է:

ԿԳՄՍՆ մակարդակում կրթության տարբեր հատվածների համար պահանջվում են այլ նախարարությունների հետ քաղաքականության համակարգված մշակման և կառավարման ջանքեր՝ ընտանիքներին համալիր հանրային ծառայություն մատուցում ապահովելու համար, սակայն այս փոխգործակցությունը մինչ օրս մեծ մասամբ անբավարար է եղել, մասնավորապես՝ **ազգային և ենթազգային մակարդակներում միջգերատեսչական համակարգման ֆորմալ շրջանակների բացակայության պատճառով:** Օրինակ՝ նախադպրոցական կրթության ծառայությունները նախատեսվում է իրականացնել չորս նախարարությունների համատեղ ջանքերով. ԿԳՄՍՆ-ն պատասխանատու է քաղաքականության մշակման համար, ապահովում է մեթոդական կողմերը և մանկավարժական անձնակազմի վերապատրաստումները, ինչպես նաև Լիցենզավորման վարչության միջոցով վերահսկում է նախադպրոցական կրթության իրականացման որակը (Կրթության տեսչական մարմինը (ԿՏՍ) ներգրավված է արտաքին մոնիթորինգի աշխատանքներում): Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (ՏԿԵՆ) պետական բյուջեից միջոցներ է հատկացնում այն համայնքներին, որոնք ստանում են պետական սուբսիդիաներ՝ համայնքային նախադպրոցական հաստատությունները ֆինանսավորելու համար: Առողջապահության նախարարությունն ունի ուսումնական հաստատություններում սանիտարական (WASH) պայմանների իր սեփական չափորոշիչները և ծառայություններ է մատուցում այդ նախադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների բարեկեցության ապահովման ուղղությամբ: Աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարությունը պատասխանատու է աղքատության նվազեցմանը և երեխաների զարգացման համար բարենպաստ սոցիալական պայմանների ստեղծմանն ուղղված միջոցառումների ներդրման համար⁷³: Սակայն այս նախարարությունները չունեն համակարգման շրջանակ՝ իրենց առաքելությունը հետևողականորեն իրականացնելու համար: Նույն կերպ, խոցելի խմբերի երեխաների կամ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու և պահելու համար կպահանջվի ԿԳՄՍՆ-ի և ԱՍՅՆ-ի միջև ֆորմալ համագործակցության ուղիներ՝ դպրոցական մակարդակում համաձայնեցված օգնության,

⁷³ Integrity of preschool education in Armenia: an INTES assessment. Milovanovitch & Bloem, 2020.



սոցիալական ծառայությունների և ֆինանսական օգնության տրամադրման, ինչպես նաև դեպքերի արդյունավետ վարման համար:

Ինչ վերաբերում է գործադիր կառույցներին կամ, այսպես կոչված, լիազորված մարմիններին, ապա այստեղ նույնպես ի հայտ են գալիս տարբեր խնդիրներ և մարտահրավերներ:

Նախ, այս կառույցներից շատերը չեն ստանում այն մարդկային, ֆինանսական կամ կազմակերպչական ռեսուրսները, որոնք անհրաժեշտ են իրենց գործառնությունները կատարելու համար:

Օրինակ՝ **Կրթության զարգացման և նորարարության ազգային կենտրոնը (ԿՉՆԱԿ)** պատասխանատու է ուսուցիչների վերապատրաստման համար, որը 2019 թվականից ի վեր այս դերում փոխարինել է Կրթության ազգային ինստիտուտին (ԿԱԻ): Սակայն նորաստեղծ ԿՉՆԱԿ-ն ունի զգալիորեն ավելի փոքր աշխատակազմ (2024 թվականի առաջին եռամսյակում այն նույնիսկ կրճատվել է մինչև 72 աշխատակցի՝ ի տարբերություն նախկին ԿԱԻ-ի 400 աշխատակցի), **չունի մասնաճյուղեր մարզերում** և չի անցկացնում ուսուցիչների լայնածավալ վերապատրաստումներ: ԿՉՆԱԿ-ի կանոնադրությունը նաև ներառում է բարձրագույն կրթության ոլորտում Բոլոնիայի գործընթացին աջակցելու մասին դրույթ: Սակայն ԿՉՆԱԿ-ը չունի բարձրագույն կրթության ոլորտում կազմակերպչական կարողունակություններ և մասնագիտացված ստորաբաժանումներ⁷⁴:

Բացի այդ՝ ուսուցիչների և տնօրենների վերապատրաստման ազատականացման հետ մեկտեղ, որն այժմ վերապահված է բաց մրցույթով ընտրված երրորդ կողմերին, ԿԳՄՄՆ-ն և ԿՉՆԱԿ-ն իրականացնում են վերահսկողության, մոնիթորինգի և գնահատման գործառնություններ: Սա կասկածի տակ է դնում այն, թե որքան արդյունավետ կարող է ԿՉՆԱԿ-ը երաշխավորել որակը և արդիականությունը, ինչպես նաև նպաստել նորարարության ստեղծմանը, տարածմանը և ինստիտուցիոնալացմանը, հատկապես հաշվի առնելով, որ մասնավոր դերակատարները, հավանաբար, անհրաժեշտ ջանքեր ու ֆինանսական ռեսուրսներ չեն ներդնի այս նպատակներին հասնելու համար: Ավելին, նման դերը կատարելու համար ԿՉՆԱԿ-ը չունի ո՛չ անհրաժեշտ բյուջեն, ո՛չ էլ մարդկային ռեսուրսներ:

⁷⁴ ԿՉՆԱԿ-ի կանոնադրություն, 2021 թ. https://kznakhimnadram.blogspot.com/p/blog-page_89.html:



Առանձին հարց է այն, թե որքանով է ռացիոնալ և արդյունավետ այդքան փոքր և սահմանափակ ռեսուրսներով երկրում այդքան շատ մարմիններ ստեղծելը: Դա համակարգման հետ կապված մեծ ծախսեր է առաջացնում:

Երկրորդ, որոշ մարմիններ չունեն այն իրավական լիազորությունների շրջանակը, որը նրանց հնարավորություն կտար իրականացնել համալիր գործառույթ կամ առնվազն համաձայնեցված կերպով այն համակարգել համապատասխան ինստիտուցիոնալ գործընկերների հետ:

Օրինակ, **ԿՏՄ-ն** հիմնականում կենտրոնանում է ստուգումների և օրենսդրության պահանջների պահպանման վերահսկողության վրա, մինչդեռ դպրոցական այցելությունները (սահմանափակ թվով⁷⁵ մարդկային և տրանսպորտային ռեսուրսների բացակայության պատճառով) կարելի է օպտիմալացնել՝ օգտագործելով նաև ուսուցիչների և դպրոցների տնօրենների կարողությունների զարգացման կարիքները բացահայտելու համար, այդպիսով տեղեկատվական հենք ապահովելով ԿՉՆԱԿ-ի առաջնահերթությունների (կամ, օրինակ, դպրոցների զարգացման ծրագրերի) համար:

Վերջապես, որոշ մարմինների գործառույթները հատվում են՝ առանց հստակ ինստիտուցիոնալ փոխլրացման կամ համակարգման մեխանիզմների:

Օրինակ՝ **Ա՝ ԳԹԿ-ն**, և՛ **ԿՉՆԱԿ-ը**⁷⁶ ներգրավված են **գնահատման հետ կապված հարցերում**: ԿՉՆԱԿ-ն ունի գնահատման նախագծման և մշակման բաժին, և ըստ իր կանոնադրության, ակնկալվում է, որ այն պետք է աջակցի **աշակերտների առաջադիմության գնահատման ազգային և միջազգային ստուգատեսների** համակարգմանը և մշակի դպրոցների համար տարբեր գնահատման գործիքներ, ինչով, իր կանոնադրության համաձայն, կարծես թե, զբաղվում է նաև **ԳԹԿ-ն**⁷⁷: Չնայած տրամաբանորեն ակնկալվում է, որ այս միջոցառումների արդյունքները կծառայեն կրթական

⁷⁵ Օրինակ՝ ՄԿՈՒ ոլորտում 2021-2023 թվականների ընթացքում ԿՏՄ-ն ստուգումներ է իրականացրել 51 ՄԿՈՒ հաստատությունում (31-ը՝ 2021 թվականին, 10-ը՝ 2022 թվականին և 10-ը՝ 2023 թվականին), ինչը չի կազմում բոլոր լիցենզավորված ՄԿՈՒ ծառայություն մատուցող հաստատությունների նույնիսկ մեկ երրորդը:

⁷⁶ Մասնավորապես, ԳԹԿ-ի գործառույթները ներառում են սովորողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների գնահատման համար նյութերի տրամադրումը, ինչպես նաև դրանց գնահատման համար ազգային և միջազգային ստուգատեսների անցկացումը (ՀՀ կառավարություն, 2004թ.): Միևնույն ժամանակ, ԿՉՆԱԿ-ը մշակում է դպրոցների գնահատման տարբեր գործիքներ և աջակցում է սովորողների գնահատումների ազգային և միջազգային ստուգատեսների համակարգմանը (Կրթության զարգացման և նորարարության ազգային կենտրոն, 2022թ.):

⁷⁷ Integrity of preschool education in Armenia: an INTES assessment. Milovanovitch & Bloem, 2020.



«Յաճախ ԿՉՆԱԿ-ը, ԳԹԿ-ն և ԿՏԱԿ-ը մեզ բանավոր հրահանգներ են տալիս, որոնք ենթակա են անհապաղ կատարման, իսկ հետո կատարելու ընթացքում մենք հասկանում ենք, որ այդ հրահանգները հակասում են միմյանց՝ երբեմն խնդիրներ ստեղծելով դպրոցների համար, երբեմն՝ արտաքին գնահատման/ստուգումների ժամանակ: Դժբախտաբար, դպրոցները տուժում են այս չհամակարգված գործողությունից, իսկ հետագայում այդ մարմիններից ոչ մեկը պատասխանատվություն չի ստանձնում դրա համար: Մենք իսկապես վստահ չենք, թե կրթական բարեփոխումների որ մասի համար ով է պատասխանատու»:

Դպրոցի տնօրեն, ՖԻ մասնակից

համակարգի գործունեության վերաբերյալ ԿՉՆԱԿ-ի վերլուծություններին, տեղեկատվության փոխանակման ուղիները հստակ սահմանված չեն:

Մեկ այլ օրինակ է **դասագրքերի ստեղծման** չափորոշիչների մշակման և վերանայման համատեքստը, որտեղ անհրաժեշտ է հստակեցնել նաև **Դասագրքերի և ՏՅՏ շրջանառու հիմնադրամի (ԴՇՅ) և ԿՉՆԱԿ-ի** գործառույթները:

Այս ուղղությամբ ձեռք բերվող որոշակի առաջընթացը կոգեշնչի, որ հետագա ջանքեր գործադրվեն, օրինակ՝ ԳԹԿ-ի և ԿՏԱԿ-ի միջև կրթական արդյունքների չափման համակարգվածության կամ կրթության առանձնահատուկ պայմանների հարցում ՅՄԿ-ի և ԿՉՆԱԿ-ի միջև դերերի ու պարտականությունների հստակ տարանջատման ուղղությամբ՝ համաձայն 2022 թվականին ստորագրված հուշագրի:

Բացի այդ, ինստիտուցիոնալ կառուցվածքը ներկայումս ենթարկվում է որոշ փոփոխությունների, որոնց արդյունավետությունը հարկավոր է մշտադիտարկել, մասնավորապես՝ Գիտության և բարձրագույն կրթության կոմիտեի ստեղծումը կամ Քաղաքացիական ծառայության գրասենյակի կառավարման մեջ վերջերս կատարված փոփոխությունները:



Կրթական համակարգի ամենօրյա աշխատանքում նույնպես կրթական գործունեության նույն ոլորտների համար պատասխանատու շահագրգիռ կողմերի միջև ինստիտուցիոնալ համակարգման բացակայությունը խաթարում է աշխատանքների համաձայնեցվածությունը և խոչընդոտում դրանց լիարժեք ինտեգրումը կրթական բարեփոխումներին: Օրինակ՝ արտադպրոցական միջոցառումները, որը ոչ միայն պատմականորեն կրթական համակարգի կարևոր մասն են կազմում, այլև կարևորագույն ներդրում ունեն անհավասարությունների հարթեցման գործում: Արտադպրոցական հաստատությունների մեծ մասը կառավարվում է համայնքների կողմից, մինչդեռ արտադպրոցական կրթությունն իրականացվում է հինգ հաստատությունների կողմից՝ Հանրակրթության վարչության հսկողության ներքո: Որոշ մարզական հաստատություններ կառավարվում են Սպորտի քաղաքականության վարչության կողմից, իսկ արտադպրոցական կրթություն տրամադրող որոշ հաստատություններ կառավարվում են Մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության կողմից: Հանրակրթության, մշակույթի և սպորտի համար պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը հաճախ համընկնում է համակարգում ներգրավված այլ արտաքին ծառայություններ մատուցողների կամ դերակատարների գործունեության հետ, ինչը որոշակի հստակություն է պահանջում⁷⁸:

Ապակենտրոնացում և հաշվետվողականություն

ԿԳՄՍՆ պարտականությունը, ինչպես ամրագրված է նրա կանոնադրության մեջ, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի տարածքային համաչափ զարգացմանը նպաստելն է, որն ամբողջությամբ չէ արտացոլված քաղաքականության մեջ, քանի որ դրանում մարզերի նկատմամբ տարբերակված մոտեցում չկա: Կազմակերպչական առումով, նախքան ԿԳՄՍՆ-ում վերջերս կատարված կառուցվածքային փոփոխությունները, հանրակրթության վարչության յուրաքանչյուր աշխատակից պատասխանատու էր միայն մեկ մարզային կրթության վարչության հետ աշխատանքները համակարգելու համար, ինչը սահմանափակում էր մարզային կարիքների մասին համեմատական հեռանկար մշակելու հնարավորությունը: Կրթության մարզային վարչությունների հետ կամ դրանցում աշխատող ԿԳՄՍՆ մասնագետների կարողունակությունների ամրապնդումը շարունակում է չափազանց կարևոր լինել:

Բացի այդ, **ԿԳՄՍՆ-ի և կրթության մարզային վարչությունների (որպես ԿԳՄՍՆ-ի ապակենտրոնացված ծառայություններ, որոնք գործում են մարզային իշխանությունների իրավասության ներքո) միջև աշխատանքային**

⁷⁸ Օրինակ՝ Սպորտի քաղաքականության վարչության կանոնադրության մեջ նշված է, որ վարչությունը համակարգում է դպրոցներում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի չափորոշիչների մշակումը և վերահսկում է ուսումնական գործընթացը: Սակայն Հայաստանում դպրոցական առարկայական չափորոշիչների մշակումն իրականացվում է մասնագիտացված աշխատանքային խմբերի կողմից՝ ԿՉՆԱԿ-ի աջակցությամբ, բայց ոչ ԿԳՄՍՆ-ի կողմից:



հարաբերությունները հստակ սահմանված չեն, ինչը դերերի և պարտականությունների հարցում անորոշություններ է առաջացնում:

Օրինակ՝ դպրոցների աշխատանքի գնահատումը ԿԳՄՍՆ-ի և մարզային իշխանությունների համատեղ պարտականություն է, իսկ արտաքին ստուգումների համար պատասխանատու է ԿՏՄ-ն: Այս պայմանավորվածությունը երկրում գնահատման մասնատված և ոչ հետևողական գործընթացների է հանգեցնում:

ԿԳՄՍՆ-ն դպրոցների կառավարման գործընթացների վրա իր ազդեցությունը մեծացրել է այնպիսի միջոցառումների միջոցով, ինչպիսիք են 2009 թվականին առանձին ավագ դպրոցների ստեղծումը (հիմնական դպրոցներից անկախ) և վերջերս դպրոցների տնօրենների հավաստագրման պահանջի ներդրումը: Սակայն լիազորությունների հետ կապված այս տեղաշարժերը նաև նպաստել են ուսումնական հաստատությունների ավելի բազմաչափ և բարդ կառավարմանը:

Մարզպետարանները պատասխանատու են մարզերի տարածքում կրթական քաղաքականության իրականացման ապահովման համար⁷⁹: Սակայն բավարար հստակություն չկա այն հարցում, թե կրթության մարզային վարչությունները և մարզպետները ինչպես պետք է իրականացնեն կրթության ոլորտում իրենց մոնիթորինգային գործառույթները, և ներկայումս նման գործելակերպ փաստացի չկա:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի համաձայն⁸⁰, **համայնքի** ղեկավարը կազմակերպում է **նախադպրոցական և արտադպրոցական** կրթության քաղաքականության իրականացումը իր տարածքում և կառավարում է համայնքային ենթակայության դպրոցների ու մանկապարտեզների հաստատությունների գործունեությունը:

Համայնքների խոշորացման բարեփոխումների շրջանակում նախատեսվում է ընդլայնել համայնքների ներգրավվածությունը դպրոցների կառավարման գործում: Ներկայումս քննարկվում է մարզպետի՝ կրթության ոլորտում լիազորությունների լրիվ կամ մասնակի

⁷⁹ Երբ 1999 թվականին սկսվեց կրթական բարեփոխումների առաջին փուլը, մոտեցումը ենթադրում էր, որ Կրթության նախարարությունը հիմնականում պատասխանատու էր լինելու համակարգի ռազմավարական կառավարման համար, իսկ տարածքային և ինքնակառավարման մարմինները պետք է իրականացնեին դպրոցների ու մանկապարտեզների կառավարումը: Այս տարիների ընթացքում որոշ կրթական համալիրներ, ինչպես նաև հատուկ դպրոցները մնացին նախարարության հովանու ներքո: Այդուհանդերձ, նախարարությունը չձևավորեց ռազմավարական, երկարաժամկետ պլանավորման կարողություններ, իսկ մարզպետարանները չկարողացան զարգացնել տեղի ներուժը՝ տեղական կրթական քաղաքականություն իրականացնելու համար:

⁸⁰ Օրենքի համարը՝ ՅՕ-337, 2002 թ.՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=188985>:



փոխանցումը համայնքներին: Այդուհանդերձ, զգալի ռիսկ կա, որ համայնքային մակարդակում կրթության կառավարման կարողությունների զարգացումն ավելի դժվար կլինի, քան մարզերի մակարդակում⁸¹:

Մարզային և տեղական մակարդակներում մարզպետարանները պատասխանատու են մարզերում պետական քաղաքականության, այդ թվում՝ կրթական քաղաքականության իրականացման համար: Հիմնական դպրոցները (1-9-րդ դասարաններ) և միջնակարգ դպրոցները (1-12-րդ դասարաններ) գործում են Կրթության, մշակույթի և սպորտի մարզային վարչությունների իրավասության ներքո: Նախադպրոցական հաստատությունների կառավարումն իրականացվում է համայնքների կողմից: Առանձին ավագ դպրոցների կառավարվումն իրականացնում ԿԳՄՄՆ-ն:

Յուրաքանչյուր մարզային ինքնակառավարման մարմնում գործում են ապակենտրոնացված ծառայություններ, այդ թվում՝ Կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը, որն իրականացնում է նախարարության տարածքային քաղաքականությունը: «Տարածքային կառավարման մասին» օրենքի համաձայն⁸²՝ մարզպետը կրթության բնագավառում ունի հետևյալ լիազորությունները՝

- * մարզային ենթակայության պետական ուսումնական հաստատություններում իրագործում է պետական հանրակրթական ծրագրեր.
- * կազմակերպում է մարզային ենթակայության պետական ուսումնական հաստատությունների աշխատանքը.
- * ապահովում է մարզային ենթակայության կրթական հաստատությունների շենքերի կառուցումը, պահպանումն ու շահագործումը.
- * իրականացնում է մշտադիտարկում բնագավառում տիրող իրավիճակի վերաբերյալ.

«Կրթության մասին» օրենքի 38-րդ հոդվածը նաև հատուկ ընդգծում է, որ մարզպետները պատասխանատու են դպրոցական տարիքի երեխաների հաշվառման և ուսումնական հաստատություններում նրանց ընդգրկման համակարգման և վերահսկողության համար:

Յուրաքանչյուր մարզպետարանում Կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը սովորաբար ունի կրթության առանձին բաժին՝ ընդհանուր առմամբ հինգից վեց աշխատակիցներով:

Կրթության բնագավառի կառավարումը Հայաստանում բնութագրվում է ապակենտրոնացման բարդ կառուցվածքով: Ըստ օրենքի՝ հանրակրթությունն ապակենտրոնացված է մարզային մակարդակում, իսկ նախադպրոցական կրթությունը՝ համայնքային: Ինչևէ, հիմնական պարտականությունները տեղական իշխանություններից կրկին փոխանցվել են դպրոցներին, ինչն ավելի է բարդացնում համակարգը (Mnatsakanyan, Felder, & Keil, 2023): Ավելին, չնայած տեղական ինքնակառավարման համար նորմատիվ իրավական բազայի առկայությանը, գործնականում պարտականությունների՝ կենտրոնական մակարդակից տեղական մակարդակ փոխանցումը բավարար չափով

⁸¹ Աղբյուրը՝ ֆոկլուս-խմբային քննարկում կրթության մարզային վարչությունների ներկայացուցիչների հետ:
⁸² Օրենքի համար՝ ԴՕ-252-Ն, 2019թ.՝ <https://www.artis.am/DocumentView.aspx?DocID=178970>:



չի ուղեկցվում ո՛չ ռեսուրսների և իրավասությունների, ո՛չ էլ հաշվետվողականության և մոնիթորինգի համապատասխան կառուցակարգերի ապահովմամբ:

Տարածքային կառույցը չունի ինստիտուցիոնալ կարողունակություններ, ինչպես նաև հաշվետվողականության կառուցակարգեր ու գործընթացներ:

Համայնքներն ու համայնքապետարանները⁸³ ԿԳՄՍՆ քաղաքականության սոսկ իրականացնողները չեն, քանի որ նրանք պատասխանատու են նախադպրոցական կրթության և արտադպրոցական գործունեության համար, ինչպես նաև իրենց աշխարհագրորեն իրենց իրավասության ներքո գտնվող դպրոցական տարիքի երեխաների պատշաճ ընդգրկվածության ապահովման համար: Ի թիվս այլ բաների, նրանք նաև պատասխանատու են տարեկան ծախսերի բյուջեի կազմման, աշխատակազմի աշխատավարձերի ֆինանսավորման և ընտրված տնօրենների հետ պայմանագրերի կնքման համար (ՀՀ կառավարություն, 2010 թ.): Նրանց ֆինանսական միջոցները ստացվում են պետական փոխանցումներից և տեղական հարկերից: Համայնքների խոշորացման բարեփոխումների շրջանակում նախատեսվում է հանրակրթական դպրոցների կառավարման գործում կրթության բնագավառի լիազորությունները մարզպետներից ամբողջությամբ կամ մասնակիորեն փոխանցել համայնքներին: Սակայն համայնքային մակարդակում կրթության կառավարման կարողությունների զարգացումը, հավանաբար, ավելի մեծ դժվարություններ կառաջացնի, քան մարզային մակարդակում: Դպրոցների մակարդակում դպրոցների տնօրենները նշել են, որ իրենք չունեն որոշումների կայացման ինքնավարություն, և որ, չնայած դպրոցներին ինքնավարություն շնորհող իրավական դրույթներին, ոչ բոլոր տնօրեններն են օգտվում դրանից, ինչը հանգեցնում է լիազորությունների՝ դպրոցից տեղական մակարդակներ ուժեղ կենտրոնացման (ՅՈՒՆԻՍԵՖ, 2022ա): Ֆինանսավորման բանաձևի փոփոխությունը կարող է վատթարացնել ինքնավարության այս ցածր մակարդակի հետ կապված իրավիճակը:

Հայաստանում ապակենտրոնացմանն ուղղված ջանքերն ավելի են սահմանափակվում անբավարար ռեսուրսների և ենթաազգային մակարդակներում անբավարար կարողունակությունների պատճառով:

Մարզերի ենթակայության տակ գտնվող կրթության, գիտության, մշակույթի և սպորտի մարզային վարչությունների կրթության բաժիններում աշխատող **աշխատակիցների թիվը**

⁸³ Հայաստանում համայնքը խոշորացված համայնքն է, գյուղերի կամ ավանների ամբողջությունը՝ մեկ կենտրոնական, ավելի մեծ բնակավայրի շուրջ: Սա նշանակում է, որ համայնքը (խոշորացված համայնքը) ունի կառավարման միասնական համակարգ՝ համայնքապետ և ավագանի: Համայնքների խոշորացման գործընթացը սկսել է մոտավորապես 2016 թվականից:



փոքր Է (միջինը հինգից վեց աշխատակից Կրթության, մշակույթի և սպորտի մարզային վարչության կրթության բաժնում, և շատ հաճախ նրանք բավարար չափով տեղեկացված չեն իրենց գործառնությունների կամ բարեփոխումների նրբությունների մասին, որոնց պետք է աջակցեն կամ վերահսկեն իրենց իրավասության շրջանակում: Կրթության, մշակույթի և սպորտի մարզային վարչություններում աշխատակիցների թիվն ավելի է նվազել մարզպետարանի աշխատակազմի ներքին վերակառուցման արդյունքում: 2024 թվականի սկզբին Կրթության, մշակույթի և սպորտի վարչությունների մասնագիտացված բաժինները միավորվել են, և աշխատակիցների թիվը կրճատվել է մինչև 7-9՝ կախված մարզային վարչությունից: Ավելին, աշխատակազմը ներգրավված չէ որակավորման բարձրացման ոչ մի նշանակալի ծրագրում (ԵԿԳ ֆոկուս խմբեր, 2024 թվականի աշուն):

Հանրակրթության կառավարման հետ կապված ապակենտրոնացումն ավելի է սահմանափակվում հանրակրթական դպրոցների տնօրենների նշանակման նոր մեխանիզմի ներդրմամբ, որը վերակենտրոնացում է աշխատանքի ընդունման գործընթացի մի մասը⁸⁴: Նախկինում հանրակրթական դպրոցների տնօրենի պաշտոնի թեկնածուներն ընտրվում էին դպրոցի խորհրդում, և հաստատվելուց հետո նշանակվում էին (պայմանագիր էր կնքվում) համապատասխան մարմնի, այսինքն՝ մարզային դպրոցների դեպքում՝ մարզպետների, Երևանի դպրոցների դեպքում՝ քաղաքապետի, բոլոր ավագ դպրոցների դեպքում, անկախ դրանց գտնվելու վայրից, նախարարի կողմից: 2023 թվականի փետրվարից ներդրված մեխանիզմով ստեղծվել են **մասնագիտացված հանձնաժողովներ**, որտեղ համապատասխան թեկնածուները մասնակցում են հարցազրույցի, որի արդյունքում հաստատվում կամ մերժվում է նրանց թեկնածությունը համապատասխան հանրակրթական դպրոցի տնօրենի պաշտոնում, որի համար դիմել են: Մասնագիտացված հանձնաժողովը բաղկացած է յոթ անդամից, որոնցից առնվազն չորսը ներկայացնում են ԿԳՄՍՆ-ն: Միայն այս մասնագիտացված հանձնաժողովի հաստատումից հետո կարող է համապատասխան մարմինը նշանակել տնօրենին (պայմանագիր կնքել նրա հետ)⁸⁵:

⁸⁴ ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=174135>:
⁸⁵ Նոր մեխանիզմի համաձայն՝ հանձնաժողովի որոշումների վերաբերյալ առարկությունները կարելի է ներկայացնել Վերաքննիչ հանձնաժողով: Վերջինս բաղկացած է հինգ անդամից, որոնցից չորսը ներկայացնում են ԿԳՄՍՆ-ն:



«Չնայած վերջին կառուցվածքային փոփոխությունների բերումով մեր լիազորությունները զգալիորեն նվազել են, և ֆորմալ առումով մենք գրեթե միջնորդ ենք դարձել դպրոցների, ԿԳՄՍՆ-ի և դրանց մարմինների միջև, մենք դեռևս ինտենսիվորեն աշխատում ենք մեր մարզի բոլոր դպրոցների հետ՝ նրանց արդյունավետ աշխատանքին աջակցելու համար: Սովորաբար դպրոցների տնօրենների համար մենք առաջին կապող օղակն ենք, երբ նրանք դպրոցի կառավարման տարբեր կողմերի, կրթությունից դուրս մնացած աշակերտների վաղ հայտնաբերման և դպրոց վերադարձնելու հետ կապված տեղեկատվության և խորհրդատվության կարիք ունեն, ինչպես նաև օգնում ենք ռիսկերի կառավարման ծրագրերի հարցում, և այլն»:

Կրթության, մշակույթի և սպորտի մարզային վարչության պետի տեղակալ, ՖԳ մասնակից

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի մարզային տարբեր վարչությունների միջև պաշտոնական հաղորդակցման (Էլ չասած համակարգման) ոչ մի շրջանակ կամ մեխանիզմ գոյություն չունի, որը կկարողանար օգնել նրանց փոխանակվել տեղեկատվությամբ, գործելակերպերով, փորձի փոխանակմամբ ու քաղած դասերով, կամ նույնիսկ փոխգործակցության եզրեր փնտրել իրենց համապատասխան միջամտությունների միջև: ԿԳՄՍՆ-ի և կրթության մարզային մարմինների միջև աշխատանքային հարաբերությունները նույնպես սահմանված չեն:

Ի վերջո, **հաշվետվողականության և մոնիթորինգի** խնդիր կա տեղական մակարդակում, իսկ այդտեղից էլ մինչև կենտրոնական մակարդակ: Մարզային մակարդակում **ԿԳՄՍՆ-ն** չի հետևում տարածքային կրթական քաղաքականության իրականացմանը և **չունի տարբերակված մոտեցում տարբեր մարզերի նկատմամբ** (ՅՈՒՆԻՍԵՖ, 2022ա): Մարզային մակարդակում չկա մոնիթորինգի, հաշվետվողականության կամ գնահատման ստանդարտ, համաձայնեցված մեխանիզմ: Սա նշանակում է, որ ֆինանսական միջոցներն ուղղվում են համայնքներ՝ ըստ ֆինանսավորման բանաձևի, սակայն մինչ օրս ԿԳՄՍՆ-ից դպրոցների գործունեության, կրթության արդյունքների որակի, ինչպես նաև մարդկային ու



Ֆինանսական ռեսուրսների բաշխման և օգտագործման հետ կապված հարցերի վերաբերյալ հետադարձ կապ կամ հաշվետվություն չի պահանջվել:

Որքանով որ ԵԿՀ-ն է պատկերացում կազմել դպրոցների ֆինանսական հաշվետվականության և չափորոշիչների պահանջների պահպանման վերաբերյալ վերջին փոփոխությունների մասին, ԿԳՄՍՆ-ն ԿՏԱԿ-ի առցանց համակարգերում ներդրել է նոր գործողություններ, որոնք թույլ են տալիս որոշակի ֆինանսական մոնիթորինգ իրականացնել դպրոցների նկատմամբ: Սակայն բացակայում են այս մեխանիզմների պաշտոնական նկարագրությունները, որոնք տրամադրվել են դպրոցներին և մյուս բոլոր շահագրգիռ կողմերին՝ համակարգի համապատասխան տվյալների հավաքագրման և պատշաճ վերլուծության նկատմամբ մոտեցման շուրջ ավելի շատ հստակություն ապահովելու համար: Այսպիսով, այն կարելի է դիտարկել որպես կարևոր գործընթաց, որը դեռևս փորձնական փուլում է և պահանջում է մեծ ուշադրություն:

Դպրոցների ինքնավարությունը և որակի ապահովումը

Թեև բարեփոխումներին ուղղված նախաձեռնությունները ջատագովում են ավելի ազատական ու առաջադեմ մոտեցում՝ հիմնված դպրոցների առաջնորդության և ինքնավարության վրա, բյուրոկրատական համակարգը կարող է խոչընդոտներ ստեղծել դպրոցներում այս տեսլականի իրականացման համար: Օրինակ՝ դպրոցների տնօրենները պարտավոր են իրենց ընտրության ընթացքում ներկայացնել դպրոցի զարգացման ռազմավարական ծրագիր: Սակայն գործնականում անկախ որոշումներ կայացնելու նրանց կարողությունը, ինչպես օրինակ, արտաքին կազմակերպությունների (ներառյալ ՀԿ-ների) հետ գործընկերային հարաբերությունների ձևավորումը, հաճախ կախված է ԿԳՄՍՆ-ից պաշտոնական կամ ոչ պաշտոնական հավանություն ստանալուց: Այս պահանջը կարող է դանդաղեցնել որոշումների կայացման գործընթացները և սահմանափակել դպրոցների ինքնավարությունը՝ բացասաբար անդրադառնալով ուսուցիչների նորարարական նախաձեռնությունների իրականացման և տնօրենների՝ ծնողների ու համայնքի հետ ներգրավվածության վրա:


Դպրոցների մակարդակում որակի ապահովմանը խոչընդոտում է ոչ օպտիմալ ինստիտուցիոնալ միջավայրը. օրինակ, ԿՏԱ-ի դերը հիմնականում կենտրոնացած է նորմերի պահպանումը ստուգելու վրա, բայց այն կարողությունների ամրապնդմանն ուղղված առաջարկություններ չի ներկայացնում:



Հակիրճ՝ ստորև բերված գծապատկերում ներկայացված են ինստիտուցիոնալ կազմակերպման բարդությունը և տարբեր կառույցների միջև անհամաչափ կապերը:



Գծապատկեր 23. ՀՀ կրթության բնագավառի ինստիտուցիոնալ կառուցվածքի ինֆորգրաֆիկա



Աղբյուրը՝ ԵԿՀ վիզուալ պատկերացում՝ հիմնվելով օրենսդրության ուսումնասիրության վրա, 2024 թ.

3.2 Ռազմավարական տեսլականը և քաղաքականության մշակման գործընթացը Կրթության ռազմավարական տեսլականը և քաղաքականության պլանավորումը

Կրթության ոլորտի բարեփոխումների հստակ ռազմավարությունը շարադրված է Կրթության մինչև 2030 թվականի զարգացման ծրագրում, որը խորհրդարանի կողմից որպես օրենք հաստատված միակ ոլորտային ռազմավարությունն է: Սա ցույց է տալիս ոլորտին գերակայություն տալու հարցում կառավարության կուռ և համաձայնեցված հանձնառությունը: Ռազմավարական պլանավորումը, որն ակնկալվում է, որ պետք է



աջակցի դրա իրականացմանը, գոյություն ունի, դինամիկ է (տարեկան վերանայումներով), բայց հիմնված է սահմանափակ մասնակցային մոտեցման վրա և դեռևս լիովին չի գործում:

- **Կրթության մինչև 2030 թվականի զարգացման ծրագիրն արտացոլում է կառավարության առաջնահերթությունները և հիմնված է դրանց վրա, ինչպես նաև սահմանում է հստակ ձևակերպված ակնկալվող արդյունքները:**
Առաջնահերթություններից են՝
- համընդհանուր սովորողակետորոն և մասնակցային կրթական միջավայրի ստեղծում.
- կրթության արդյունավետության բարձրացում.
- կրթական ծառայությունների և արտադրանքի միջազգայնացում և արտահանում:

Հստակ ձևակերպված 23 ակնկալվող արդյունքները կարելի է ամփոփել հետևյալ կերպ՝

- 4 արդյունք վերաբերում է նախադպրոցական ծառայությունների մատչելիության և հասանելիության ապահովմանը Հայաստանի բոլոր բնակավայրերում.
- 8 արդյունք վերաբերում է հանրակրթության բարելավմանը՝ ուշադրության առանցքում ունենալով ուսուցիչների որակավորումն ու վարձատրությունը, դպրոցներում առաջնահերթ առարկաների, ինչպես նաև դպրոցական շենքերի մատչելիությունն ու որակը.
- 9 արդյունք վերաբերում է բարձրագույն և մասնագիտական կրթության որակի և ավարտական հավաստագրերի՝ միջազգային չափորոշիչներին համապատասխանության ապահովմանը.
- 2 արդյունք վերաբերում է սփյուռքահայության համար կրթության ապահովմանը:

Կրթության մինչև 2030 թվականի զարգացման ծրագիրը ուշադրության առանցքում բարեփոխումների հիմնական միջոցառումներն ու համակարգում ակնկալվող բարելավումներն են (համակարգի սովորական «աշխատանքը» կամ կառավարումը պարտադիր չէ, որ նման ռազմավարական մոտեցման մաս կազմի): Սակայն այն չի նախատեսում էական փոփոխություններ համակարգի գործունեության և քաղաքականության կառավարման ձևի մեջ:

- **Կրթության մինչև 2030 թվականի զարգացման ծրագրի հետ կապված գործողությունների ծրագիրը մշակված է դրա գործողության ողջ ժամկետի համար և մանրամասն ներկայացնում է նախատեսված բարեփոխումների**



միջոցառումներն ու գործողությունները, սակայն ունի մի շարք թույլ կողմեր կամ բացեր:

- Այս ռազմավարությունը գործնականում կիրառելու նպատակով՝ վերանայված գործողությունների ծրագիրը կառուցված է **վեց հիմնական բաժինների** շուրջ, որոնք տարբերվում են իրենց ռազմավարական նպատակներով, որոնք էլ հիմնականում կապված են տարբեր կրթական մակարդակների կամ տեսակների հետ (նախադպրոցական կրթություն, հանրակրթություն, մասնագիտական կրթություն, բարձրագույն կրթություն, ոչ ֆորմալ կրթություն և սփյուռք): Չնայած սա հստակ պատկերացում է տալիս յուրաքանչյուր մակարդակի հետ կապված մտադրությունների մասին, ոչինչ չի վկայում **այս կրթական մակարդակների միջև կապի**, ինչպես նաև **տրամախաչվող գործառույթների** կապակցությամբ նախատեսված բարելավումների/բարեփոխումների միջոցառումների մասին՝ ուղղահայաց (ապակենտրոնացված մարմիններ) և հորիզոնական (կապեր **այլ նախարարությունների**, քաղաքացիական հասարակության, ուսուցիչների արհմիությունների, զարգացման գործընկերների հետ, և այլն) **կառավարման, հաղորդակցության** (գլոբալ արշավներ), **մոնիթորինգի և գնահատման** (գործիքներ և շրջանակներ) մասին:
- Գործողությունների ծրագիրը մշակված է որպես **շարունակ վերանայվող փաստաթուղթ**, որը վերանայվում և թարմացվում է տարեկան կտրվածքով: Հետևաբար, միգուցե արժե դիտարկել այն, որ ծրագրում ընդգրկվեն միայն առաջիկա երկու կամ երեք տարիները, ինչը հնարավորություն կտա ավելի մանրամասն ներկայացնել կատարվելիք միջոցառումներն ու առաջադրանքները, ինչպես նաև խոչընդոտներն կամ ռիսկերը, որոնք պետք է հաշվի առնել: Բոլոր դեպքերում, ակնկալվող արդյունքները, որոնք, բարեբախտաբար, արտահայտված են քանակական թիրախների տեսքով, համեմատության համար չունեն հստակ **ելակետային տվյալներ, անցյալի միտումներ** և չեն արտացոլվում գործողությունների ծրագրի վերանայման պահին արձանագրված **ձեռքբերումների** ճշգրիտ **մակարդակը**. սա կօգնի գնահատել **թիրախային ցուցանիշների իրագործելիությունը, հետևաբար՝ այս կրթական ծրագրի վստահելիությունը**: Առանց այս տարրերի հեշտ չէ ստուգել համակարգի՝ **յուրացնելու** իրական **կարողությունը** և գնահատել **լրացուցիչ ջանքերի ծավալը**, որ անհրաժեշտ է ներդնել:
- **Հաջող իրականացման պայմանների** առումով գործողությունների ծրագրում պարզորոշ նշված չեն ակնկալվող **իրականացնողները կամ համաիրականացնողները**, այդ թվում՝ այն գործադիր մարմինները, որոնք



անհրաժեշտ կլինեն **պատասխանատվության, համախմբման և**

հաշվետվողականության ապահովման համար: Տարբեր մակարդակների **այլ գործընկերների**, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, տեղական համայնքների կամ զարգացման գործընկերների ակնկալվող դերը նույնպես պետք է ձևակերպել և խթանել:

- **Ֆինանսական մակարդակում**, ինչպես նշվել է ֆինանսական վերլուծության բաժնում, փաստաթուղթը չի նախատեսում տարբեր միջոցառումների ծախսերի նախահաշիվներ, ինչպես նաև թույլ չի տալիս կանխատեսել կամ մոդելավորել կարևոր միջոցառումների (օրինակ՝ ուսուցիչներին պարգևավճարներ, բոնուսներ, վճարման դրույքաչափի բարձրացում և այլն) ուղղակի ֆինանսական ազդեցությունը. կարևոր կլինի հստակեցնել, թե ինչպես են սահմանվել թիրախային ցուցանիշները, մասնավորապես՝ արդյոք դրանք արտացոլում են Ֆինանսների նախարարության (և անհրաժեշտության դեպքում՝ Արժույթի միջազգային հիմնադրամի) հետ ձեռքբերված նախնական համաձայնությունները, և արդյոք դրանք նախատեսում են աշխատակիցների աշխատավարձերի և փոխհատուցումների մասին իրավական կարգավորումների և հնարավոր սահմանափակող կանոնների նախնական ստուգում: Արտաքին դոնորների ներդրումները՝ իրենց կարգավիճակով հանդերձ (ապահովված, հաստատված, նախատեսված), նույնպես կօգնեն գնահատել ծրագրերի կայունությունը:
- Այս ծրագրի **վերանայման մեխանիզմը** սահմանված չէ (պարբերականություն, եղանակ, ներգրավված դերակատարներ, գործիքներ և այլն): Ընդհանուր առմամբ, ներածական նկարագրությունը, որտեղ համառոտ կներկայացվեն նախապատմությունը, նպատակը, թիրախային օգտագործողներն և փաստաթուղթը կարդալու ձևը, փաստաթուղթը կդարձնի օգտագործողի համար ավելի հարմար:

Տվյալների և ԿԿՏՀ-ի օգտագործումը քաղաքականության մշակման համար

Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը (ԿՏԱԿ) պատասխանատու է կրթության կառավարման տեղեկատվական համակարգի (ԿԿՏՀ) համար, որը վերջին տարիներին զգալի բարելավումների է ենթարկվել: ԿՏԱԿ-ը նաև ըստ պահանջի պատրաստում է բարձրորակ վերլուծական հաշվետվություններ:

Ի լրումն ներկայումս առկա տվյալների, որոնց մի մասը տրամադրվում է ՀՀՎԿ-ի, մյուս մասը՝ ՈԱԱԿ-ի կողմից, համակարգված կերպով լրացուցիչ տվյալներ հավաքելու կամ հասանելի դարձնելու ներուժ կա՝ քաղաքականության մոնիթորինգին և նոր նախաձեռնությունների կամ իրավիճակի շտկմանն ուղղված միջոցառումների մասին որոշումների կայացմանն աջակցելու համար:



Չիմսվելով RED-ի իրականացման գործնական փորձի վրա՝ փորձագիտական խումբն առանձնացրել է որոշ բացեր և թույլ կողմեր, որոնք արժանի են ուշադրության՝ քաղաքականության մշակման գործընթացում տվյալների օգտագործումը բարելավելու համար: Ստորը ներկայացված է այն լրացուցիչ տվյալների ցանկը, որոնք հարկավոր է հավաքել և հասանելի դարձնել:

Ղպրոցների (և այդ ղպրոցների երեխաների) մասին տվյալներ. ստանդարտ տվյալների դաշտերից բացի՝ պետք է ներառեն հետևյալ հատուկ կատեգորիաները՝

- բազմակի հերթափոխով ուսուցման մեջ ընդգրկված աշակերտների թիվը, քանի որ ներկա տվյալները ներառում են միայն բազմակի հերթափոխով գործող ղպրոցների և դասարանների թիվը, ինչը դժվարացնում է որոշել համապատասխան աշակերտների իրական թիվը.
- երկարօրյաներում ընդգրկված աշակերտների թիվը (ուղղված ցածր առաջադիմություն ունեցող երեխաներին).
- ցածր առաջադիմություն ունեցող երեխաների համար երկարօրյա պարապմունքների ժամերի նպատակով յուրաքանչյուր ղպրոցի հատկացված միջոցները՝ առանձնացված ըստ առարկայի և ըստ ուսուցչի.
- նախագծային ուսուցման համար յուրաքանչյուր ղպրոցի հատկացված միջոցները՝ այլ կարիքների համար հատկացված հայեցողական բյուջեից.
- ղպրոցական ակումբների համար յուրաքանչյուր ղպրոցի հատկացված միջոցները՝ այլ կարիքների համար հատկացված հայեցողական բյուջեից:

Բարեկեցության, երեխաների պաշտպանության և միջգերատեսչական համագործակցության մասին տվյալներ՝

- ղպրոցների անվտանգության մասին տվյալներ՝ ներառյալ աշակերտների նկատմամբ բուլինգի և բռնության դեմ պայքարի միջոցառումները (օրինակ՝ պատահարներ կամ անվտանգության հետ կապված խնդիրներ).
- ղպրոցահեն առողջապահական և աջակցության ծառայությունների առկայություն (օրինակ՝ բուժքույր, աջակցության ծառայություններ տեղում).
- ղպրոցական սննդի ծրագրերի մասին տեղեկություններ.
- օրենքի հետ խնդիրներ ունեցող աշակերտների թիվը (տնային կալանքի տակ, Պրոբացիայի ծառայության վերահսկողության տակ, ապաստարաններում կամ ազատազրկման վայրում):

Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոններին վերաբերող տվյալներ`

- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ աշխատելու համար վերապատրաստված ուսուցիչների թիվը.
- երկարաժամկետ անհատականացված կրթական պլանների (ԱԿՊ) միջոցով գնահատված կամ աջակցություն ստացող երեխաների թիվը, որոնց արդյունքները գրանցվում են յուրաքանչյուր փուլի ավարտին:

Ուսուցիչների մասին տվյալներ (ազգային, մարզային և դպրոցների մակարդակում).

- բացառապես դասավանդմամբ զբաղվող ուսուցիչների դասաժամերի թիվը և այժմ «դասախոսներ» կոչվող ուսուցիչների դասաժամերի և լրացուցիչ գործունեությամբ զբաղվելու ժամերի թիվը.
- մասնագիտական ուսուցման մեջ ներգրավված ուսուցիչների թիվը, որակավորման աստիճանը, ուսուցման եղանակը, ուսուցման կազմակերպումը և առաջընթացը (ինքնագնահատումից մինչև ատեստավորման միավորներ).
- ուսուցչի թափուր աշխատատեղերի թիվը` ըստ առարկայի.
- ուսուցիչների պետական փաստացի միջին աշխատավարձը.
- ուսուցիչների մասնագիտական վերապատրաստումների կազմակերպման և ատեստավորումների անցկացման համար ծախսված միջոցները.
- ատեստավորված ուսուցիչների և ԲՏԾՄ առարկաների գծով ուսուցիչների համար լրացուցիչ վճարների համար ծախսված միջոցները.
- հեռավոր գյուղերում աշխատող ուսուցիչների համար ճանապարհածախսի, կացարանի և լրացուցիչ վճարների փոխհատուցման համար ծախսված միջոցները:

Բացակայող ցուցանիշներ և տվյալների վերլուծության հետ կապված այլ խնդիրներ`

- **հանրակրթության մեջ զուտ/համախառն ընդգրկվածության ցուցանիշներն ըստ կրթական մակարդակի** (օգտագործելով ISCED 1-ին, 2-րդ և 3-րդ մակարդակները), ազգային և մարզային մակարդակներում` միջազգային համեմատական վերլուծություն կատարելու համար: Ներկայում տվյալները դասակարգվում են ըստ դպրոցի տեսակի (հիմնական, տարրական, ավագ), բայց տարրական (1-4-րդ դասարաններ) և հիմնական (1-9-րդ դասարաններ) մակարդակների միջև համընկնում կա.
- **դպրոցն ավարտողների և ուսումը դադարեցրած շարունակողների թիվը** ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի վիճակագրության ինստիտուտի ցուցանիշների (ՀՀՎԿ-ի ցուցանիշները

(ըստ դասարանի կամ կրթական մակարդակի), որոնք օգտակար են ընդգրկվածության մոնիթորինգի համար, պետք է ներառեն այս միջազգայնորեն ճանաչված չափանիշները):

Մետատվյալների և տվյալների մատչելիության հետ կապված խնդիրներ՝

- ԶԶՎԿ առցանց պահոցը (<https://statbank.armstat.am/>) պարունակում է աշակերտների, դպրոցների, շենքերի և ուսուցիչների մասին մանրամասն տվյալներ: Որոշ ցուցանիշներ չունեն համարժեք բացատրություններ կամ ծանոթագրություններ (օրինակ՝ արդյոք «համակարգիչների քանակը» ներառում է բոլոր դպրոցական համակարգիչները, թե՛ միայն ուսուցման նպատակով օգտագործվողները): Տարեկան հաշվետվությունները հաճախ ներառում են ավելի մանրամասն տվյալներ, քան առցանց պահոցը, բայց հասանելի են միայն PDF ձևաչափով, ինչը չի համապատասխանում պահոցի ծանոթագրություններին (օրինակ՝ տարի vs ուսումնական տարի):
- հաշվետվությունները հասանելի են միայն PDF ձևաչափով, ինչը խոչընդոտում է տվյալների ուղղակի օգտագործումը հետագա կամ ապախոշորացված վերլուծության համար:

Կրթական համակարգի դիմակայունությունը

Կրթական համակարգի դիմակայունությունն ապացուցվել է Լեռնային Ղարաբաղից երեխաների զարմանալիորեն արագ ինտեգրմամբ: Այդուհանդերձ, տարածաշրջանի անկայուն իրավիճակը պահանջում է դպրոցների օպտիմալ պատրաստվածություն՝ դպրոցական սովորական ռեժիմի հավանական խափանումներին դիմակայելու համար: 2023 թվականին Երևանի պետական համալսարանի հետազոտողները մշակել են կրթական համակարգի պատրաստվածության ցուցանիշ՝ երեխաների համար պարտադիր կրթության ապահովման պատրաստվածության և դիմակայունության մակարդակը գնահատելու համար՝ հաշվի առնելով COVID-19 համավարակի հետևանքները⁸⁶: Սակայն ոչ մի փաստական տվյալ չկա այն մասին, որ այս ցուցանիշը արդյունավետորեն ներդրվել/իրականացվել է:

ՏԿԵՆ-ի կողմից 2023 թվականի համար տրամադրված տեղեկությունների համաձայն՝ Երևանում և հանրապետության 10 մարզերում գործող նախադպրոցական հաստատությունների 56%-ում մշակվել և հաստատվել են աղետների ռիսկի կառավարման պլաններ: Աղետների ռիսկի կառավարման հաստատված պլանը 100%-ով իրականացրած հանրակրթական հաստատությունների մասնաբաժինը կազմում է 33%: Աղետների ռիսկի

⁸⁶ [EPIC.pdf \(ces.am\)](#)



կառավարման և ճգնաժամային իրավիճակներին արձագանքման վերապատրաստման դասընթացներին մասնակցած հանրակրթական դպրոցների աշխատակիցների մասնաբաժինը կազմել է 36%: **Ապաստարաններ/թաքստոցներ ունեցող դպրոցների մասնաբաժինը կազմել է 29%, միևնույն ժամանակ նախադպրոցական հաստատությունների մասին ոչ մի տեղեկություն չի տրամադրվում**⁸⁷:

ԵԿՀ փորձագետների կողմից մի քանի ծնողների հետ անցկացված ոչ պաշտոնական քննարկումները ցույց են տվել, որ ընտանիքները տեղյակ չեն այս ռիսկերի կառավարման պլանների հիմնական կողմերի, իրենց պատասխանատվության շրջանակի և աղետի կամ ճգնաժամի դեպքում դպրոցների հետ աշխատանքները համակարգելու եղանակների մասին:

Այս հարցում ԿԳՄՍՆ-ի պատասխանատվության շրջանակը մտում է անհասկանալի, քանի որ դպրոցների հետ այս գործողությունները համակարգելու և հետագայում համապատասխան տեղեկատվությունը ԿԳՄՍՆ-ին փոխանցելու հիմնական պատասխանատու մարմինը, կարծես, ՏԿԵՆ-ն է: Այն գործում է Ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության տարածքային ստորաբաժանումների հետ համագործակցությամբ՝ դպրոցների ներկայացրած պլանները հաստատելու նպատակով:

Այս առնչությամբ, չնայած կրթության ոլորտի վերաբերյալ կոնկրետ տվյալներ չկան, կարևոր է հաշվի առնել Հայաստանի հանրային քաղաքականության թափանցիկության բարձրացմանն ուղղված ինչպես մարտահրավերները, այնպես էլ խթանները: Հայաստանի հասարակության ներսում առկա վառ արտահայտված քաղաքական բևեռացումը կապված է աշխատանքի ընդունելու և նշանակումների հետ, որոնք միշտ չէ, որ կարող են համապատասխանել կարողունակությունների վրա հիմնված չափանիշներին, քանի որ վստահությունը հաճախ որոշիչ դեր է խաղում: Պետական գնումների ոլորտում մեկ աղբյուրից (ուղղակի) գնումների համար կնքված պայմանագրերի մասնաբաժինը կազմել է պետական հատվածում կնքված պայմանագրերի ընդհանուր արժեքի 25%-ը (ՏՀԶԿ, 2024): 2023 թվականին Հայաստանի կոռուպցիայի ընկալման համաթիվը (ԿԸՀ), որը հանրային հատվածում կոռուպցիայի մակարդակի չափման լայնորեն գործածվող գլոբալ ցուցիչն է, կազմել է 100-ից 47 միավոր: Միևնույն ժամանակ, ներկայում գործող հակակոռուպցիոն միջոցառումները, առնվազն կարճաժամկետ հեռանկարում, կարող են խոչընդոտներ առաջացնել կոռուպցիայի մեջ

⁸⁷ ԿԳՄՍՆ 2023 թվականի զեկույցը Կրթության մինչև 2030 թվական զարգացման պետական ծրագրի ընթացքի մասին:

մեղադրվելու ռիսկի կապակցությամբ մտահոգությունների առնչությամբ և, հետևաբար, որոշումներ կայացնելու դժկամություն հարուցել:

3.3 Բարեփոխումների կարևոր բնագավառների կառավարումը

Դպրոցների ուսուցիչների և տնօրենների մասնագիտության կառավարումը

Ուսուցիչների մասնագիտության կառավարմանը առաջնահերթ ուշադրություն է հատկացվում, բայց ոչ այն համալիր ձևով, որն անհրաժեշտ է՝ հաշվի առնելով դիտարկվող տարբեր խնդիրների միջև եղած կապերը, և ոչ էլ այն հիմնավորված է սովյալների ճշգրիտ մոնիթորինգով:

- **Ատեստավորման գործընթացը:** Այն ստեղծվել է մասնագիտության որակի և մոտիվացիայի/գրավչության հարցերը լուծելու համար: Սակայն արդյունքները մնում են սպասվածից ցածր, որի պատճառը ուսուցիչների տարիքը հաշվի չառնող ստանդարտ մոտեցումն է: Առաջարկվում է այն անցնել կամավոր հիմունքներով և ակնկալվում է, որ հաջողությամբ հանձնելուց հետո շնորհվում է որակավորման տարակարգ և հավելվածար՝ այդպիսով ամրապնդելով ուսուցչի մասնագիտության գրավչությունը, միջոցառմամբ նախատեսվում է, որ 60% կամ ավելի բարձր միավորներ ստացած ուսուցիչները կստանան հավելվածար՝ դրույքի 30-50%-ի չափով: Այնուամենայնիվ, այս միջոցառման **չտարբերակված կառուցվածքը** խնդիրներ և դժկամություն է առաջացնում: Նախ, ուսուցչի մասնագիտության մեջ ներգրավվելու պահանջը **միջնակարգ մասնագիտական կրթության աստիճանից բարձրացվում է մինչև համալսարանական դիպլոմի կամ ատեստավորումը հաջողությամբ անցնելու աստիճան**. չնայած այս պահանջը բացատրվում է որակը բարձրացնելու անհրաժեշտությամբ, այն սահմանափակում է մասնագիտության մեջ հնարավոր դիմորդների թիվը ուսուցիչների կրիտիկական պակասի ժամանակ, որը կապված է մասնավորապես ուսուցչական անձնակազմի ծերացման հետ⁸⁸: Բացի այդ, ատեստավորման գործընթացին մասնակցելու կանոնը սահմանում է, որ երկրորդ փորձից հետո **ձախողումը կարող է հանգեցնել աշխատանքից ազատման**, ինչը շատ ուսուցիչների խանգարում է փորձել (հատկապես բարձր տարիքային խմբում գտնվողներին, որոնց գիտելիքներն ու փորձը կարող են պակաս գնահատվել այսպիսի թեստի միջոցով): 2024 թվականի ապրիլի դրությամբ, հանրակրթական դպրոցների 29 000 ուսուցիչներից մոտ **7 000-ը** դիմել է ատեստավորման համար, իսկ **3 830-ը (կամ**

⁸⁸ 2021/2022 ուսումնական տարում Հայաստանում հանրակրթական դպրոցի ուսուցչի միջին տարիքը կազմել է 46.8 տարեկան, ուսուցիչների գրեթե կեսի տարիքը 50 տարեկանից բարձր է եղել, իսկ ուսուցիչների ամենամեծ մասնաբաժինը 60-64 տարիքային խմբում էր (Համաշխարհային բանկ, 2021):



54.7%-ը) հաջողությամբ հանձնել է այն, ընդ որում՝ 1 600-ին արդեն շնորհվել է որակավորման նոր տարակարգ և հավելավճար: Հարկ է նշել, որ 2021 թվականին ատեստավորման համար կարող էին դիմել միայն 7-10 դասարանների ուսուցիչները, իսկ 2022 թվականին՝ միայն 5-12 դասարանների ուսուցիչները: Միայն 2024 թվականին բոլոր դասարանների ուսուցիչները իրավունք ստացան դիմել ատեստավորման համար, ինչպես նաև այն անձինք, որոնք չեն աշխատում, բայց ունեն մանկավարժական կրթություն և համապատասխանում են մանկավարժ դառնալու պահանջներին

«Ե՛վ ուսուցիչները, և՛ մենք՝ որպես վերապատրաստման ծառայություն մատուցողներ, բարձր ենք գնահատում այն, որ պետությունը բոլորի համար ստանդարտ վերապատրաստումներից անցել է կարիքահեն մասնագիտական զարգացման մոտեցմանը: Սակայն, այն ձևը, որով գործընթացը նախագծվել և այժմ իրականացվում է, շատ խնդրահարույց է: Կարիքների գնահատումը ամբողջ գործընթացի հիմքն է, սակայն այն կառուցված է ուսուցչի կողմից ընտրվող պատասխանների պարզունակ հակադրության վրա, ինչը բարդացնում է վերապատրաստման կազմակերպումը: Այն թույլ չի տալիս իր կարիքները գնահատող ուսուցչին կամ իր ուսուցիչների կարողունակությունները գնահատող տնօրենին լիովին հասկանալ գնահատվող ցուցանիշի շրջանակը և արձագանքել համապատասխանաբար: Այս նոր կարգավորումը պահանջում է խոր վերանայումներ»:

Ուսուցիչների վերապատրաստման ծառայություն մատուցող, Ֆես մասնակից

(Սկրոչյան, 2023): Հետևաբար, ԿԳՄՍԼ-ն (2024) ակնկալում է, որ դիմորդների թիվը զգալիորեն կավելանա:

- **Ուսուցիչների պատրաստում և աջակցություն սկսնակ ուսուցիչներին:**
Ուսուցիչների պատրաստումը ոլորտի փոփոխվող կարիքներին համապատասխանեցնելու հարցում բարելավման տեղ ունի, հատկապես շրջանավարտներին դասավանդման ժամանակակից մեթոդաբանությունների մասին



գործնական հմտություններով ու գիտելիքներով զինելու հարցում: Բազմաթիվ նոր շրջանավարտների համար կարող է օգտակար լինել 21-րդ դարի հմտությունների շուրջ լրացուցիչ վերապատրաստումը: Թեև որոշ նախաձեռնություններ կան, սկսնակ ուսուցիչների համար անհրաժեշտ է ավելի համակարգված և հետևողական վերապատրաստում և մենթորություն աշխատանքի ընդունելիս և աշխատանքի ընթացքում: Ներկայիս աջակցության մեխանիզմները, ինչպիսիք են համաժողովներն ու մրցույթները, գնահատելի են, բայց դրանք կարելի է փոխլրացվել ավելի համակարգված ջանքերով, որոնք կենտրոնացած կլինեն ուսուցիչների մասնագիտական զարգացման կարիքների գնահատման և հասցեգրման վրա: Ուսուցիչների ատեստավորման նոր կանոնակարգերը դրական քայլ են այս ուղղությամբ, որոնք ներառում են ուսուցիչների ինքնագնահատումը և նրանց գնահատումը դպրոցների տնօրենների կողմից: Բացի այդ, ատեստավորման գործընթացն այժմ ներառում է մեկից հինգ տարվա փորձ ունեցող սկսնակ ուսուցիչներին, ինչը կարող է ավելի նպաստել նրանց մասնագիտական զարգացմանը:

- **Ներառական կրթություն:** Դպրոցներն աշխատում են առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներին տրամադրվող աջակցության բարելավման ուղղությամբ, սակայն կան ուսուցիչների և մասնագետների, օրինակ՝ հոգեբանների և լոգոպեդների միջև համակարգումը բարելավելու հնարավորություններ: Մանկավարժահոգեբանական աջակցության տարածքային կենտրոնները և վերջին տարիներին մեկնարկած մենթորության նախագծերը զգալի ջանքեր են գործադրում այս խնդիրը լուծելու ուղղությամբ: Ուսուցիչներն ակտիվորեն բողոքում են այն փաստից, որ **իրենց ուսուցչական պարտականություններից բացի նոր չափորոշիչների հիման վրա,**



որոնք նրանք դեռ պետք է հարմարվեն, նրանցից պահանջվում է կատարել տեխնիկական **առաջադրանքներ**, որոնք լուրջ գերբեռնվածություն են ստեղծում:

- Այն փաստը, որ ուսուցիչներից, կարծես, պահանջվում է կատարել դասավանդման պարտականությունների շրջանակից դուրս այլ աշխատանքներ, ստեղծում է գերբեռնվածություն: Ուսուցումից բացի այլ գործառույթներ կատարող ուսուցիչների մասնաբաժինը հատկապես բարձր է հանրակրթական միջնակարգ դպրոցներում (1-12-րդ դասարաններ) և ճեմարաններում (5-12-րդ դասարաններ)՝ 2023/2024 ուսումնական տարում համապատասխանաբար կազմելով ուսուցիչների ընդհանուր թվի 38.4%-ը և 32.6%-ը (ՀՀՎԿ, 2024): Ընդհանուր առմամբ, ուսուցիչներից ակնկալվում է փոխարինել բացակա ուսուցիչներին, պլանավորել և կազմակերպել միջոցառումներ ու հանդեսներ

«Մենք ակնկալում էինք, որ թվային գործողությունների ներդրումը կօգնի մեզ և ուսուցիչներին մեր աշխատանքը դարձնել ավելի հեշտ և արագ: Դրա փոխարեն, նոր պահանջվող առցանց առաջադրանքները մեզ համար մարտահրավեր են, որոնք սարսափելի ծանրաբեռնում են մասնավորապես ուսուցիչներին»:

Տիտեն, ՖԻ մասնակից

«Շատ ձևաթղթերում պահանջվում են բազմաթիվ պատճենում-տեղադրումներ՝ առանց այս խիստ ժամանակատար աշխատանքների անհրաժեշտության ողջամիտ հիմնավորման: Ուսուցիչներ կայիս աշխատավարձով և դպրոցներում բավարար համակարգիչներ կամ պատշաճ որակի կապ չունենալով՝ իրատեսական չէ ուսուցիչներից պահանջել նման ինտենսիվ առաջադրանքների կատարում: Սրանք հատկապես շատ դժվար աշխատանքներ են ավագ սերնդի ուսուցիչների համար:

Ավելին, ուսուցիչները չեն վարձատրվում իրենց դասաժամերից դուրս կատարվող այս աշխատանքների համար, բայց մենք աշխատում ենք մինչև ուշ երեկո՝ առցանց տվյալները ԿԿՏՀ-ում լրացնելու համար: Սա մեծ դժգոհություն է առաջացնում, և, ի վերջո, նույնիսկ ամենափորձառու և նվիրված ուսուցիչները կարող են կորցնել իրենց մոտիվացիան և հեռանալ համակարգից»:

Ուսուցիչ, ՖԻ մասնակից



իրենց դասարանների հետ, ինչպես նաև զբաղվել վարչական փաստաթղթաբանությամբ՝ ի թիվս այլ պարտականությունների (ՅՈՒՆԻՍԵՖ, 2022c): Թեև ուսուցիչների աշխատանքային ժամերը պաշտոնապես սահմանված են, դասավանդման փաստացի շրջանայից դուրս աշխատանքային ժամանակը պաշտոնապես սահմանված չէ (Նույն տեղում):

- **Նախադպրոցական և տարրական** կրթության ուսուցչի չափորոշիչների բացակայությունը:
- Ընդհանուր առմամբ, նախարարության կողմից ուսուցիչների մասնագիտության կառավարման մարտահրավերների լուծման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների արդյունավետությունը՝ գնահատումների և արդյունքների հիման վրա քաղաքականության կառուցողական մոտեցում մշակելու համար:
- Կանոնակարգային փոփոխություններ: Ուսուցիչները հաճախ են առերեսվում փոփոխվող օրենսդրական կարգավորումների հետ, և ավելի համապարփակ նախապատրաստություն ու աջակցություն ապահովելու հնարավորություն կա՝ օգնելու նրանց հարմարվելու այդ փոփոխություններին:



«Բովանդակության և գործընթացների հետ կապված չափազանց շատ փոփոխություններ են արագ ներդրվում մեկը մյուսի հետևից՝ առանց ուսուցիչներին և ծնողներին իրազեկելու համար բավարար ժամանակ տրամադրելու և առանց ժամանակին դրանք ներդնելու մասին մանրամասն տեղեկատվություն տրամադրելու: Մեզ համար չափազանց դժվար է արագ յուրացնել այս բոլոր նոր գործընթացների նրբությունները, հետևաբար, երբեմն մենք չենք կարողանում մեր աշակերտների ծնողներին նոր ընթացակարգերի մասին սպառիչ բացատրություններ տալ: Նման գործընթացների օրինակներ են տարրական դպրոցում միավորային գնահատման վերացումը կամ ձևավորող/նկարագրական գնահատման ներդրումը: Երբ ո՛չ ուսուցիչները, ո՛չ էլ ծնողները լիովին տեղյակ չեն գործընթացների տեխնիկական նրբություններին, այն նպատակին, որին դրանք ծառայում են, դա թյուրըմբռնումների, գործընթացում սխալների, շահառուների շրջանում դժգոհության, ուսուցիչների և աշակերտների կամ նրանց ծնողների միջև կոնֆլիկտների առաջացման մեծ հավանականություն է ստեղծում, ինչը, ի վերջո, ազդում է բոլորի՝ բարեփոխումներին հավատարիմ մնալու մոտիվացիայի վրա»:

Ուսուցիչների վերապատրաստման ծառայություն մատուցող, Ֆես մասնակից

Ինչպես նկարագրվեց վերևում, 2023 թվականին դպրոցների տնօրենների ընտրության համար ներդրվել է արմատապես նոր կանոնակարգ, սակայն դրա գործարկումից առաջ ռիսկերը չեն հաշվարկվել: Սա համակարգը լուրջ մարտահրավերի առջև կանգնեցրեց. 2024 թվականի հոկտեմբերին մոտ 200 դպրոց ամիսներ շարունակ գործում էր առանց տնօրենի, քանի որ այս պաշտոնի համար դիմողները մեկ կամ բազմակի անգամ չէին կարողանում հաղթահարել ընթացակարգի փուլերից մեկը:

2023 թվականի սկզբին «Հանրակրթության մասին» օրենքում կատարված փոփոխությամբ՝ դպրոցի տնօրեն դառնալ ցանկացողները պետք է հանձնեն երեք փուլից բաղկացած



քննություն՝ (1) գրավոր թեստավորման և հավաստագրման փուլ, (2) իրենց դպրոցների համար զարգացման ծրագրի կազմում և (3) հարցազրույց ընտրող հանձնաժողովի հետ:

Ըստ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի փոխնախարար տիկին Արաքսյա Սվաջյանի՝ «Նախ, դիմորդների մոտ 85 տոկոսը չի անցնում գրավոր թեստավորման և հավաստագրման փուլը, իսկ հաջորդ փուլ անցածների 60 տոկոսը կրթության կառավարման վերաբերյալ գիտելիքներ չունի: Այս տարի **քննվել է դպրոցի զարգացման 853 ծրագիր, սակայն միայն 99-ն է ստացել դրական եզրակացություն: Դրական եզրակացություն ստացած 99 զարգացման ծրագրերից միայն 44-ն է հարցազրույցից հետո ստացել դրական եզրակացություն: Մենք մի փոքր ճգնաժամի մեջ ենք, քանի որ 200-ից ավելի դպրոցներում տնօրեն չունենք, ունենք ժամանակավոր պաշտոնակատար կամ տնօրենի պաշտոնակատար»:**

Սա վկայում է այն մասին, որ շահառուների կարողությունների կամ համակարգի պատրաստվածության մասին ոչ մի հիմնավոր նախնական գնահատում չի կատարվել, և ռիսկերի մեղմման ծրագրեր չեն մշակվել, միևնույն դպրոցների տնօրենները կրթական համակարգի կարևորագույն դերակատարներ են:

Գիտելիքների և հմտությունների հետ կապված հնարավոր խնդրից բացի՝ հավակնորդները նշում են ծրագրերի ստանդարտացված գնահատման բացակայության մասին: Տարբեր հանրային հանդիպումների ժամանակ ԿԳՄՍՆ ներկայացուցիչները համաձայնել են, որ չունեն բավարար թվով մասնագետներ, որոնք ունեն կրթական համակարգի մասին խոր գիտելիքներ ու նախագծերի կառավարման հմտություններ, և որոնք կարող են պատշաճ կերպով աջակցել այս գործընթացին:

Կրթական առաջարկի պլանավորում

Կրթական առաջարկի պլանավորումը, կարծես, իրականացվում է «պատմական» կայունության սկզբունքով, ինչը նշանակում է, որ այն կապված չէ ո՛չ ժողովրդագրական շարժընթացի, ո՛չ էլ (տեղական) տնտեսական հեռանկարների հետ, ինչը հանգեցնում է բոլոր մակարդակներում կրթական առաջարկի ինտեգրման բացակայության:

ԿԿՏՀ-ի բարելավումները, կարծես, խոստումնալից են ընդգրկվածության մոնիթորինգի համար, սակայն կրթական առաջարկի ճշգրտման հետ կապը մնում է անորոշ: Սա հատկապես ինդրահարույց է աշխատաշուկայի կարիքներին ՄԿՈՒ առաջարկի ճշգրտման առումով:



ՄԿՈԻ ոլորտը, ինչպես Հայաստանի կրթական համակարգի մյուս ոլորտները, գտնվում է մեծ բարեփոխումների փուլում: ԿԳՄՍՆ-ի կողմից առաջարկված մասնագիտական կրթության և ուսուցման մասին նոր օրենքն արդեն ընդունվել է Ազգային ժողովի կողմից: ՄԿՈԻ մասին նոր օրենքի հիմնական առանձնահատկություններից են՝

- հասկացությունների և սահմանումների ներդաշնակեցում (ի տարբերություն գործող օրենքի՝ նոր օրենքը ճանաչում է միայն մեկ տեսակի ՄԿՈԻ հաստատություն (դա քոլեջն է).
- դուալ և աշխատանքի վրա հիմնված ուսումնառության ինստիտուցիոնալ ներդրում և կարգավորում.
- ՄԿՈԻ հաստատությունների կառավարման բարելավում և կրթության կառավարման համագործակցային մոդելի ներդրում՝ հասարակական և մասնավոր գործընկերների պատասխանատվության մակարդակի աճով. ՄԿՈԻ ծրագրերին ներկայացվող վերանայված ընդհանուր պահանջները՝ ներառյալ լրացուցիչ կրթական ծրագրերի մասնակցելու հնարավորությունը, որոնք կհավաստեն ձեռք բերված ուսումնառության վերջնարդյունքները և հիմք կհանդիսանան միկրոորակավորումների ու հավաստագրերի համար.
- ՄԿՈԻ ֆինանսավորման համակարգի վերանայում և ձեռնարկատիրական գործունեության խթանում. ՄԿու հաստատություններում վարչական և մանկավարժական աշխատողների համալրման և վերապատրաստման մեխանիզմների վերանայում, ներառյալ ՄԿՈԻ մանկավարժական աշխատողների ատեստավորումը՝ աշխատավարձի համապատասխան բարձրացմամբ.
- ՄԿՈԻ համակարգի ուսանողների և ունկնդիրների իրավունքների և պարտականությունների կարգավորում⁸⁹:

Կարևոր է արդեն իսկ նախատեսել ՄԿՈԻ մասին նոր օրենքի ազդեցության համակարգված և համապարփակ գնահատման իրականացում՝ դրա կիրառման ողջամիտ ժամկետից հետո:

Թվայնացում

Թվային ենթակառուցվածքներ և միջավայր

Կապակցվածություն. Երկրի բոլոր դպրոցները միացված են ինտերնետին, սակայն կապի որակը տարբեր է (Ուսուցիչների նպատակային կոլեկտիվ խորհրդակցություն, 2024թ.): Ազգային ներցանցի միջոցով յուրաքանչյուր դպրոց ունի իր տեղային համակարգչային ցանցը (LAN), որոնք աջակցություն են ստանում ԿՏԱԿ-ի ծառայություն մատուցողների

⁸⁹ <https://escs.am/am/news/20308>



կողմից: Ինտերնետը հասանելի է հիմնականում դպրոցի տնօրենի գրասենյակում և վարչական օպերատորների համար նախատեսված հարակից սենյակներում, և ընդհանուր առմամբ նաև ինֆորմատիկայի դասարանում՝ լավագույն դեպքում այդ սենյակում գտնվող բոլոր գործող համակարգիչները միացված են ինտերնետին, վատագույն դեպքում՝ միայն ուսուցչի համակարգիչն է միացված (Նույն տեղում): Արդյունավետ ուսումնառության մասին ինքնանդրադարձի միջոցով նորարարական կրթական տեխնոլոգիաների կիրառման խթանման, այսինքն ՍԵԼՖԻ (SELPHIE) գործիքի կիրառման միջոցով ստացված արդյունքները (գործիքը Հայաստանում փորձնական կիրառությունն է ունեցել 2023 թվականին և հավաքել է 22 հանրակրթական հաստատությունների թվային կարողությունների մասին դպրոցների տնօրենների, ուսուցիչների և աշակերտների կարծիքները) ցույց են տալիս, որ ուսուցիչների 27.22%-ը և դպրոցների ղեկավարների 25%-ը տեղյակ են անկայուն կամ դանդաղ ինտերնետային կապի մասին (ԵԿՀ, 2024): Յուրաքանչյուր դպրոց պարտավոր է կազմակերպել լրացուցիչ Wi-Fi մոդեմների առկայությունը՝ դասապրոցեսի ընթացքում ընդլայնված ինտերնետ հասանելիությունն ապահովելու համար: Սովորաբար **ուսուցիչներն օգտագործում են իրենց սեփական հեռախոսները՝ ԿԿՏՀ համակարգ մուտք գործելու** և իրենց գրառումները մուտքագրելու համար: 18 մենթոր դպրոցներից մեկում⁹⁰ ուսուցիչները սեփական նախաձեռնությամբ կազմակերպել են Wi-Fi հասանելիության մի քանի լրացուցիչ կետերի առկայություն՝ մենթորության պատշաճ իրականացումն ապահովելու համար (Ուսուցիչների նպատակային կոլեկտիվ խորհրդակցություն, 2024): Ինչ վերաբերում է տնային պայմաններում ինտերնետ կապի հասանելիությանը, 2020 թվականին քաղաքային բնակավայրերի տնային տնտեսությունների միայն 80.1%-ը և գյուղական բնակավայրերի տնային տնտեսությունների 71.5%-ն ուներ առնվազն մեկ անդամ, որն ուներ հասանելիություն ինտերնետին (ՀՀԿԿ, 2021):

Թվային սարքեր: Թեև Հայաստանում 15-ամյա աշակերտի հաշվով համակարգիչների քանակը համեմատաբար մեծ է⁹¹, **սարքերի ֆունկցիոնալությունը տարբեր է: Հայաստանում դպրոցական համակարգիչների 27.4%-ը անսարք է**, իսկ գործող համակարգիչների **52.8%-ը Pentium 4 կամ ավելի հին սերնդի են** (ՀՀ կառավարություն, 2022)⁹²: SELPHIE փորձնական ծրագրի տվյալների համաձայն՝ աշակերտների համար նախատեսված սարքերն

⁹⁰ 18 մենթոր դպրոցները հիմնադրվել են 2020 թվականի մարտին՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ի և ԿՏԱԿ-ի համատեղ ջանքերով՝ COVID-19 համավարակի ընթացքում «E-school Armenia» նախագծի շրջանակում, և դրանք դեռևս հեռավար ուսուցում են տրամադրում երկրի մոտ 101 գյուղական դպրոցների, որոնք չունեն բավարար ուսուցչական անձնակազմ (ԿԿՄՍՆ, 2021):

⁹¹ Հայաստանում 2020 թվականին 15-ամյա աշակերտի հաշվով համակարգիչների քանակը հավասար էր 1.0-ի՝ ՏՀԶԿ երկրներում՝ 0.81, Վրաստանում՝ 0.46, Մոլդովայում՝ 0.55, Ադրբեջանում՝ 0.57 և Ուկրաինայում՝ 0.61 միջին ցուցանիշի համեմատ (ՏՀԶԿ, 2024):

⁹² Ըստ ԿԿՄՍՆ-ի՝ ներկայումս բոլոր դպրոցների 48%-ը ապահովված է նոր համակարգիչներով, իսկ մինչև 2026 թվականի ավարտը բոլոր դպրոցները կունենան ամբողջովին հագեցած լաբորատորիաներ, որոնք ֆինանսավորվում են պետական բյուջեից, ԵՄ բյուջետային աջակցությամբ և Համաշխարհային բանկի «Կրթության բարելավման ծրագրի» լրացուցիչ ֆինանսավորմամբ:



ունեցել են միջինում ցածր՝ 3.6/5 բավարարվածության միավոր, ինչը ցույց է տալիս, որ հարցման մասնակիցները պակաս դրական կարծիք ունեն դպրոցներում այդ սարքերի առկայության կամ որակի մասին (ԵԿՅ, 2024): Մասնավորապես, ուսուցիչների 32.84%-ը և դպրոցների ղեկավարների 26.92%-ը թվային սարքավորումների անբավարար քանակությունը համարում են իրենց առջև ծառայած մարտահրավեր (Նույն տեղում):

Ինչ վերաբերում է տնային պայմաններում հասանելիությանը, 2020 թվականին քաղաքային բնակավայրերի տնային տնտեսությունների միայն 63.1%-ը և գյուղական բնակավայրերի տնային տնտեսությունների 50.8%-ն ուներ առնվազն մեկ անդամ, որն ուներ հասանելիություն համակարգչին (ՀՀԿԿ, 2021):

Դպրոցների թվային հզորությունը և կառավարումը

SELFIE փորձնական ծրագրի տվյալների համաձայն՝ **անբավարար ֆինանսավորումը** հիմնական խնդիրն է, որը դպրոցների ղեկավարները (40.38%) նշել են իրենց դպրոցներում թվայնացման ջանքերի առումով, և ուսուցիչների զգալի մասը (27.22%) համաձայն է (ԵԿՅ, 2024): Ավելին, և՛ դպրոցների ղեկավարները (40.38%), և՛ ուսուցիչները (38.46%) ընդունում են, որ ժամանակի սղությունը ուսուցիչների համար լուրջ խնդիր է (Նույն տեղում):

Ուսուցիչների կարողունակությունները, մանկավարժական մոտեցումները և ազդեցությունը սովորողների վրա

SELFIE փորձնական ծրագրի տվյալների համաձայն՝ դպրոցների ղեկավարների 13.46%-ը և ուսուցիչների 14.02%-ն են **ուսուցիչների թվային կարողունակությունների ցածր մակարդակը** համարում հրատապ խնդիր (ԵԿՅ, 2024): Սա նշանակում է, որ կամ ուսուցիչները ունեն թվային կարողունակությունների բավարար մակարդակ, կամ, ավելի հավանական է, որ չունեն, բայց դա չի համարվում առաջնահերթություն: Մյուս կողմից, ուսուցիչների համեմատ (11.54%) դպրոցների ղեկավարների ավելի մեծ մասը (15.38%) **աշակերտների թվային կարողունակությունների ցածր մակարդակը** համարում է լուրջ մարտահրավեր (Նույն տեղում): Ինչևէ, դա նշանակում է, որ դպրոցների ղեկավարների և ուսուցիչների ճնշող մեծամասնությունը աշակերտների թվային կարողունակությունները չի համարում լուծման ենթակա հրատապ խնդիր:

Կանաչ անցում

Մանկավարժական մոտեցումները և ազդեցությունը սովորողների վրա

Կանաչ ուսումնական ծրագրերի բացերը ՄԿՈՒ և բարձրագույն կրթության բնագավառներում: Մասնագիտական կրթության ոլորտում բացակայում են մասնագիտացված



ուսումնական ծրագրերը, որոնք կենտրոնացած կլինեն կայունության և կլիմայի փոփոխության հետ կապված հարցերի վրա: Դրա փոխարեն այս թեմաներին անուղղակի անդրադարձ է կատարվում կրթության պետական չափորոշիչների տարբեր հատուկ մասնագիտական մոդուլներում, որոնք արտացոլում են ռեսուրսների կառավարումը, թափոնների հեռացումը և շրջակա միջավայրի պահպանությունը որպես մոդուլների հիմնարար տարրեր: Ավելին, ՀՀ Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնը (ՄԿՈԲԶԱԿ), որին հանձնարարված է մշակել և վերանայել տարբեր ոլորտների ուսումնական ծրագրերը՝ մանրամասն դիտարկելով գործատուների պահանջները և աշխատաշուկայի կարիքները, վերջերս մշակել է կանաչ տնտեսությանն առնչվող մասնագիտություններ, ինչպիսիք են՝ «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում», «Արևային էներգետիկ կայանների մոնտաժման, նորոգման և սպասարկման էլեկտրիկ-փականագործ», «Ջերմաէներգետիկ սարքավորումների և ջերմային ցանցերի տեխնիկական շահագործում», «Փականագործ՝ ջերմային ցանցերի սարքավորումների նորոգման և սպասարկման» և այլն⁹³:

Համաձայն Կրթության մինչև 2030 թվականի զարգացման ծրագրի՝ բարձրագույն կրթության ոլորտի հիմնական մարտահրավերներից մեկը ուսումնական նյութերի և ընթացակարգերի որակի արդիականացումն է՝ համապատասխանեցնելով դրանք ժամանակակից հասարակության և տնտեսության արագ փոփոխվող պահանջներին, այդ թվում՝ «կանաչ կրթությանը», որը նախատեսվում է որպես շրջակա միջավայրի կայունության և էկոլոգիայի մասին իրազեկություն, որը պետք է ներառվի այնպիսի առարկաների դասավանդման շրջանակում, ինչպիսիք են կլիմայի փոփոխությունը, կենսաբազմազանության պահպանումը, վերականգնվող էներգիան և կայուն զարգացման գործելակերպերը: Ներկայումս համալսարանների կողմից առաջարկվող ուսումնական ծրագրերը համապարփակ կերպով չեն համապատասխանում Որակավորումների ազգային շրջանակում (ՈԱՇ) նշված «կանաչ կրթության» համար անհրաժեշտ գիտելիքներին, կարողություններին և հմտություններին վերջնարդյունքներին⁹⁴: Ակնկալվում է, որ ոլորտային որակավորման շրջանակների (ՈՌՇ) ներդրումը կծառայի որպես միջանկյալ գործիք՝ բարձրագույն կրթության ծրագրերը ՈՌՇ-ով սահմանված ուսումնական վերջնարդյունքներին համապատասխան ձևավորելու համար:

⁹³ Աղբյուրը՝ Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն (ՄԿՈԲԶԱԿ): Հափորոշիչների համար տե՛ս՝ <https://mkuzak.am/չափորոշիչներ-և-մոդուլային-ծրագրեր/վերանայված-պետական-կրթական-և-չափորոշիչ/?lang=en>:
⁹⁴ Գործողությունների ծրագիրը բխում է «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրից», Կառավարության որոշում N351-L, 16.3.2023, էջ 35:



Ստորև բերված աղյուսակում ներկայացված են համալսարանների արդիականացված ուսումնական ծրագրերում «կանաչ կրթության» սկզբունքը հաշվի առնող թիրախային ցուցանիշները, որոնց պետք է հասնել ՈԱՇ մշակելու միջոցով՝ ՈԱՇ-ի ուսումնական վերջնարդյունքներին համապատասխան:

Կանաչ կրթության ինտեգրման և ուսումնական ծրագրերը ՈԱՇ-ին համապատասխանեցնելու թիրախային ցուցանիշները

Տարի	Թիրախային ցուցանիշներ		
	Մշակված չափորոշիչների թիվը	ՈԱՇ-ին հարմարեցված ուսումնական ծրագրերի մասնաբաժինը	Կանաչ կրթության բաղադրիչ պարունակող վերանայված ուսումնական ծրագրերի մասնաբաժինը
2023	29	առնվազն 10%	0 (եվակետային)
2024	36	առնվազն 30%	առնվազն 5%
2026	50	առնվազն 50%	առնվազն 15%
2030	60	100%	առնվազն 25%

Այդուհանդերձ, ցուցանիշի սահմանումն անորոշ է մնում, և այդ մասնաբաժինների սահմանման ու հաշվարկման մեթոդը հարկավոր է հստակեցնել:

Կանաչ քաղաքականության միջոցառումներ, մոնիթորինգ և կառավարում Ազգային և ենթաազգային մակարդակներում տնտեսական զարգացման կանաչ և կայուն քաղաքականություններ մշակելու և իրականացնելու սահմանափակ կարողություններ կան: Սա դժվարացնում է Էկոլոգիապես անվտանգ մեթոդներին անցումը և առկա տնտեսական ու պարենային անվտանգության հետ կապված խնդիրների լուծումը՝ հատկապես սահմանամերձ տարածքներում:

Կրթության բնագավառում բացակայում են կանաչ նախաձեռնությունների համար դեկլարման ու կառավարման միասնական համակարգերը: Հայաստանը, ինչպես շատ երկրներ, ավելի ու ավելի է շեշտը դնում տարբեր ոլորտներում, այդ թվում՝ կրթության ոլորտում շրջակա միջավայրի կայունության վրա: Սակայն կրթության ոլորտում դեռևս չկա շրջակա



միջավայրի պաշտպանությանն ուղղված ջանքերի ղեկավարման ու կառավարման միասնական համակարգ: Սրա պատճառով կրթության ոլորտի բազմաթիվ նախաձեռնություններ գալիս են համայնքային կրթական կազմակերպություններից, սակայն որոնք նկատմամբ չկա հստակ հսկողություն պետական մարմինների կողմից և որոնք չեն տարածվում դեպի ավելի բարձր մակարդակներ: Որոշ համայնքներում առանձին ուսուցիչներ ստանձնում են իրենց աշակերտների հետ բնապահպանական նախագծեր նախաձեռնելու պատասխանատվությունը: Միջազգային ծրագրերի մասին տեղեկանալուց հետո այդ ուսուցիչները մշակում են նախագծերի իրականացման առաջարկներ և իրականացնում դրանք սեփական նախաձեռնությամբ: Նույն կերպ շատ դպրոցներում կարելի է նկատել կանաչ գոտիների առկայություն՝ շնորհիվ ուսուցիչների և մոտիվացված տնօրենների նվիրվածության, որոնք առաջնահերթություն են տալիս կրթության մեջ շրջակա միջավայրի դերին: Այդ կերպ աշակերտները ներգրավվում են այնպիսի միջոցառումներում, ինչպիսիք են ծառատունկը, այգիների ստեղծումը և վերամշակման ծրագրերի իրականացումը, և խորախուսվում է, որ նրանք խթանեն Էկոլոգիապես պատասխանատու վարքագիծ: Այնուամենայնիվ, կրթական համակարգի բարձր մակարդակներից հստակ ուղղորդման բացակայության դեպքում հնարավոր է, որ կանաչ նախագծերն ու նախաձեռնությունները լայն ճանաչում ձեռք չբերեն կամ հեշտությամբ հասանելի չլինեն բոլոր դպրոցների համար, մասնավորապես՝ որոշ անապահով համայնքներում:

Կանաչ հետազոտություններ կրթական համակարգում: Հայաստանում կլիմայի փոփոխության թեմաներով հետազոտություններին հատկացվող **պետական ֆինանսավորումը բավարար չէ:** Սա սահմանափակում է հետազոտական նախաձեռնությունների շրջանակն ու ծավալը՝ խոչընդոտելով կլիմայի և շրջակա միջավայրի հետ կապված մարտահրավերների դեմ պայքարի արդյունավետ լուծումների մշակման առաջընթացը⁹⁵:

⁹⁵ «Հայաստանում կլիմայի փոփոխության դեմ մինչև 2030 թվականը պայքարի համար ներդրումային կարիքների գնահատում», ԵՄ, Գերմանիայի Տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարություն, 2023 թ.՝ <https://www.eu4environment.org/app/uploads/2021/04/Report-Assessment-of-Investment-Needs-for-Climate-Action-in-Armenia-up-to-2030.pdf> <https://www.adb.org/sites/default/files/publication/927031/sdwp-089-climate-resilient-fiscal-planning-armenia.pdf>, «Հայաստանում փոփոխվող կլիմայի պայմաններում պետական ներդրումների սահմանումը որպես առաջնահերթություն», ՀԲ, 2024 թ.՝ <https://blogs.worldbank.org/en/climatechange/prioritizing-public-investment-in-armenia-s-changing-climate>
«Կլիմայի փոփոխությունների նկատմամբ դիմակայուն հարկաբյուջետային պլանավորումը Հայաստանում», ԱԶԲ, 2023 թ.՝ <https://www.adb.org/sites/default/files/publication/927031/sdwp-089-climate-resilient-fiscal-planning-armenia.pdf>, Կանաչ ֆինանսավորման ընդլայնումը Հայաստանում՝ <https://greenfinancearmenia.am/en/green-finance/green-finance-in-armenia/progress-updates/>.



Կանաչ տնտեսության, թվայնացման կամ ներառականության հետ կապված հարցերում, հատկապես, բայց ոչ միայն բարձրագույն կրթության ոլորտում, կա կարողությունների պակաս, ինչը պետք է զարգացնել⁹⁶:

Չետագոտության բացահայտումներին նվիրված այս գլխում ընդգծվում են Հայաստանի կրթության բնագավառի հրատապ մարտահրավերները, մասնավորապես՝ անհավասարությունների հաղթահարման, կառավարման բարելավման և ռեսուրսների համախմբման հարցերում: Ինչպես այժմ կբացատրվի նախնական առաջարկություններում, այս ոլորտներում առաջնահերթ միջամտությունների արդյունքում կարելի է ստեղծել ավելի ներառական, բարձրորակ կրթական համակարգ, որը կհամապատասխանի Հայաստանի զարգացման երկարաժամկետ նպատակներին և Կրթության մինչև 2030 թվականի զարգացման ծրագրին:

⁹⁶ Չարգացման գործընկերների խորհրդակցություն, մարտ 2024 թ., Erasmus+ ծրագրի ներկայացուցչական տեսակետ:

Առաջարկություններ

Ստորև ներկայացված առաջարկությունները հիմնված են Նախորդ գլխում ներկայացված վերլուծությունների վրա: Դրանք խմբավորվել են երեք հիմնական ոլորտների շուրջ, որոնք իրենց հերթին բացահայտում են տարբեր թեմատիկ ուղղություններ, որոնք համարվում են Նախատեսված կրթական բարեփոխումների հաջողության առանցքային գործոնները:

Դրանք մշակելիս հաշվի են առնվել նաև Հայաստանի կրթական համակարգի **հիմնական տրամախաչվող կարիքները**, քանի որ դրանք ի հայտ են եկել այս ախտորոշիչ գործընթացի ընթացքում, որոնք վերաբերում են **ներգրավվածության և համակարգման մակարդակի բարձրացմանը, տարբերակմանն ու ճկունությանը, ինչպես նաև քաղաքականության մոտեցման և փիլիսոփայության գործիքակազմին**: Սա ենթադրում է, օրինակ՝

- շահագրգիռ կողմերի ավելի լայն շրջանակի իրական ներգրավվածություն քաղաքականության ողջ շրջափուլի ընթացքում.
- գործառնական համակարգում ԿԳՄՍՆ-ի ներսում, այլ Նախարարությունների, կառույցների հետ և կենտրոնական ու ենթաազգային մակարդակների միջև.
- բարեփոխումների միջոցառումների սահմանման տարբերակում՝ ըստ թիրախային խմբի (օրինակ՝ երիտասարդ ուսուցիչներ vs ավագ սերնդի ուսուցիչներ ատեստավորման գործընթացում), համապատասխան մարզի (օրինակ՝ դրական խտրականության անհրաժեշտություն սահմանամերձ կամ հեռավոր մարզերում).
- ճկունություն, որը թույլ կտա իրավիճակի շտկմանն ուղղված ժամանակավոր միջոցներ ձեռնարկել այն ժամանակ, երբ չեն պահպանվում կանոններին, նորմերին և չափորոշիչներին հետևելու պահանջները՝ պատշաճ հիմնավորման առկայության դեպքում.
- գործիքակազմի ապահովում՝ հաշվետվության և հաշվետվողականության մեխանիզմների ու շրջանակների, համակարգման ուղիների, պլանավորման հուսալի մեթոդների և գործիքների կիրառմանը պաշտոնականություն հաղորդելու շնորհիվ, և այլն:

Սա պետք է մեծապես բարելավի կրթական համակարգի հարմարվողականությունը և դիմակայունությունը՝ միաժամանակ ապահովելով քաղաքականության բարեփոխումների հետևանքների և ազդեցության խիստ մոնիթորինգ:

Ոլորտ 1. Բարեփոխումների կառավարման բարելավում (և դրա հաջողության հնարավորությունների մեծացում)

1.1 Ստեղծել համակարգման ֆորմալ կառուցակարգեր բոլոր մակարդակներում՝ բարեփոխումների իրականացումը բարելավելու և արդյունքներն առավելագույնի հասցնելու համար

- Կրթության մինչև 2030 թվականի զարգացման ծրագրում և դրա գործողությունների ծրագրում ավելացնել կառավարման մասին գլուխ՝ ոլորտի կառավարումը պարզեցնելու նպատակով:
- Կարգավորել ԿԳՄՍՆ և ֆինանսների նախարարության միջև հարաբերությունները՝ քաղաքականության և ֆինանսավորման միջև ավելի ամուր կապ ապահովելու նպատակով:
- Ամրապնդել ԿԳՄՍՆ-ի, ԱՍՀՆ-ի, Առողջապահության նախարարության, Ոստիկանության և ՏԿԵՆ-ի միջև համագործակցության կանոնակարգերն ու մեթոդները, ինչպես նաև ենթակառուցվածքները՝ հատկապես կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված երեխաների գործերի կառավարման համար:
- Ստեղծել շրջանակներ ԿԳՄՍՆ և կրթության մարզային վարչությունների միջև աշխատանքների կանոնավոր համակարգման համար:

1.2 Ապահովել թափանցիկ, հաշվետու և մասնակցային կառավարման կառուցակարգեր՝ բարեփոխումների արդիականությունը, մոնիթորինգը և ընդունումը բարելավելու նպատակով

- Կատարելագործել գործողությունների ծրագիրը՝ դարձնելով իրական, գործառնական ճանապարհային քարտեզ կամ վահանակ (կամ կապել իրական, գործառնական ճանապարհային քարտեզի կամ վահանակի հետ)՝ առաջընթացի արդյունավետ մոնիթորինգի նպատակով:
- Ստեղծել հաշվետվության արդյունավետ գործիքներ, որոնք պետք է լրացվեն բարեփոխումն իրականացնող պետական հաստատությունների կողմից:
- Սահմանել շրջանակ, գործիքներ և խորհրդակցական կառուցակարգեր՝ փորձնական միջամտություններից պարբերաբար քաղած դասերի վերլուծության և տեղերում գործընկերներից (ներառյալ ուսուցիչներից և դպրոցների տնօրեններից՝ անանուն արձագանքի հնարավորություն ընձեռելով) հետադարձ կապի ապահովման համար, և դրանց համախմբումն ու օգտագործումը վստահել որևէ կազմակերպության (ռազմավարական պլանավորման վարչությանը):
- Կրթական համակարգի հիմնական շահագրգիռ կողմերի ներկայացուցիչների հետ կազմակերպել քաղաքականության երկխոսության ներկայիս մեխանիզմների մասին



բաց քննարկում և հավաքել երկկողմ հաղորդակցության ուղիների, հաճախականության և ցանկալի բովանդակության բարելավմանն ուղղված առաջարկություններ.

- Երկարաձգել օրենքով պահանջվող հանրային առցանց խորհրդակցությունների ժամկետները՝ օգտակար ներդրումների համար բավարար ժամանակ ապահովելու համար, ինչպես նաև տեղեկություններ տրամադրել հավաքված արձագանքների և հնարավոր է՝ ձեռնարկված շտկողական միջոցառումների մասին:

1.3 Կազմակերպել ամենամյա համատեղ ոլորտային գնահատումներ՝ բարեփոխումներն ուղղորդելու և շտկողական միջոցառումները տվյալներով համալրելու համար

- Ծանոթանալ միջազգային առաջադեմ փորձին և ներդնել հուսալի մեթոդաբանություն՝ արդյունավետ, ապացույցների վրա հիմնված ոլորտային համատեղ գնահատումների համար:
- Տարեկան առնվազն մեկ անգամ կազմակերպել մեկշաբաթյա ոլորտային համատեղ գնահատում՝ համախմբելով բոլոր մակարդակների շահագրգիռ կողմերին, քաղաքացիական հասարակությանը և զարգացման գործընկերներին, և համատեղելով տեխնիկական և քաղաքական թեմաներով քննարկումները:



Ոլորտ 2. Կրթության ոլորտին հատկացված ռեսուրսների արդյունավետության բարձրացում

2.1 Պետական բյուջեի միջոցների օգտագործման օպտիմալացում

- Վերլուծել բյուջեի թերծախսման ու տարեկան վերանայումների պատճառները և ստացված արդյունքները ներառել համապատասխան հաշվետվություններում:
- Կատարելագործել Ռազմավարական պլանավորման և մոնիթորինգի վարչության, Ֆինանսաբյուջետային վարչության, ինչպես նաև ԿԳՄՍՆ ոլորտային վարչությունների միջև ֆորմալ համագործակցության շրջանակը՝ կրթական ռազմավարության համակարգված պլանավորում ու ֆինանսավորում ապահովելու համար:
- Վերանայել և հնարավորինս պարզեցնել (առանց վտանգելու թափանցիկությունը) ուսումնական հաստատությունների կողմից կատարվող գնումների ընթացակարգերը:
- Ապահովել բյուջետային տող/միջոցներ, որպեսզի Ռազմավարական պլանավորման և մոնիթորինգի վարչությունը կարողանա կատարել իր գործառույթները:
- Ապահովել ֆինանսավորման համապատասխան մակարդակ՝ բարեփոխումների նոր միջոցառումների շրջանակում լավ կազմակերպված փորձնական ծրագրերի իրականացման և դրանց պատշաճ գնահատման համար՝ քաղաքականության հետ կապված անորոշությունը կամ հակասությունը նվազեցնելու և երկարաժամկետ հեռանկարում դրանց կայունությունը ապահովելու համար՝ ծրագրերի արդյունավետ ընդլայնման նպատակով:
- Բարձրացնել ազգային, մարզային, համայնքային և դպրոցական մակարդակներում համապատասխան շահագրգիռ կողմերի կարողությունները՝ ԿԿՏՀ-ն որպես բյուջեի կազմման և ֆինանսական հաշվետվությունների հիմնական հիմք օգտագործելու համար:
- Անհրաժեշտության դեպքում թարմացնել ԿԿՏՀ դաշտերը՝ ֆինանսական տեղեկատվությունը տեղերից հավաքելու և կենտրոնական մակարդակում համախմբելու համար:

2.2 Ֆինանսավորման աղբյուրների բազմազանեցում

- **Դպրոցներ.** խուսանավելու իրավական հնարավորությունները ստուգելուց և եկամուտների ստեղծմանն ուղղված միջոցառումների մասին միջազգային առաջադեմ փորձի մասին տեղեկություններ հավաքելուց հետո գովազդային արշավների միջոցով խրախուսել ինչպես մասնագիտական, այնպես էլ հանրակրթական դպրոցներին մշակել նման միջոցառումներ, կամ անհրաժեշտության դեպքում վերանայել օրենսդրությունը՝ դրանք թույլատրելու համար:

- **Սփյուռք.** Կրթության մինչև 2030 թվականի զարգացման ծրագրի շրջանակում սփյուռքի նկատմամբ ռազմավարական մոտեցմանն ավելացնել նոր բաժին՝ ռեսուրսների համախմբման տեսանկյունից. ուսումնասիրել և քննարկել սփյուռքի ներդրումը խթանելու հնարավորությունը (և սովորել սփյուռքի կրթական ֆոնդերից օգտվելու այլոց փորձից՝ որպես սփյուռքի միջոցները կրթական համակարգ ուղղելու հնարավոր երկարաժամկետ նպատակ):
- **Մասնավոր հատված.** վերանայել և հարմարեցնել կարգավորող շրջանակը և խթանման սխեմաները՝ մասնավոր հատվածի առավել ակտիվ ներգրավվածությունը խթանելու համար, հատկապես մասնագիտական կրթության հաստատություններում, այդ թվում՝ պետական-մասնավոր գործընկերության մոդելների միջոցով:
- **Նախադպրոցական հաստատություններ.** նախադպրոցական կրթության ոլորտի կառավարման տարբեր մոդելների ուսումնասիրության և դրանց հետ ծանոթանալու հիման վրա առաջարկել այլընտրանքային մոդելներ (ներառյալ դրանց ֆինանսավորման սխեմաները), որոնք հնարավորություն կտան մեծացնել նախադպրոցական կրթության առաջարկը՝ հատկապես գյուղական վայրերում:

2.3 Ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացում

- **Ապահովել շրջանակը.** թվարկել, թարմացնել և տարածել ռեսուրսների օպտիմալ օգտագործման ընդհանուր սկզբունքները (օրինակ՝ շրջաբերականի միջոցով), ինչպիսիք են՝ ռեսուրսների օգտագործումը, տարածքների բազմակի օգտագործումը տարբեր տեսակի կրթական ծառայությունների մատուցման համար (օրինակ՝ հանրակրթություն, ոչ ֆորմալ կրթություն, մեծահասակների շարունակական ուսուցում և այլն):
- **Պատվիրակել պատասխանատվությունը** և խրախուսել ակտիվների կառավարման ստեղծարար սխեմաների կիրառումը. դպրոցների տնօրեններին հանձնարարել ներկայացնել արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկ՝ հիմնվելով վերոնշյալ շրջանակի և ԿԳՄՍՆ-ի կողմից պատրաստվելիք ուղեցույցների վրա:
- **Ապահովել հաշվետվողականություն.** քարտեզագրել պետական բյուջեի օգտագործման մեջ ներգրավված շահագրգիռ կողմերին և գնահատել ազգային ու ենթաազգային մակարդակներում նրանց հաշվետվողականությունն ապահովելու համար ներկայումս օգտագործվող ուղիները, ստեղծել հաշվետվողականության գործիքներ, որոնց միջոցով պետական միջոցներ ստացող և դրանք կառավարող դերակատարները պարբերաբար հաշվետվություն կներկայացնեն ռեսուրսների բաշխման մասին իրենց որոշումների հիմքում ընկած չափանիշների և գործելակերպերի մասին՝ դրամական հաշիվների մասին տեղեկությունների ներկայացման հետ մեկտեղ:

- **Կատարել ծառայությունների մատուցման արտապատվիրակման տարբերակների՝** ներառյալ արտապատվիրակման ընդհանուր ռազմավարության, շահառուների, աշխատանքի ծավալի և մրցույթի կանոնների **ծախս-օգուտի վերլուծություն** (օրինակ՝ մասնավոր ընկերություններ, ՀԿ-ներ, ուսուցիչների վերապատրաստման ծառայություն մատուցողներ):

2.4 Հավասարության ապահովում

- **Քարտեզագրել բոլոր ներկա կամ վերջերս ձեռնարկված ֆինանսական միջոցները և գնահատել դրանց արդյունավետությունը, մասնավորապես՝ անհավասարությունների հարթեցման առումով** (օրինակ՝ պարզևավճարներ և ֆինանսական խթաններ ուսուցիչների և այլ աշխատակիցների համար, կրթաթոշակային ծրագրեր ուսանողների համար, սուբսիդիաներ և այլն):
- **Սահմանել թափանցիկ սկզբունքներ, որոնք թույլ կտան տարբերակված մոտեցում ցուցաբերել մարզերին տրամադրվող ֆինանսական աջակցության նկատմամբ և միջոցներ ձեռնարկել դրական խտրականության միջոցառումների ուղղությամբ՝** կախված նրանց համապատասխան կարիքներից, սեփական ռեսուրսներից, կարողություններից և ներուժից (առաջնահերթություն տալով հեռավոր մարզերին):
- **Ստեղծել հավասարության չափման գործիքներ՝** հենվելով միջազգային առաջադեմ փորձի վրա, և համապատասխան ոլորտային վարչություններին հանձնարարել դրանց կանոնավոր օգտագործում:


Ոլորտ 3. ԿԳՄՍՆ ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդում՝ իր առանցքային գործառույթները կատարելու համար

3.1 Կրթության ոլորտի տեսլականի ձևավորում

- Վերանայել և ամրապնդել **տարբեր ենթաօլորտային ռազմավարությունների միջև կապը**՝ ուղիները, համակարգումը կամ փոխազդեցությունը, ինչպես ձևակերպված է Կրթության մինչև 2030 թվականի զարգացման ծրագրի տարբեր գլուխներում (կամ դրա գործողությունների ծրագրում):
- Մշակել, հստակեցնել և/կամ ավելի կոնկրետացնել աշխատաշուկայի համար **մասնագիտական կրթությունն ու ուսուցումը և բարձրագույն կրթությունն ավելի համապատասխան** դարձնելու համար նախատեսված ռազմավարական քայլերն ու գործողությունները:
- Ավելի հստակ տարբերակել **նախադպրոցական կրթության ծառայությունների տեսլական(ներ)ը**՝ գրոյից մինչև երկու տարեկան երեխաների *վաղ մանկական զարգացումն ու ինամբը* տարբերակելով երեքից մինչև հինգ տարեկան երեխաների նախադպրոցական *կրթությունից*:

3.2 Պլանավորում, մոնիթորինգ և գնահատում

- Պլանավորման, մոնիթորինգի և գնահատման համար **պատասխանատու** մարմինը տեղափոխել աստիճանակարգային ավելի բարձր մակարդակ՝ **ղեկավար աստիճանն օրինականացնելու** համար (միգուցե Ռազմավարական պլանավորման վարչություն կամ նախարարի կաբինետին կից համարժեք մարմին):
- Վիզուալացնել, վերանայել և հստակեցնել **տվյալների հետ կապված շրջափուլի կառավարումը**՝ արտադրությունից մինչև որակի ստուգում, վերլուծություն և օգտագործում, ներառյալ յուրաքանչյուր քայլի համար պատասխանատու տարբեր դերակատարները, ժամանակացույցը, ուղեցույցները, որոնց պետք է հետևել, կարողությունների զարգացման հատուկ կարիքները:
- Բարեփոխումների միջոցառումների նախագծման նկատմամբ կիրառել **տարբերակված մոտեցում՝ ըստ թիրախային լսարանի** (օրինակ՝ նոր, երիտասարդ և ավագ սերնդի ուսուցիչներ և հավաստագրման գործընթաց):
- **Ուսումնական հաստատությունների առաջարկի պլանավորում**. ՄԿՈՒ ոլորտում ըստ մասնագիտությունների տեղերի բաշխման նկատմամբ կիրառվող նորմերը համապատասխանեցնել ԱՄՅՆ-ի կողմից հավաքված տվյալներին և դիտարկել դրանց չհետևելու դեպքում պատժամիջոցներ կիրառելու հնարավորությունը՝ որակի ապահովման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Կատարել



Նախադպրոցական հաստատությունների սպասման ցուցակների վերլուծություն և վերանայել առաջնահերթ մուտքի չափանիշները՝ անհավասարությունների հարթեցման նկատառումով:

3.3 Կրթական քաղաքականության իրականացումը ազգային և ենթաազգային մակարդակներում

- Առաջարկել **ինքնագնահատման գործիք բոլոր գործադիր մարմինների և վարչությունների համար**, որը թույլ կտա գնահատել իրենց լիազորությունների շրջանակը՝ մարդկային ռեսուրսներ համեմատությամբ:
- Կատարել կրթության **մարզային վարչությունների ֆունկցիոնալ գնահատում և իրատեսորեն վերասահմանել** նրանց դերերը՝ հաշվի առնելով նրանց պաշտոնները՝ ընտրված մարմինների և իրենց ռեսուրսների շրջանակում:
- Նպաստել շահագրգիռ կողմերի և շահառուների՝ կրթական համակարգի գործառնական կանոնների մասին **«իրավական գրագիտությանը»** ԿԳՄՍՆ կայքում մշակելով և թարմացնելով իրավական փաստաթղթերի՝ օգտագործողին հարմար պահեստարան՝ ներառելով բանալի բառերով որոնման համակարգ:
- Ուսումնասիրել և քննարկել **ուսուցիչների համալրման գործընթացների մակարդակը** վերանայելու կամ **ուսուցիչների շարժունակության սխեմաներ** ներդնելու հարցում մանևրելու հնարավորությունները՝ նաև աշխարհագրական ավելի մեծ ճկունության հաշվին ուսուցիչների պակասի խնդիրները լուծելու նպատակով:


3.4 Տվյալների հավաքում և վերլուծություն

- Լրացնել այս գեկույցում նշված **տվյալներում առկա բացերի ցանկը**՝ տվյալների հիմնական օգտագործողների հետ համակարգված խորհրդակցությունների միջոցով, այդ բացակայող տվյալները կապելով դրանց ենթադրյալ օգտագործման հետ, և անհրաժեշտության դեպքում համապատասխան փոփոխություններ կատարել ԿԿՏՅ դաշտերում ներառյալ ֆինանսական հոսքերը, դպրոցների, ուսուցիչների և երեխաների վերաբերյալ հատուկ տվյալները (առաջարկությունները ներկայացված են գեկույցի հիմնական մասում):
- **Ուսումնասիրել կրթության ոլորտում տվյալների մշակման հետ կապված ամբողջ շրջափուլը**՝ հավաքումից մինչև օգտագործում՝ թույլ կողմերը բացահայտելու համար՝ ներառյալ դերակատարներին ուղղվող ավելորդ հարցումները, անարդյունավետությունը, տվյալների մուտքագրման և վերլուծության կարողությունների զարգացման հետ կապված կարիքները, գործընթացներն օպտիմալացնելու և դրանց օգտագործումը քաղաքականության ողջ շրջափուլի ընթացքում հեշտացնելու պահանջները, ինչպես



Նաև այլ կարևոր ազգային տվյալների շտեմարանների հետ փոխգործունակության նախապայմանները (տե՛ս նաև «Կառավարում» բաժինը):

- Մշակել և ապահովել ռեսուրսներ **կարողությունների զարգացման ծրագրի** համար՝ հիմնված օգտագործողի համար հարմար ուղեցույցների վրա, որոնք ուղղված են տվյալների տարբեր արտադրողներին՝ տվյալների մուտքագրման դրակն ապահովելու նպատակով:
- Մշակել **որակական տվյալների** արտադրության և օգտագործման շրջանակ ու մեթոդաբանություն՝ նոր միջոցառումների կամ ծրագրերի ազդեցությունը գրեթե իրական ժամանակում գնահատելու համար, այսինքն՝ նախքան ազդեցությունը տեսանելի կլինի ԿԿՏՅ քանակական տվյալների միջոցով:
- **Պարտավորեցնել ԿՏԱԿ-ին և ՀՀՎԿ-ին** համագործակցել և՛
 - համակարգված կերպով հաշվարկել և ներկայացնել առանցքային ցուցանիշներն ըստ կրթության մակարդակի (ISCED 1, 2, 3), որոնք համադրելի են միջազգային համեմատական հենանիշների հետ.
 - բարելավել ԿԿՏՅ և ՀՀՎԿ առցանց հարթակների հասանելիությունը՝ տրամադրելով սպառիչ ծանոթագրություններ և մետատվյալներ.
 - վիճակագրական հաշվետվությունները միայն PDF ձևաչափի փոխարեն հասանելի դարձնել աղյուսակային ձևաչափերով (օրինակ՝ xlsx կամ csv)՝ տվյալների վերլուծությունը հեշտացնելու համար:
- Հետևել դպրոցի տնօրենի պաշտոնի համար դիմումների վերաբերյալ տվյալներին. թվայնացնել հավակնորդի՝ դպրոցի զարգացման ծրագրի ներկայացման և գնահատման գործընթացները՝ գործընթացի հետևողականությունն ու թափանցիկությունն ապահովելու նպատակով:
- Ընտրել **աշխատանքի տեղավորվելու կարողության չափման գործիքների** օգտագործման համար համապատասխան մեթոդաբանություն, այնուհետև համակարգել աշխատանքը ԱՍՀՆ-ի հետ՝ հմտությունների կարիքների մասին պահանջը գործատուների հարցումներում ներառելու համար, և ՄԿՈԲ քոլեջների հետ՝ թեկնածուների հետագծի ուսումնասիրություններ իրականացնելու համար:
- Գնահատել ոլորտային հանձնաժողովների աշխատանքի ընթացիկ արդյունավետությունը և, ԱՍՀՆ-ի հետ համակարգելով, ուսումնասիրել դրանք հմտությունների մասով ավելի ակտիվ ոլորտային խորհուրդների վերածելու հնարավորությունը, որոնք պատասխանատու կլինեն **աշխատաշուկայում պահանջվող հմտությունների կարիքների մասին կանոնավոր**



ստեղծելությունների տիրապետման համար և կկարողանան ուղղորդել ՄԿՌԲ և բարձրագույն կրթության ոլորտի կողմից ներկայացվող առաջարկը:

3.5 Հետազոտություն և նորարարություն

- Պաշտոնապես նշանակել **հետազոտությունների և նորարարության գործառնություն** օժտված մարմին և հստակեցնել դրա լիազորությունների շրջանակը (օրինակ՝ հատուկ (ad hoc) ուսումնասիրություններ, միջազգային առաջադեմ փորձի համեմատական վերլուծություն, փորձնական նախաձեռնությունների գնահատումներ և այլն):
- Անցկացնել հայաստանյան համակարգի կոնկրետ կողմերի մասին մի շարք **հատուկ (ad hoc) ուսումնասիրություններ**:
- Սահմանել և կիրառել **ուղեցույցներ փորձնական ծրագրերի համար**՝ ներառյալ քաղած դասերի վերլուծության փուլը:
- Չարգացնել ԿՏԱԿ-ի **վերլուծական կարողությունները** (անձնակազմի վերապատրաստման ծրագիր):
- Հավաքել Հայաստանում ռազմավարական քննարկման փուլում գտնվող թեմաների մասին **միջազգային առաջադեմ փորձը** և կատարել վերլուծություն հայկական համատեքստում կիրառելիության տարրերի, ներառյալ, օրինակ, նախադպրոցական կրթության ոլորտի կառավարման, դպրոցներում եկամուտների ստեղծմանն ուղղված գործունեության մասին, և այլն:

3.6 Որակի ապահովում և մանկավարժական նորմեր

- Սահմանել որակի ապահովման հետ կապված առանցքային պարտականությունները և բաշխել գործող հիմնական մարմինների միջև (կամ միգուցե ստեղծել նորը)՝ ըստ անհրաժեշտության վերանայելով նրանց լիազորությունների շրջանակը. ԿՏՄ, ԿՁՆԱԿ, մարզային վարչություններ, ՈԱԱԿ, և այլն:
- Ամենայն մանրամասնությամբ վերանայել հաշվետվության և հաշվետվողականության շրջանակները, այդ թվում՝ ԿԳՄՄՆ-ից ստացված միջոցների առնչությամբ:
- Ներդնել մանկավարժական անձնակազմի հավաքագրման գործընթացների գնահատման մեթոդներ:
- Մանկավարժական ուղղորդում. ԿԳՄՄՆ-ի ակնկալվող դերը համապատասխան մանկավարժական շրջանակի (ուսումնական ծրագրերի մշակում, ուսուցիչների վերապատրաստում և այլն) ապահովման գործում էական նշանակություն ունի: Սակայն դա RED-ի ուշադրության առանցքը չէր, հետևաբար, այս մասով առաջարկություններ չեն մշակվել:



Եզրակացություն

Թեև այս արագ կրթական ախտորոշումը (RED) կարող է ամբողջովին նոր պատկերացում չտալ Հայաստանի կրթական համակարգի առջև ծառայած մարտահրավերների մասին՝ մարտահրավերներ, որոնց մասնագետները, հավանաբար, արդեն ծանոթ են սեփական փորձով կամ բնագոյաբար, այն ապահովում է այս տեղեկատվության համապարփակ, համակարգված, տվյալների վրա հիմնված և, հուսանք, օգտագործողին հարմար պարզաբանում: Այս բացահայտումների լայն տարածումը կարող է օգնել ամենահրատապ խնդիրների և առաջնահերթությունների շուրջ համաձայնության ձևավորմանը: Այնուամենայնիվ, այս ախտորոշման իրական արժեքը քաղաքականության մշակողների ձեռքում է, որոնք իրենց նախընտրած խորհրդատվական և պլանավորման գործընթացների միջոցով կորոշեն, թե ինչպես ներգրավվել RED առաջարկությունների կատարման գործում, հենվել դրանց վրա, կատարելագործել դրանք կամ պլանավորել դրանց հետագա ընթացքը:



Օգտագործված գրականության ցանկ

ARMSTAT. (2022). *Integrated Living Conditions Survey 2022*. Yerevan: ARMSTAT.

ARMSTAT. (2023). *Armenia - Poverty Snapshot over 2019-2022*. Retrieved from ARMSTAT:
https://armstat.am/file/article/poverty_2023_en_2.pdf

ARMSTAT. (2024). *ArmStatBank: Education*. Retrieved from ARMSTAT:
<https://statbank.armstat.am/pxweb/en/ArmStatBank/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb>

del Boca, D., Monfardini, C., & See, S. G. (2023). Early Childhood Education Attendance and Students' Later Outcomes in Europe. *B E Journal of Economic Analysis & Policy*, 23(4), 1081-1136. doi:<https://doi.org/10.1515/bejeap-2022-0260>

Dietrichson, J., Kristiansen, I., & Viinholt, B. (2020). Universal Preschool Programs and Long-term Child Outcomes: A Systemic Review. *Journal of Economic Surveys*, 34(5), 1007-1043. doi: <https://doi.org/10.1111/joes.12382>

ETF. (2024, February 8). *SELFIE in Armenia*. Retrieved from ETF OpenSpace:
<https://openspace.etf.europa.eu/pages/selfie-armenia>

ETF. (2024). *Torino Process: Review for policies for lifelong learning in Armenia*.

ETF. (2024). *Torino Process: Review Of Policies For Lifelong Learning In Armenia*. Torino, Italy. Retrieved from <https://www.etf.europa.eu/sites/default/files/2024-05/Policies%20for%20lifelong%20learning%20-%20Armenia%20EN.pdf>

EU Delegation to Armenia. (2024, March). Meeting with EUD representative in charge of Public Finance Management (PFM) and Public Administration Reform (PAR) dossiers. (ETF, Interviewer)

Fessler, P., & Schneebaum, A. (2019). The educational and labor market returns to preschool attendance in Austria. *Appl. Econ.*, 51(32), 3531–3550. doi:
<https://doi.org/10.1080%2F00036846.2019.1584368>



Gevorkyan, A. V. (2023). *Enhancing Development through Diaspora Engagement in Armenia*. Retrieved from International Organization for Migration (IOM):

<https://www.iom.int/sites/g/files/tmzbdl486/files/documents/2023-10/enhancing-development-through-diaspora-engagement-in-armenia.pdf>

Government of the Republic of Armenia. (2002). *Law No. 337, 2002: Law on Local Self-Government*. Retrieved from Armenian Legal Information System:

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=188985>

Government of the Republic of Armenia. (2004). *Decree on Approval of the Assessment and Testing Center*. Retrieved from Armenian Legal Information System:

<https://www.arlis.am/documentView.aspx?docid=135629>

Government of the Republic of Armenia. (2010, July 25). *About changes in the N 1392-N decision of the RA Government on July 25, 2010*. Retrieved from Armenian Legal Information System: <https://www.arlis.am/documentview.aspx?docid=59769>


Government of the Republic of Armenia. (2019). *Law on Amendments and Additions to the Law on the Structure and Operation of the Government*. Retrieved from Armenian Legal Information System: <https://www.arlis.am/documentview.as%02px?docid=130615>

IOM. (2023). *Response review - Armenia refugee response plan October 2023 - March 2024*. Yerevan: IOM.

Mkrtchyan, G. (2023, September 12). *Assessing Quality or Posing Challenges for Educators?*

Retrieved from EVN Report: <https://evnreport.com/law-society/assessing-quality-or-posing-challenges-for-educators/#:~:text=In%202021%2C%20a%20pilot%20voluntary,raise%20based%20on%20their%20results.>

Mnatsakanyan, A., Felder, F., & Keil, S. (2023). *Decentralization in Armenia: Local Governance Reform and the Need for Functional Decentralization*. Retrieved from 50 Shades of Federalism: <https://50shadesoffederalism.com/case-studies/decentralization-in-armenia-local-governance-reform-and-the-need-for-functional-decentralization/>



MoESCS. (2021, August 24). *18 մենթոր դպրոցները, որոնք սեպտեմբերից կիրականացնեն էլեկտրոնային դասեր*. Retrieved from Ministry of Education, Science, Culture and Sports of the Republic of Armenia: <https://escs.am/am/news/9542>

MoESCS. (2024, May 7). Interview with the Minister, Head of Strategic Planning and Monitoring, and Head of General Education Department of MoESCS. (PPMI, Interviewer)

National Center for Education Development and Innovation. (2022). *Statute of the National Center for Education Development and Innovation*. Yerevan.

OECD. (2017). *OECD Development Pathways: Interrelations between Public Policies, Migration and Development in Armenia*. Paris: OECD Publishing.
doi:<https://doi.org/10.1787/9789264273603-en>

OECD. (2024). *Education GPS - Digital divide*. Retrieved from OECD :
<https://gpseducation.oecd.org/IndicatorExplorer?plotter=h5&query=34>

Teachers' targeted collective consultation. (2024, May). Targeted collective consultation with English teachers from various marzes. (M. Martirosyan, Interviewer)

Transparency International. (2024a). *Our work in Armenia*. Retrieved from Transparency International: <https://www.transparency.org/en/countries/armenia>

Transparency International. (2024b, January 30). *CPI 2023 for Eastern Europe & Central Asia: Autocracy & Weak Justice Systems Enabling Widespread Corruption*. Retrieved from Transparency International: <https://www.transparency.org/en/news/cpi-2023-eastern-europe-central-asia-autocracy-weak-justice-systems-widespread-enabling-corruption>

UNICEF & UNDP. (2024). *Households' Expenditure in Education*. Yerevan: UNICEF.

UNICEF. (2022a). *Education Sector Analysis for Armenia*. Yerevan: UNICEF Armenia. Retrieved from UNICEF Armenia.

UNICEF. (2022b). *Feasibility Analysis of the National School Management and Governance Approaches in Armenia*. Yerevan: UNICEF Armenia. Retrieved from UNICEF Armenia.



UNICEF. (2022c). *Analysis of School Teacher Management System in Armenia*. Retrieved from UNICEF Armenia:

<https://www.unicef.org/armenia/media/15136/file/Analysis%20of%20School%20Teacher%20Management%20System%20in%20Armenia.pdf>

Weidman, J. C., & DePietro-Jurand, R. (2011). *Equip2 State-of-the-Art Knowledge in Education: Decentralization*. Retrieved from USAID:

<https://www.epdc.org/sites/default/files/documents/EQUIP2%20SOAK%20-%20Decentralization.pdf>

World Bank. (2021, April). *Armenia Teacher Profile and Policies*. Retrieved from

futurearmenian.com: <https://futurearmenian.com/wp-content/uploads/2022/01/Armenian-Teacher-Profile-and-Policies.pdf>

World Bank. (2021). *GINI Coefficient*. Retrieved from World Population Review:

<https://worldpopulationreview.com/country-rankings/gini-coefficient-by-country>

World Bank. (2022). *Fact Sheet: An Adjustment to Global Poverty Lines*. Retrieved from World

Bank Group: <https://www.worldbank.org/en/news/factsheet/2022/05/02/fact-sheet-an-adjustment-to-global-poverty-lines>

World Bank. (2024). *World Development Indicators*. Retrieved from World Bank Databank:


<https://databank.worldbank.org/source/world-development-indicators>

World Bank. (2024c). *GDP per capita (current US\$) - Armenia*. Retrieved from World Bank Group


Data: <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD?locations=AM>

Վիճակագրական հավելվածներ

Գծապատկեր 24. Բնակչությունը՝ ըստ աշակերտների տարիքային խմբերի, 2011-2023 թթ.




Գծապատկեր 25. Դպրոցահասակ բնակչության թվի կանխատեսումները՝ ըստ տարիքային խմբերի, 2024-2050 թթ.






Գծապատկեր 26. Դպրոցների կուտակային բաշխումն ըստ չափի, քաղաքային և գյուղական, 2023-2024 թթ.



Աղբյուրը՝ ԿԿՏՀ


Գծապատկեր 27. Բնակչության թվի գնահատումները՝ ըստ առանձին տարիքների, 2024 թ.



Աղբյուրը՝ ՀՀԿԿ



Գծապատկեր 28. Պետական և մասնավոր ՄԿՈՒ հաստատություններ ընդունվողների թիվը ըստ տարիների, մարզերում և Երևանում



Աղբյուրը՝ ՀՀԿԿ


Գծապատկեր 29. Հանրակրթական դպրոցների տոկոսը՝ ըստ ենթակառուցվածքների վիճակի և առկայության, ըստ մարզերի, 2023-2024 թթ.

	Ընդհանուր լավ վիճակ	Ջրամատակարարում	Կոյուղի	Գազամատակարարում	Զեռուցում	Տաք ջուր
Երևան	51%	100%	100%	95%	100%	22%
Արագածոտն	35%	93%	88%	49%	55%	18%
Արարատ	32%	98%	92%	79%	81%	29%
Արմավիր	48%	100%	94%	91%	93%	34%
Գեղարքունիք	31%	91%	86%	72%	64%	25%
Լոռի	39%	97%	93%	80%	64%	20%
Կոտայք	38%	100%	98%	91%	91%	24%
Շիրակ	40%	96%	93%	59%	68%	40%
Սյունիկ	38%	93%	88%	38%	42%	9%
Վայոց Ձոր	35%	96%	90%	42%	42%	6%
Տավուշ	45%	98%	83%	72%	71%	27%

Աղբյուրը՝ ԿԿՏԳ




Գծապատկեր 30. ա. և բ. Գերազանց առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների տոկոսը ըստ սեռի և GPA-ի, 9-րդ և 12-րդ դասարաններ, ըստ մարզերի, 2023-2024 թթ.



Աղբյուրը՝ ԿԿՏԿ և ԵԿԿ հաշվարկներ

Գծապատկեր 31. Բյուջեի տարեկան վերանայումները և բյուջեի կատարումը՝ ըստ ծրագրերի, ՖՏ2023



Աղբյուրը՝ Ֆինանսների նախարարություն



Գծապատկեր 32. Կրթական ծրագրերի բյուջեների բաշխումը ըստ տնտեսական դասակարգման, ՖՏ2023

	Ընթացիկ ծախսեր				Կապիտալ ծախսեր
	Սուբսիդիաներ	Դրամաշնորհներ	Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	
ՄԿՈՒ	0%	0%	77%	0%	22%
Բարձրագույն և հետբուհական կրթություն	0%	2%	92%	1%	6%
Հանրակրթություն	83%	4%	4%	1%	8%
Արտադպրոցական կրթություն	45%	53%	0%	0%	2%
Ապահով դպրոցներ	0%	0%	0%	0%	100%
Կրթության որակի ապահովում	0%	8%	51%	10%	31%
Համընդհանուր ներառական կրթություն	0%	100%	0%	0%	0%
ՏՀՏ-ներ	0%	100%	0%	0%	0%
Համագործակցություն և Սփյուռք	0%	80%	0%	20%	0%

Աղբյուրը՝ Ֆինանսների նախարարություն